



Հայկական գիտահետազոտական հանգույց Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

This work is licensed under a Creative Commons Attribution-NonComercial
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

7099
7100

281
- 21

333.5 (ԳԴ. 925)

Ե - 21

ՅԱ ԱԼ 611

Թիեզի Սիմեոն Շահ-Նաջուրեանց

1905 Թիի Օգոստոսի 1-ի

ՈՒԿԱԶԸ


ԵԿ

ԺԱՄԱՆԱԿԱԽՈՐ ԿԱՆՈՆՆԵՐԸ

Վայել / 2671-41
Եկազ - Եկազ

«Ողջո՞յն Քեզ, Եկեղեցի Հայոց, նորոցեալ և զարդարեալ, քանզի ի Քեզ ծագեաց վերստին շողն աստուածային և վերացաւ ի Քէն քողն սկոյն: Ողջո՞յն Քեզ, տառապեալ ժողովուրդ Հայոց, որ տօնես զոօն նաւակատեաց և ցնծութեան Մօրն Քո Եկեղեցւոյ...»

Ամենայն Հայոց Վեհափառ Կամողիկոսի 1905 Թւի Օգոստոսի 7-ի «Հնորհաւորական կոնդակ»-ից:



Ելեբտրաշարժ տպարան Ե. Աւետիքեանի, Մուսւա.
1907.

ՅԱՌԱՋԱԲԱՆԻ ՓՈԽԱՐԵՆ

۲

ԲԱՐՁՐԱԳՈՅՆ ՈՒԿՈՋ ԿԱՌԱՋ ՍԵՆԱՑԻ

Վերականգնելով Մեր փոխարքայութիւնը կովկասում, Մենք կովկասը հառավարելու համար Մեր վստահութեամբ բնարուած անձի վրայ զրեցինք ազդբարերեր երկրում հասարակական կեանքի խանգարուած ընթացքը վերականգնելու հոգացողութիւնները: Ներկայում փոխարքան, իրեն յանձնուած երկրի պայմաններին ծանօթանալուց յետոց, ներկայացրել է Մեղիւր ենթագրութիւնները փոփոխելու համար մի քանի որոշումներ, որոնք վերաբերում են բնակչութեան հայկական մասին և դժուարացնում են նրա զարգացման կամոնաւոր ու հանգիստ ընթացքը: Բարւօք համարելով հաստատել Մեր փոխարքայի առաջադրութիւնը, Մենք ընդարձակ կրթական միջոցներ ենք շնորհում հայագաւառն հոգեսորականութեանը ժողովրդի օգտին գործելու համար: Հրամայելով, ընդ սմին, ներքեւ լիշուած հիմունքներով վերաբարձնել հայ եկեղեցական հաստատութիւններից առնուած զոքերը, Մենք թոյլ ենք տալիս Մեր փոխարքային իւր իրաւասութեան տանի զանուած երկրի սահմաններում

***)** Արտատպում է «Նոր-Դարս-ի 1905 թվ. № 2-ից:—Այս և յնտագլ բոլոր արտատպումներում պահած է բնագրների ուղղագրումինը և ադին:



12621-58

այժմ իսկ գործազրել ժամանակաւորապէս, մինչև որ օրէնսդրական կարգով ըննուեն, կազմուած այն կանոնները, որոնք պէտք է ապահովեն ծխականների մասնակցութիւնը եկեղեցական գործերը կառավարելու գործում։ Իսկ որպէս զի ապագայում այլ ևս աեղի չունենան այն թիւրիմացութիւնները, որ ճարդում էին գոյութիւն ունեցող օրէնսդրութեան թերութիւնից, փոխարքան պէտք է դիտողութեան առնե կառավարչական իշխանութեան գէպի հայոց եկեղեցական հաստատութիւններն ունենալիք յարաբերութիւնները հշտիւ որոշելու խնդիրը։ Համաձայն սրան, հրամանում էնք. 1) Ի վերացումն 1903 թուի յունիսի 12-ի Բարձրագոյն հրամանի, հայագաւառն եկեղեցու պատշաճաւոր հաստատութիւնների իրաւասութեանն ու կառավարութեանը յանձնել հայագաւառն եկեղեցիներին, վանքերին, հոգեոր հաստատութիւններին և հոգեոր գալրոցներին պատկանող բոլոր անշարժ կալուածներն ու դրամազլուխներն իրենց բոլոր եկամուտներով, որ սատցուել են արքունական կառավարութեան ժամանակ, բայցի գոյն կարւածները պահպանելու համար արուած ծախսերից, նմանապէս և այն գումարներից զատ, որ ճախսուել են այդ կարուածներն յարքունիս դրաւելու համար։ Եկեղեցական հաստատութիւններին կազմուածներն ու նրանց եկամուտները յանձնել կովկասի Մէր փոխարքայի, ներքին գործերի մինիստրի և հոգաշինութեան ու երկրագործութեան զիստոր կառավարիչի փոխարքայի համաձայնութեամբ. 2) այդպիսի կարւածների և զրանց եկամուտների յանձնման ժամանակ հայագաւառն հոգեորականութեան արած յայ-

տարարումների վերջնական լուծումը Կովկասեան երկրում յանձնել Կովկասի Մէր փոխարքային. 3) թողնել Մէր փոխարքային, մինչև որ նոր կանոնադրութիւն մշակուի հայոց եկեղեցական գալրոցների մասին, թող տաղ Կովկասեան փոխարքայութեան սահմաններում եկեղեցիներին և վանքերին կից բանալու եկեղեցական-ծխական գալրոցներ, 1874 թուի յուլիսի 19-ի Բարձրագոյնս հաստատուած կանոնների հիման վրա. 4) յանձնարարել փոխարքային՝ անյասաղ առաջադրութիւն անել, սահմանուած կարգով, առանց բարձր հաստատութիւնների հետ հաղորդակցութիւն ունենալու, հրատարակելու նոր կանոնադրութիւն հայոց եկեղեցական գալրոցների մասին, զրա հետ կապելով այն անշարժ կալուածների և զրամազլուխների հայագաւառն եկեղեցուն վերաբարձնելու խնդիրը, որոնք յանձնուած էին լուսաւորութեան մինիստրութեանը, համաձայն 1898 թուի մարտի 26-ի և 1903 թուի յուլիսի 12-ի մինիստրների կոմիտեաի Բարձրագոյնս հաստատուած որոշումների. 5) մշակել, արքունի գանձարանի աշակցութեամբ, կանոնադրութեան ծրագիր այն գիւղացիների համար, որոնք ապրում են հայագաւառն եկեղեցուն պատկանող կալուածներում, և ներկայացնել այդ ծրագիրը Մէր հաստատման, սահմանուած կարգով։ Այս մասին կտուավարիչ սենատը պէտք է պատշաճաւոր անօրինութիւնն անէ։

Իսկականի վրայ Նորին Մէծութեան Սեփհական ձեռքով ստորագրուած է

«ՆԻԿՈԼԱՅ»

Պետերոնդում, 1 օգոստոսի 1905 թուի:

Բ.

ՆՈՐԻՆ ՎԵՀԱՓՈՒՌՈՒԹԵԱՆ Ա.ՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՅ ԿԱԹՈՒ-
ՂԻԿՈՍԻ ՀԵՌԱԳԻՐԸ Ս. ԷՋՄԻԱԾՆԻ ՍԻՆՈԴԻՆ ՕԳՈՒ-
ՏՈՒՄ շաբաթի 2-ի 8 *).

Այսօր հրաժեշտի այցելութեան ժամանակ Նորին
Պայծառափայլութիւն Տէր Փոխարքան յայտնեց ինձ,
որ իւր գեկուցումը կալուածներ վերագրծնելու մա-
սին ԲԱՐՁՐԱԳՈՅՆ հաւանութիւն է դաել և հրա-
մանը ստորագրուել: Դրազոցները կը բացուին:

ՄԿՐՏԻՉ ԿԱԹՈՒՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՅ.

Գ.

1874 Թուի յուլիսի 19-ին Բարձրագոյն հաստատուած կա-
նոններ, որոնք նախապէս հաւանութիւն են գտել Մեծ Իշխան
Կովկասն Փոխարքալի կողմից **)

1) Համաձայն օրէնքների ժողովածուի XI հասորի,
I մասի, 975-դ յօդուածի, հայլուսաւորչական հո-
գեորականութեան պարտաւորութիւնն է մնում հիմ-
նել և կառավարել եկեղեցական դպրոցներ, նոյնպէս

*) Արտատպում է «Արարատ»-ի 1905 թի Սեպտեմբեր
ամսի տետրից:

**) Արտատպում է «Արարատ»-ի 1905 թի Սեպտեմբեր
ամսի տետրից:

և հոգալ մայնելու դասատութեան կանոնաւոր և
յարմար եղանակ և պահպանել բարի վարք ուսուցա-
նողների և աշակերտաների մէջ:

2) Ժողովրդական դպրոցների ահսուչների (Ա-
սպեկտօրն) վրայ, հայ հոգեորականութեան հիմնելիք և
վարելիք ընդհանուր կրթական եկեղեցական-ծխական
դպրոցների վերաբերմամբ, պարտաւորութիւն է դր-
ւում, համաձայն 1873 թուի նոյեմբերի 22-ին Բարձ-
րագոյն հաստատուած Պետական Խորհրդի կարծի-
քին՝ հսկողութիւն ունենալ, 1) որ բոլոր դպրոցնե-
րում աւանդուի ուսուց լեզուն, խակ այն դպրոցնե-
րում, որտեղ աւանդում են ընդհանուր պատմու-
թիւն և աշխարհագրութիւն, աւանդուեն նաև ուս-
ուց աշխարհագրութիւն ուսուերէն լեզուով. 2) Որ
այս դպրոցներում ուսուցանողները լինեն ուսուահպա-
տակներ և ունենան պարտ ու պատշաճ բարոյական
յատկութիւններ: Խոկ միջամտել տնտեսական մասի
մէջ կամ նրան կօնարօլի ենթարկել՝ ահսուչներին
իրաւունք չէ արւում:

3) Այն ունումնարանները, որոնք նպաստակ ունին
հոգեորականներ պատրաստել՝ չեն ենթարկւում ժո-
ղովրդական ուսումնարանների ահսուչների հսկողու-
թեան և գտնւում են հոգեսոր իշխանութեան բացա-
ռական վարչութեան տակ: Այս դպրոցների ուսման
դասընթացի և ներքին կարգերի մասին կանոնները
պետք է ներկայացուեն Բարձրագոյն կառավարու-
թեան ի հաստատութիւն (յօդ. 1004):

ԺԱՄԱՆԱԿԱՌՈՐ ԿԱՆՈՆՆԵՐ ՀԱՅ-ԼՈՒՍԱԿԱՌՈ-
ՉԱԿԱՆ ԵԿԵՂԵՑԻՆԵՐԻ ԳՈՅՔԵՐԻ ԿԱՌԱՎԱ-
ՐՈՒԹԵԱՆ ՄԱՍԻՆ ԿՈՎԿԱՍԵԱՆ ՓՈԽԱՐՔԱՅՈՒ-
ԹԵԱՆ ՍՍՀՄԱՆՆԵՐՈՒՄ *

Ա. Եկեղեցիներին պատկանող գոյքերի վերաբերմամբ.

1) Տայլուսաւորչական Եկեղեցիների գոյքերի կա-
ռավարութիւնը յանձնվում է ծխական հոգաբարձու-
թիւններին, բաղկացած երեցփոխից և անդամներից՝
թւով 2—4, հաւասար իրաւունքներով, որոնց ընտ-
րում են ծխականները իրանց միջից Յ ասրով:

2) Ծխական հոգաբարձութիւնների անդամների
ընտրութիւնը կատարվում է ծխականների ընդհանուր
ժողովներում ներկայ Եղողների ծախների մեծամաս-
նութեամբ և հաստատվում է թեմական առաջնորդից:

3) Ծխականների ընդհանուր ժողովներում ձայնի
իրաւունք ունեն ծխին պատկանող արական սեռի
25 տարի հասակ ունեցող բոլոր անձերը, որոնք օրի-
նական իրաւունք են վայելում հասարակական պար-
տաւորութիւններ կատարելու և Եկեղեցու ծխական-
ներ են հաշւում ոչ պակաս քան 2 տարի:

4) Ծխական հոգաբարձուների վրա պարտականու-
թիւն է զրվում հոգ տաճելու պատշաճաւոր թուլ-
տութեամբ հիմնելու զալոցներ, հիւանդանոցներ,
անկելանոցներ, ապաստղաններ և այլ բարեզորձա-
կան հաստատութիւններ:

* Արտատպւում է «Մշակութական» 1905 թվի № 160-ից:

5) Ելթէ Եկեղեցական Եկամծուաները բաւարարու-
թիւն աալու չը լինեն ծխերի բոլոր կարիքները հո-
գալու, հոգաբարձութիւնը առաջարկութիւն է կաղ-
ծում ծխականներից որոշ առուրք նշանակելու վերա-
բերմամբ. այդ առուրքը կարող է լինել ծխանուագ կամ
մշտական, զրամով կամ իրերով: Այդ առաջազրու-
թիւնը առաջարկվում է ծխականների ընդհանուր ժո-
ղովի ըննութեան և նրա կողմից ընդունվելուց և
այդ մասին վեհու կայացնելուց յետոյ գառնում պար-
տաւորական համաձայնութիւն յախնողների համար:

6) Իւրաբանչիւր տարիայ Ելեմուտի նախահաշիւր՝
կաղմած հոգաբարձութեան կողմից՝ սահնում է ծխա-
կանների ընդհանուր ժողովի հասանութիւնը և հաս-
տատվում է թեմական առաջնորդից:

7) Ծխական հոգաբարձութիւնները պարտաւոր
են հաշիւ տալ թէ վիճակաւոր առաջնորդին և թէ
ծխականների ընդհանուր ժողովներին, որոնք իւրա-
բանչիւր տարի ընարում են առանձին վերասատուզող
յանձնաժողովներ հաշիւները ստուգելու համար:

Բ. Հողեւոր սեմինարիաններին պատկանող կալուածների մասին.

1) Հոգեւոր սեմինարիանների կալուածները (Օր.
ժող. XI հ. հրատ. 1896 թ. յօդ. 1206) կառա-
վարում են առանձին հոգաբարձական խորհուրդներ՝
բաղկացած 12 հոգուց, նախադահութեամբ թեմական
առաջնորդի:

2) Հոգաբարձական անդամներ ընտրելու համար,
թեմական առաջնորդի կամ նրա կողմից նշանակած
անձի նախադահութեամբ, հրաւիրվում է վիճակային

ընտրողների ժողով՝ երկու-երկու հոգի այս քաղաքի եկեղեցիներից, ուր գտնվում է սեմինարիան. արդ անձերը ընտրվում են ծխականների ընդհանուր ժողովով ներկայ եղողների ժամների մեծամասնութեամբ և մի-մի հոգի վիճակում գտնվող քաղաքային եկեղեցիներից՝ ընտրված նոյն կարգով, և մի-մի ընտրող իւրաքանչիւր դորձակալութիւնից՝ ընտրված դիւղական եկեղեցիների ներկայացուցիչների ժողովով։ Հոգաբարձական խորհրդի անդամները ընտրվում են 4 տարով։

3) Հոգաբարձական խորհրդի անդամները հաստատվում են իրանց պաշտօնում Ամենայն Հայոց Կաթողիկոսի կողմից։

4) Հոգաբարձական խորհրդի անդամների կէսը 2 տարուց յետով գուրս է դալիս պաշտօնից և առաջին անգամ վիճակով։

5) Վիճակացին ընտրողների ժողովը, հոգաբարձական խորհրդի լիազօրութեան ժամանակամիջոցում, ընտրում է վերասառուցող յանձնաժողով, որի եղանակացութիւնը հազորդիվում է Էջմիածնի Սինօղին։

6) Տարեկան նախահաշիւները, ինչպէս նաև հոգաբարձական խորհրդների հաշիւները, հաստատվում են Էջմիածնի Սինօղից։

Գ. Վանքապատկան գոլքերի կառավարութեան մասին.

1) Վանքապատկան գոլքերի կառավարութիւնը յանձնվում է վանական իշխանութեան։

2) Վանքապատկան գոլքերի կառավարութեան կանոնաւրութեան վրա հսկելու համար կարող են հրաւիրվել թեմական առաջնորդի կողմից և աշխարհական անձինք՝ օդնելու վանքական իշխանութեան։

Ե.

ՇՐՋԱԲԵՐԱԿԱՆ ԿՈՆԴԱԿ ԵԿԵՂԵՑԱԿԱՆ ԿԱԼՈՒԾՆԵՐ ՎԵՐԱԴԱՐՁՆԵԼՈՒ ԵՒ ԴՊՐՈՑՆԵՐ ԲԱՆԱԼՈՒ ՄԱՍԻՆ *)

ՄԿՐՏԻՉ ծառայ Յիսուսի Քրիստոսի և անահասանելի Կամօքն Սատուծոյ Եպիսկոպոսապետ և Կաթուղիկոս ամենայն Հայոց Ծայրագոյն Պատրիարք համագալան նախամեծար Ամոռու Արարատեան Առաքելական Մալր Եկեղեցու Սրբու Կաթուղիկէ Էջմիածնի.

Սիրելեաց Մերոց և օրհնեալ հարազատից Մալր Ալոռոյս համայնից հայազանց, Շնորհազարդ Եղբօր Մերում Դիտապետի Տաճն Կիլիկիոյ՝ Տ. Սահակ Ա. կաթողիկոսի, Ամենապատիւ սրբազն պատրիարքաց Ա. Երուսաղէմի և Կ. Պօլսոյ՝ Տ. Յարութիւն և Տ. Մաղաքիս Արքեպիսկոպոսաց, գերաշնորհ Եպիսկոպոսաց, հոգեշնորհ Փոխանորդաց, բարեշնորհ Վանահարց և վարդապետաց, արժանապատիւ աւագ Երիցանց, սրբանուէր քահանայից, մաքրակենցաղ կուսանաց, շնորհունակ սարկաւազաց, դպրաց և ամենայն ուխտի մանկանց Եկեղեցւոյ, պերճաշուը իշխանաւորաց, գերազնիւ աստիճանաւորաց, առհմային ազնուականաց, պատուէլի վահառականաց, մեծապատիւ հոգաբարձուաց, յարգելի Երեսփոխանաց, մեծարելի ուսուցչաց և ուսուցչունեաց, ժրաշան Երիտասարդաց, վաստակական արհեստաւորաց, քրանաշան մշակաց և Երկրագործաց, պարկեշասուն աիկնանց և օրիորդաց և

*) Արտատպում է «Արարատ»-ի 1905 թւի Անպտեմբեր ամսի տետրից։

ամենայն չափու հասակի ի Քրիստոս հաւատացերց,
արանց և կանանց, ծերոյ և տղաքոց, որը մնեալ և
մնեալ կայք ի ծոց կաթուղիկէ Եկեղեցւոյ Հայաստա-
նեաց, ողջո՞ն և օրհնութիւն յԱթոռակալէն Ս. Հօրն
ծերոյ Քրիդորի Լուսաւորչի բազմասցի ի ծեղ: Ողոր-
մութիւն աստուածային, խաղաղութիւն Փրկչին և
շնորհ Ս. Հոգւոյն Եղիշի ի վերայ համայնիցդ: Ամէն:

Ողջո՞ն Քեղ, Եկեղեցի Հայոց, նորոգեալ և զարդա-
րեալ, բանզի ի Քեղ ծաղեաց վերստին շողն աստուա-
ծային և վերացաւ ի Քէն քոյն սպոյն: Ողջո՞ն Քեղ,
ասուապեալ ժողովուրդ Հայոց, որ տօնես այսօր զտօն
նաւակատեաց և յնծութեան Մօրն Քո Եկեղեցւոյ՝
ի շնորհս Մէծի Հովանաւորին Քո և Ամենաբարեպաշա-
Կայսերն ամենայն Ռուսաց Նիկողայոսի Բ-ի: Ողոր-
մութիւն աստուածային առարծեցաւ այսօր ի վերայ
Քո, յետ ասուապանաց վերջին ամաց փառազարդե-
ցաւ Եկեղեցին և միսիթարեցար գու լիսապէս, ժողո-
վուրդ Հայոց: Եւ Ես նորոգեալ ծերութեամբ իմով՝
ինդակից փառաց իմով Եկեղեցւոյ և ուրախակից հա-
րազատիցդ իմոյ՝ սիրելեաց, ողջունեմ քեղ վասն մէծի
շնորհացն կայսերականի և շնորհաւորեմ զտօն յնծու-
թեան Քո: Օրհնեալ է Աստուած, որ խնայեաց Եկե-
ղեցի Միուծնի Որդուոյ իւրոյ և ի սպաւոր ժողովուրդ
նորա յնծացէք ընդ սաղմուերգուին և ասացէք. «Տէր
ի զօրութեան քում ուրախ Եղիշի թագաւորն, ի
փրկութեան քում յնծացէ յոյժ»: Այլ և հանապա-
զորդեմ զիմ նուազն առ Աստուած իմ՝ «զոհացաց
զքէն, Տէր, բոլորով սրտիւ իմով, պատմեցից զամե-
նայն սքանչելիս քո, ուրախ Եղիշ և յնծացաց ի քեղ,
սաղմոս ասացից անուան քում, բարձեալ»:

Տառապանք քո և նեղութիւնը, որ կրեցեր յան-
ձին առ ի պաշապանութիւն սեփական իրաւանց
Եկեղեցւոյ քո սրբոյ լնդունելի եղեն յաչս Ամենակալ
Տեառն զօրութեանց, որ շարժեաց զսիրտ և զգութ
արդարագատ թագաւորին Մէրոյ, դի սիրտ թագա-
ւորաց ի ձեռս Աստուածոյ, և Ողորմած Կայսերն Մէր
վերագարձոց Եկեղեցւոյ մերում զգարաւոր արտօնու-
թիւնս նորա և շնորհեաց նմա զհոդ դաստիարակու-
թեան զաւակաց քոյ: Արդ՝ որ արժանացար վերստին
մէծի վսասահութեան կայսերականի և շնորհաց՝ յետ բա-
ւական նեղսակիրութեանց և տօնես այսօր զտօն նաւա-
կատեաց Եկեղեցւոյ, յուշ լիցին քեղ տւուրը տառա-
պանաց քոյ, յուշ լիցին քեղ տւուրը սպոյ քո, և գու-
ուխտեալ առաջի Աստուածոյ սիրել յաւետ և պաշտել
զհարազատ Մայրն քո զառւրբ Եկեղեցին Հայաստա-
նեաց. ուխտեալ սիրել զեղբարյն քո, զհարազատն և
զհամազղին. կալ մնալ սիրով խաղաղութեամբ և հա-
մերաշխութեամբ ընդ միմեանս:

Իսկ ես՝ ի մուտա արեւու իմոյ՝ աղօթեմ և աղաչեմ
զՄիածին Բանն Աստուած, զի հաստատուն և յարաւե-
սպահեացէ զՃանարն իւր սուրբ զՄայր Աթոռն Հայաս-
տանեաց, աղօթեմ, զի շնորհեացէ Տէր կեանս Երկար
և անփորձ Մէծի Թագաւորին մերում և Կայսերն ա-
մենայն Ռուսաց Նիկողայոսի Բ-ի, որ բանիւ հրամանի
իւրոյ Երարձ զքօղն սպոյ և տառապանաց Եկեղեցւոյ
և ժողովրդեանս: Զեռն Տեառն ընկալցի զնա և բա-
զուկ Ամենակալին զօրացուացէ զնա: Դու ևս մաղ-
թեալ ի բարը սրտի, զի Տէր զօրութեանց լիցի ընդ
նմա ի առւէ և ի զիշերի, պահելով զնորին Մէծու-
թիւն առողջ և անփորձ հանդերձ ժառանգօք և ար-

քայլազն հարազատօք: Եւ օրհնեսցէ Տէր զջեղ զամենեսեանսդ երկնազին օրհնութեամբ ի տրիտուր չանից Զերոց և վաստակոց, զոր վաստակեցայք և աշխատ եղեք բանիւ և զրով, աղերսանօք և աղաչանօք շարժել զսիրտ Մեծի Միապետին խնացել յեկեղեցի և ի մանկունս նորա: Տայէ Տէր ամենեցունցդ վարձսըստ վաստակոց Զերոց, անեցուցանելով և բաղմացուցանելով զջեղ և զաւակունս Զեր և պահեսցէ զջեղ աննկուն հոգւով, սուրբ սրափւ, հաստատուն հաւատով, միաբան սիրով և համերաշխ գործունէութեամբ ընդ հովանեաւ մօրն լուսոյ Ս. Էջմիածնի ի վառս Աստուածութեան իւրոյ: Ամէն:

Ի վերայ իսկականին ստորագրեալ է

ՄԿՐՏԻՉ ԿԱԹՈՒՂԵԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՅ.

Տուա կոնդակս շնորհաւորական յամի շնորհաց Փրկչին 1095. յեօններորդում աւուր ամսեանն օգոստոսի և ըստ Տումարիս մերում ՌթՇԴ և Հայրապետութեան մերոյ ԺԲ ամի:

Թ. 664.

Ի ք. Տփխիս.

¶

Կ Ա Ն Ո Ւ Ն Ե Բ *

որոնք վերաբերում են 1903 թ. յունիսի 12-ի օրէնքի հիման վրայ ոռուս կառավարութեան մատակարարելու նպատակով իւր ծեռքն առած հայ-լուսաւորչական եկեղեցապատկան կալուաների և դրամագլուխների վերադրծման գործողութեան, համաձայն 1905 թ. օգոստոսի 1-ի Բարձրագոյն հրամանագրի.

Անմիջական կարգադրութիւնը, որ վերաբերում է ոռուս կառավարութեան՝ մատակարարելու նպատակով իւր ծեռքն առած, կովկասեան փոխարքայութեան նահանգներում, գաւառներում և առանձին շրջաններում գտնուող հայ-լուսաւորչական եկեղեցու հոգեոր հաստատութիւններին պատկանող կալուաների ու զրամագլուխների վերադրծման, ինչպէս նաև այդ մասին պահանջուած հսկողութիւնը յանձնարարում է ըստ տեղին՝ նահանգապետներին, դինուորական նահանգապետներին, գաւառական ու շրջանային կառավարիչներին:

Ի տնօրինութիւն նրանց ուղղւում են հետևեալները. 1) ներքին գործերի մինիստրութիւնից այդ իշխանութեան տրամադրութեան տակ դտնուած այն փողակին գումարները, որոնք պատկանում են հայ-լուսաւորչական եկեղեցուն, որպիսիք են՝ ընդունուած զրամագլուխներն իրենց տոկոսներով, նախկին երկրագործական ու պետական կալուաների մինիստրու-

*) Արտասպառում է «Նոր-Դար»-ի 1905 թի № 45-ից:

թիւնից այդ մինիստրութեան անցած էկեղեցապատկան ու վանքապատկան անշարժ կազմերից ստացուած հասովթների չմխսուած մասը, դուքս գալով զրանից 10 տոկոս այդ կալուածների մասակարարութեան ժախսերը ժածկելու և պահեստի զրամազլուխը կազմակերպելու համար, դուքս գալով նմանապէս 5 տոկոս օժանդակիչ զրամազլիսի կազմութեան, ևայն, ինչպէս նաև վերե լիշուած զրամազլուխներին վերաբերուած փողալին ու այլ գոկումենաներ, և 2) Նորին Կալսերական Մեծութեան կովկասեան փոխարքայի փարչութիւնից՝ այն բոլոր արձանագրութիւններն ու ցուցակները, որոնք կազմուած են 1903 թուին Եկեղեցական կալուածների ու զրամազլուխների կառավարութեան կողմից ընդունուած ժամանակ:

Ծանօթութիւն. — Փողալին գումարներն ու գոկումենաները, արձանագրութիւնները, ցուցակները և այլն ուղղում են այն նահանգապետներին, շրջանների ու գաւառների կառավարիչներին, որոնց նահանգներից ու գաւառներից անցած են մինիստրութեան և փոխարքայի փարչութեան ի մասակարարութիւն:

2) Կալուածների ու զրամազլուխների վերաբանձնան, ինչպէս նաև այդ գործողութեան ենթադրած ժախսերը սղելու նպատակներով, փողալին զրամազլուխները, նմանապէս և զրանց վերաբերուած գոկումենաներն ու զրբերը նահանգապետների և շրջանների ու գաւառների կառավարիչների կողմից ուղարկում են անմիջականապէս հայ եկեղեցական այն հաստատութիւնները, որոնցից որ նրանք ընդունուած

էին, կցելով զրանց բացատրական հաշուեցոյցներ այն դէպքերում, երբ վերապանձնուած գումարներն աւելացած կամ նուազած են համեմատութեամբ 1903 թ. կառավարութեան ի մասակարարութիւն ընդունուածների: Վերոյիշեալ հողեար հաստատութիւնները լինթաց եօթն օրուայ պարտաւոր են զրամանների ու զրամանական գոկումենաների ստացման մասին տեղեկութիւն տալ նահանգապետներին և գաւառական ու շրջանապէին կառավարիչներին, զրա հետ միասեղ, որեփցէ գժգոհութիւն ունեցած դէպքում, իրենց զեկուցադրին պէտք է կցեն նաև առանձին յալտարարութիւն այդ մասին:

3) Միւճոյն զիստումներով, հայ-լուսաւորչական անշարժ գոյքերի անմիջական վերաբարձր յանձնարարում է յատուկ այդ նապատակով կազմուած յանձնախրմերի, որոնք կազմուած են ներքին գործերի մինիստրութեան և հողալին ու երկրագործական զիխաւոր վարչութեան տեղական իշխանութեան մէջ ունեցած ներկայացուցիչների բարեհայեցողութեան համաձայն: Երկու վարչութիւնների այդ յանձնախրմերին մտանալցող ներկայացուցիչներից ամեն մինին իւր վարչութեան կողմից արւում են պատշաճաւոր հրահանդեր ու փաստաթղթերը՝ կից այդ մասին նրանց եղած ձեւական առաջարկութեան:

Ծանօթութիւն. — Էջմիածնի վանքի գոյքերը վերաբանձնող յանձնախրմերի գործողութիւնները զեկավարելու նպատակով երկանեան նահանգապետի կողմից նշանակում է տեղական նահանգապետը: Իսկ Թիֆլիսի վերաբանձնող յանձնախրմերի զեկավարութիւնը գրւում է կովկասեան իշխանութեան բա-

բեհայեցողութեամբ նշանակուած մասնաւոր անձի վրայ:

4) Վերայանձնող յանձնախմբի գործունէութեան ծրագիրը մշակուում է նահանգապետների, գտառաների ու շրջանների և երկրագործական ու պետական կարուածների տեղական ներկայացուցիչների երկուասեք համաձայնութեամբ:

5) Հալ-լուսաւորչական հոդեոր իշխանութեան կողմից անշարժ կալքերն ընդունելու համար արտօնուում են, եկեղեցապատկան կալքերի համար—թեամական առաջնորդութեան բարեհայեցողութեամբ նշանակուած անձեր՝ մասնակցութեամբ այն եկեղեցու աւագերէցի ու երէցփոխի, սեմինարիապատկան կալքերի ստացման համար—հոդաբարձական խորհուրդների՝ իրենց միջից ընտրած 3—4 անդամի, մասնակցութեամբ սեմինարիայի տեսչի, և վանքապատկան կալուածների համար—վանահօր և հոդեոր իշխանութեան կողմից նոյն վանքի միաբանութիւնից ընտրուած 2—3 անձերի, իսկ միաբանութիւն չեղած դէպքում, ուրիշ հոդեորականներից կամ աշխարհականներից ընտրուած անձերի:

Ծանօթութիւն. — Ծալրագոյն Պատրիարք-Կաթողիկոսի կողմից նշանակուում է յատուկ անձնաւորութիւն՝ զեկատվարելու էջմիածնապատկան կալքերի ընդունելու գործողութիւնը:

6) Կալուածները վերայանձնած ժամանակ վերայանձնող յանձնախմբերն ի պիւրութիւն գործի հրաւիրուում են. քաղաքներում—քաղ. հանրապին վարչութեան ներկայացուցիչներին, իսկ գիւղերում—գիւղապետին ու տեղական բնակչութիւնից երկու արժանահաւատ անձերի:

7) Վերայանձնման գործողութիւնն աւելի ևս կարճեցնելու նպատակով, այդ բանը կատարւում է 1903 թ. կաղմուած լրնդունման արձանազրութիւններով ու ցուցակներով, ուր մի կողմից պէտք է ստորագրուեն վերայանձնող յանձնախմբի անդամները՝ այդ արձանազրութիւններում ու ցուցակներում նշանակուած հոգեւոր հաստատութիւններին պատկանած կալուածների վերագարձնելուն, միւս կողմից հոգեւոր իշխանութեան ներկայացուցիչները՝ այդ կալուածները յետ ստանալուն, իսկ այդ գործողութեան ներկայ դանուող միւս անձնաւորութիւնները՝ որպէս վկայ կատարուած գործողութեան:

8) Վերայանձնուելիք կամ նրա մի մասի վարձու տրուած, կամ, տեղական սովորութեան համաձայն, պայմանագրով օգտուելու տրուած գէպ-քերում, վերայանձնող յանձնախումբը պարտաւորուում է վարձառուներին տեղեկացնել այդ կալուածների պետական իշխանութիւնից հայ հոգեւոր իշխանութեան անցած լինելու մասին:

9) Հալ-լուսաւորչական հոգեւոր հաստատութիւններին Կովկասում պատկանած անշարժ կալքերի վերայանձնման ժամանակ, հողալին ու երկրագործական զիլսաւոր իշխանութիւնը Ն. Կ. Մ. Կովկասի վոխարքալին ուղարկում է վերուիշեալ կալքերի պետական մասակարարութեան ժամանակամիջոցում ունեցած արդիւնքի ու ձախսերի մանրամասն հաշուեցոյցը, իսկ ներքին գործերի մինիստրութիւնն ի զիտութիւն վոխարքալի իւր կողմից թւում է վերուիշուած կարլուածների չմխսուած հասովթները: Այդ հասովթներն անշարժ կալուածների սեպհականատերերի միջև բա-

ժամելու համար, փոխարքայի կողմից հաստատվումէ մասնաւոր խորհուրդ, որին մասնակցելու է ամենայն հայոց Կաթողիկոսի ներկայացուցիչը:

10) Վերայանձնուելիք անշարժ կալուածների թրում արդիւնաբերական գործիքներ և ուրիշ կարգի շարժական ինչքեր (անասուն, հացահատիկ և այլն) գտնուած պարագայում, ինչքեր, որոնք ստացուած են որպէս հասովթ այս կամ այն կալուածի, այդպիսի կայքերն ևս յանձնուում են հայ հոգեորականութեան ներկայացուցիչներին մասնաւոր ցուցակներով, որոնցից մի օրինակ կցւում է արծանազրութեան և մի օրինակ ևս յանձնուում է հոգեոր կառավարութեան ներկայացուցիչներին:

11) Կալուածների վերայանձնուած ժամանակ, եթէ հոգեոր իշխանութեան ներկայացուցիչների կողմից որեկցէ անբաւականութիւն յաջնուի և զրա վերաբերմումը հնարաւոր չլինի երկու կողմերի միջև համաձայնութիւն կազացնել, այդ գեպբում, այդ առիթով կազմւում է արծանազրութիւն և ստորագրուում բոլոր ներկայ եղողների կողմից. արծանազրութիւնը կազմւում է երկու օրինակ, որոնցից մէկը վերայանձնող յանձնականումբը ներկայացնուում է տեղի նահանգապետին, իսկ միւսը՝ հոգեոր իշխանութեան ներկայացուցիչները յանձնուում են թեմական առաջնորդին: Նահանգապետի ու թեմական առաջնորդի միջև այդ առիթով կառարուած բանակցութիւնների ապարդիւն անցած պարագայում, թեմական առաջնորդը, համաձայն 1905 թ. օգոստոսի 1-ի Բարձր. հրամանագրի II բաժ., այդ խնդիրը յանձնարարում է փոխարքովի վերջնական վճուին, միաժամանակ այդ հա-

դրդագրութեան պատճենն ուղարկելով տեղի նահանգապետին, գաւառական կամ շրջանային կոուագարչին:

12) Կալուածների վերայանձնման գործողութեան աւարտելուն, ընդունուած արծանազրութիւններն ու ցուցակները, ինչպէս նաև հոգեոր իշխանութեան կողմից ներկայացուած զժգոհութիւնների մասին կազմուած արծանազրութիւններն աստիճանական կարգով ներկայացւում են նահանգապետներին, գաւառների ու առանձին շրջանների կառավարիչներին, որոնք, հազորդելով փոխարքային վերայանձնման գործողութեան մասին և ներկայացնելով նրան ապահովութիւնը այնութեան նկատմամբ կազմուած արծանազրութիւնը, ընդունման արծանազրութիւններն ու ցուցակները, կցելով զրանց հայ-լուսաւորչական եկեղեցու հոգեոր հաստատութիւններից ստացուած զրամագրութիւնների ու փողային գոկումնենաների յայտագրերը, համաձայն սոյն օրէնքների 2-րդ յօդուածի, յանձնում են իրենց կառավարութեան:

13) Եթէ լրնթացս երկու ամսուայ, սկսած թեմական առաջնորդների այս կանոններն ստանալու օրից, տեղի չէ ունենում հայ-լուսաւորչական եկեղեցուն պատականած այս կամ այն կալուածների ու զրամագրութիւնների վերայանձնման գործողութիւնը, այդ գեպբում թեմական առաջնորդները պատշաճաւոր զեկուցագրով զիմումն են անում տեղի նահանգապետին, գաւառի կամ շրջանի կառավարչին և ապա մի ամսուայ ընթացքումն ևս վերայանձնումը տեղի չունեցած պարագային, այդ առիթով առաջարդութիւն են անում կովկասի փոխարքային: Իսկ այն

գէպօւմ, Երբ հոգեոր իշխանութեան ներկայացուցիչները մերժեն կալուածները վերստանալ նշանակուած միւնոյն ժամանակի ընթացքում (2 ամիս), նահանգապետը, դաւառների կամ շրջանների կառավարիչները բանակցութեան են մանում թեմական առաջնորդի հետ, իսկ եթէ զբանից յետոյ ևս, յընթացս մի ամսուայ, աեղի չունենայ վերստացումը, այդ գէպքում առաջարքուում է փոխարքային այդ մասին:

14) Դրամագլուխներն ու դոկումենտներն ուղարկելու և փոխարքելու ծախսերը ներքին դորձերի մինիստարութիւնից նահանգապետներին, դաւառների ու շրջանների կառավարիչներին և այս վերջիններիցս համապատասխան հոգեոր հաստատութիւնները՝ ծանրանում են հոգեոր իշխանութեան վրայ, իսկ կալուածները վերաբանծնող պաշտօնեաների ճանապարհորդութեան ծախսերը կատարուում են ի հաշիւ վերոցիշեալ եկեղեցիներին պատկանող կալուածների հասոյթների:

I.

ՆՈՐ ՇԱԽՂԻ ՍԿԶԲԻՆ

(1905 թւի օդոսառութեան կառավարիչ Սենատին
առաջ Բարձրագոյն Ռեկազը)

II.

ԺԱՄԱՆԱԿԱՀՈՐ ԿԱՆՈՆՆԵՐ ՀԱՅ-ԼՈՒՍԱՀՈՐ-
ՉԱԿԱՆ ԵԿԵՂԵՑԻՆԵՐԻ ԳՈՅՔԵՐԻ ԿԱՌԱՎԱ-
ՐՈՒԹԵԱՆ ՄԱՍԻՆ ԿՈՎԿԱՍԵԱՆ ՓՈԽԱՐՔԱՅՈՒ-
ԹԵԱՆ ՍԱՀՄԱՆՆԵՐՈՒՄ

I.

ՆՈՐ ՇԱԽՂԻ ՄԿՋԲԻՆ¹⁾

(1905 ն-ի օգոստոսի 1-ին կառավարություն Սենատին ա-ած
Բայցը թոյն Ուկալը)

«Մեղ նոր արև ծագէ, բացուի լուս
բոցավառ...
Դիմենք բանալ կենաց շաւիդ...»

Մարտ.

Կառավարիչ սենատին օգոստոսի 1-ին տւած Կայ-
սերական ուկազով վերականգնուում են հայ Եկեղեցու
կալւածուկան իրաւունքները, հայ գոլրողը վերստանում
է իր նախկին՝ 1874 թւի յուլիսի 19-ի Բարձրագոյն
հաստատած դիրքը, հայ հոգևորականութեանը արր-
ւում են լայն ծխոցներ ազգացին կրթութեան—լու-
սաւորութեան ասպարեզում: Օգոստոսի 1-ի ուկա-
զով վերացւեցին 1896 թւի (Եկեղեցական - ծխական
գոլրոցների փակումն), 1898 թւի մարտի 26-ի
(ծխական ուսումնարանների կայտածների գրաւումն
յարքունիս) և 1903 թւի յունիսի 12-ի (Եկեղեցական

1) Արտատպւում է «Նոր-Դար»-ի 1905 թի №№ 8 և 9-ից:

կալւածների գրաւումն յարքունիս) կարգադրութիւնները: Հայ եկեղեցականը գիւրութիւն է ստանում տիրանալու իր իրաւանց, հայ դպրոցը՝ իր ուխտին:

Նոյն օդոսոսի 1-ի Բարձրագոյն հաստատւած և այսօր հրատարակւած՝ «Ժամանակաւոր կանոններ հայ-լուսաւորչական եկեղեցիների գոյքերի կառավարութեան մասին կովկասեան փոխարքայութեան սահմաններում» պաշտօնական նորման շօշափում է երեք զատ-զատ կէտերում մեր եկեղեցիների, թեմական հոգեոր դպրանոցների և վանքերի կալւածների փոքրութեան հարցերը:

Վերապահելով ինձ իրաւունք՝ ապագայում դառնալ «Ժամանակաւոր կանոններ»-ին առանձին յօդւածով՝ առաջման ես ինձ ուղեցոց կառնեմ Կայսերական ուկաղի՝ Շաբանանին վերաբերեալ շեշտար:

Եկեղեցին և դպրոցն անբաժան են հայի սրտում, և հասկանալի է, որ այդ սրտի աղճազոյն ներկայացուցիչներից մէկի՝ Ներսէս Ե. կաթողիկոսի աղդեցութեան կնիքը կրող ռուս պետական «Պոլոմենիկ»-ի հայ եկեղեցուն վերաբերեալ մասը (Сводъ Законовъ XI т. 4. I) չէր կարող անտես առնել այդ անխախտելի թէզը, ըստ մէկ՝ աքսիօմը: Այս, և այդ թէզը, այդ աքսիօմը ընդգծւած է նոյն «Պոլոմենիկ»-ի՝ և զատ-զատ յօդւածներով, և մի շարք յօդւածների համագումար իմաստով:

Հստ պետական օրէնքի՝ մեր դպրոցական ուխտը ոչ այլ ինչ է եթէ ոչ՝ Եկեղեցու ուխտի մի մասը: Այդ է պետական օրէնքի (հրատ. 1896 թ.) յօդ. 1178-րդի շեշտար մեր եկեղեցական-ծխական, վիճակալին և վանական դպրոցների նկատմամբ, այդ է նոյն պետ.

օրէնքի յօդ. 1209-րդի շեշտար մեր թեմական հոգեոր դպրանոցների (սեմինարիաների) նկատմամբ:

Մեր դպրոցական ուխտի ազգպիսի պատկերացումը պետ. օրէնքը ընդգծում է նրանով, որ կապում է մեր դպրոցների գրամականի մի շարք աղբիւրներն եկեղեցիների և վանքերի եկամուտի և երեմն՝ սրանց պաշտօնեաների ոռնիկների հետ:

Մնում է աւելացնել, որ նոյն պետ. օրէնքն իւրացրել է մեր դպրոցների կրթական-վարչական զեկը ս. Էջմիածնի Գահակալին, միաժամանակ վերապահելով նրան ամեն պիւրութիւն՝ հոգալու մեր դպրոցների գրամականը ևս:

Իր ժամանակին մանրամասն կանգ առած լինելով այդ ամեն հարցերի վրա²⁾ , այսաւել ես կըստականամ միայն և եթ շեշտելով պետ. օրէնքի (հրատ. 1896 թ.) կարեսը յօդւածները: Սրանք են՝ յօդ. 1141՝ 8, 1178, 1183, 1185, 1188՝ 7, 1188՝ 13, 1189, 1209, 1210:

Ազգպիսով զծւած է մեր դպրոցների՝ պետական մարմիններից մանականացն անհայտ օրէցօրը:

Անցնենք օդոսոսի 1-ի Կայսերական ուկաղի՝ զրպոցականին վերաբերեալ շեշտին:

1873 թւին, Մեծ իշխան Միհմակիլ Նիկոլաւիչի փոխարքայութեան օրով, լոյս է տեսել մի կարգադրութիւն, որի արամազրութիւնն էր մի ընդհանուր

2) Տնս «Նոր-Դար», 1902 թ., №№ 170, 172, 174, 175, 177, 194, 195 և 198—իմ «Մեր թեմական Հոգեոր Դպրանոցների եկամուտի ցախօր անտես առնւած աղբիւրները»:—Տնս ևս իմ «Հաղոց թեմական Հոգեոր Դպրանոցների Կանոնադրութեան նախապիծը», Մոսկա, 1902 թ., § 11 և էջ 162—164:

օրէնքի և Կովկասի ուսումնական վարչութեան վերահսկողութեանն ենթարկել Կովկասում եղած ամեն և մասնաւոր, և եկեղեցական-ծխական դպրոցները: Այդ կարգադրութեան դէմ եռանդուն կերպով բողոքում է երշանկացիշատակ Գէորգ Դ. կաթողիկոս՝ պաշտպանելով հայ դպրոցների պետական միջամտութիւնից անհայտանում գաղափարը, սակայն, չբացանելով որոշ սահմաններում դրամ հարզութիւնը: Բանակցութիւններից և զրագրութիւններից յետով, հարցը որոշւում է համաձայն Գէորգ Դ. կաթողիկոսի բողոքին, և Մեծ Եշխան Միխայիլ Նիկոլաևիչի հաւանութեամբ ու Կայսեր հրամանով 1873 թւի օրէնքի փոխարէն—զրի է առնուում 1874 թւի յուլիսի 19-ի օրէնքը³⁾:

Արդ՝ Էն և 1874 ն-ի յո-լիս 19-ի օյնութը.

³⁾ Յ. Գ.: Ի դէպ.—Նախրան 1874 թւի յուլիսի օրէնքը մեր դպրոցներն ենթարկած են եղել 1836 թւի պետական „Պոլոյշենի“-ին և ապա՝ 1867 թւի «Ժամանակաւոր կանոններ»-ին: Այդ կանոնները Բարձրագոյն հաստատել էին 1867 թւի մայիսի 15-ին և ապա հրատարակել Միխայիլ Նիկոլաևիչի փոխարայութեան օրով: «Համաձայն այդ կանոնների՝ Կովկասի արքունական տեսչութեան չէին ենթարկում եկեղեցիներին և վանքերին կից հայ-լուսաւորչական, ինչպէս նաև ուղղափառ և մզկիթներին կից մահմետական դպրոցները: Նորանք տեղական ուստիկանական իշխանութեան հսկողութեան էին յանձնած և դպրոցների վարչութեանները պարտաւոր էին իւրաքանչիւր տարի ուստիկանութեան միջոցով տեղեկութիւններ հաղորդել ուսումնարանների, աշակերտների և ուսուցիչների մասին, որպէս անհրաժեշտ հարկաւութիւն Կովկասեան ուսումնական շրջանի տարեկան վիճակագրական հաշվետութեանց համար» (Տես «Հովիս», 1906 թ., №№ 39 և 40 —Կար. Թէմուրապեանի՝ «Մի էջ Թիֆլիսի Յովնանեան - Մարիամեան օրիորդաց դպրոցի պատմութիւնից»: Տես ևս «Сборникъ распоряженій, напечат. въ циркул. по Управ. Кав. Учебн. Окр. 1867—1871 г.г.»):

Այդ օրէնքով մի անգամ ևս ընդգծուում է պետ: «Պոլոյշենից»-ի գծածը — հայ դպրոցի անկախութիւնը պետական որևէ միջամտութիւնից և աղջիս Վեհափառ Հայրապետի՝ իբր այդ դպրոցի լիակատար տիրոջ իրաւունքը, սակայն հետեւել մի բացառութեամբ՝ Եկեղեցական-ծխական դպրոցների նկատմամբ:

ա) Բոլոր Եկեղեցական-ծխական դպրոցներում պիտի աւանդուի ուուսաց լեզուն, իսկ ուր աւանդուում է պատմութիւն և աշխարհազրութիւն—պնտեղ պիտի աւանդուեն ուուսաց պատմութիւն և ուուսաց աշխարհազրութիւն ևս, և այն՝ ուուսերէն լեզուի:

բ) Դպրոցների ուառուցիչները պիտի լինեն ուուսահպատակ և տէր համապատասխան բարոյականի:

Ահա այդ և մի միայն այդ երկու կետերի իրազորձման վրա հակելու իրաւունքն է, որ 1874 թւի յուլիսի 19-ի օրէնքով վերապահուում է պետական ժողովական դպրոցների տեսուչներին (անքերոյ):

Այդպիսով՝ համաձայն 1874 թւի յուլիսի 19-ի օրէնքի՝ հայ դպրոցը, իր ամեն տեսակում, վայելում է լիակատար անկախութիւն պետական միջամտութիւնից պնտեսականի նկատմամբ: Ա-Ա-Ֆ-Ֆ-Ա-Կ-Ա-Ն-Ի նկատմամբ — թեմական հոգեոր դպրոնոցները, որոնց նպատակն է հոգեօրականներ պատրաստել, վայելում են նոյն լիակատար անկախութիւնը, իսկ Եկեղեցական-ծխական դպրոցներն անկախ են վերև շեշտածս ուուսաց լեզուի, ուուսաց պատմութեան և ուուսաց աշխարհազրութեան վերաբերեալի բացառութեամբ:

Այդ բացառութեան դէմ չէր Գէորգ Դ. կաթողիկոսը ևս: Նա ընդունում էր պետական լեզուի կառելորութիւնը և ուուսաց լեզուի, պատմութեան և

աշխարհազրութեան նկատմամբ պետական պաշտօնական միջամտութեան - հակողութեան վրա նայում էր՝ իբր մի գրաւականի, որով սիմոն ամրանար «կառավարութեան վատահութիւնը դէպի մեր գործոցները»: Երշանկացիշատակ կաթողիկոսը կանգնած էր այն գործնական տեսակէտի վրա, որ այդպիսով հայ ժողովրդական գործոցական գործը ևս, ընդհանուր առմամբ, կրնժանայ պարտուպատշաճ գարդացման շաւզով՝ ապահովւած անսպասելիք խոչընդուներից⁴⁾: Այդպիսով՝ այսօր մենք կանգնած ենք այս ըստէ շեշտած շաւզի սկզբին, և մեղնից, մեր ազգային և մարդկային պարտաճանապահ-նի-նից է կախւած գործի ապագան:

Ուղեկից առնենք, ուրեմն, ժագած «արև»-ը, բայց ամ «բոյավառ լոյս»-ը և «զիմենք բանալ կենաց լա-նիլլ»...

Մեր առաջ բացւել է մարդկային ամեն յատկութիւնների գարգացման, կատարելազործութեան զործը՝ բաղաբակթութեան շաւզով. մեր առաջ պատկերանում է հայ մանուկը՝ տետրը ձեռքին՝ գործոցի շեմքին, և ապա մի փոքր ևս... նոյն մանուկը՝ հասակ առած՝ և ֆիզիքապէս, և մտաւորապէս, և բարոյապէս՝ կեանքի շեմքին... Մարդու սիրոր լցւում է փոքրիկ մանկան այդ հարդանալը դիսելիս: Այդաեղ, այժ, այդաե՞՝ այդ հարդանալը դիսելիս՝ կրկնակի՛ ևս զգում ուսերիդ վրա զրած բեռը դէպի գործոցական գործի պարտուպատշաճ ընթացքը, դէպ առնող սե-

⁴⁾ Տես աս «Սշակ», 1905 թ., №№ 125—128—Սիրական Տիկրանեանի՝ «Մեր եկեղեցական ուսումնարանների պատմութիւնից»:

րընդի անարատ բարոյականութիւնը: Պահանջ, բարոյական անհրաժեշտ պահանջ ևս զգում՝ կշռի առնելու անցեալում ամբարած փորձը՝ ապագայի փորձանըների առաջն առնելու համար...

«Առ-ըն է հանու-ի եւնու-նեան գործը. դրա-նու-ն է ծրապ-առ հասարակու-նեան ապահան» — շեշտ-ւել է երբեմն «Նոր-Դար»-ի էջերից⁵⁾: Սրտի խորքից են բղիսել այդ խօսքերը. հասարակութեան ապագայի գաղափարն է ողեօրում այդ սիրոր, որը, սակայն, խոցւած է, անցեալի այսու-ը երևոյթներով...

Իւրացնենք այդ սրտի բարախումները մենք ևս, իւրացնենք՝ չփակելով մեր աչքերն անցեալի տխուր երեսիթների առաջ, քանի որ այդպիսով, և միմիայն այդպիսով, մենք ապահայում ապատած կիմենք մանուկ սերնդի կրթութեան սուրբ գործն անցեալի փորձանըներից...

Հասարակութեան առաջ բանում էն գործոցի զրո-ները — նա պիտի զգայ - իւրացնի իր և իր գործոցի միշև ստեղծւելիք կապերը...

Հասարակութեան ներկայացուցիչը - հոգաբարձուն անցնում է զպրոցի շեմքը որոշ պաշտօնական իրաւունքներով — նա պիտի զգայ - իւրացնի՝ այդ իսկ իրաւունքների շնորհիւ իր ուսերի վրա գրած բարոյական խողը վեհութիւնը...

Կրթական գործի զլուխ են անցնում ուսուցիչներ, տեսուչներ և այլն — սրանց պիտ իւրացւեն որոշ իրաւունքներ և պարաւորութիւններ...

Դպրոցը՝ իբր այդպիսին՝ պիտի լրացնի իր պար-

⁵⁾ Տես «Նոր-Դար», 1894 թ., № 117՝ «Տիտրը երևոյթ» (առաջնորդող):

տառօրութիւնը՝ կրթել, դաստիարակել, ուսուցանել —
սրան պէտք են ծրագիր, կանոնադրութիւն...

Մանուկը դպրոց է զնում հասարակաց հանասպար-
հով — պէտք է մաքրել այդ ճարապարհը վարտիկէ և
արատառող ախտերից...

Եւ այն, և այն...

Այդ ամենը պէտք է երևան դադ, իւրացւի, որ-
պէս զի, կրկնում եմ, մեր նորարաց դպրոցի դորձն
աղատ մնայ անցաւէ փորձանքներից:

Մի առ մի գրի առնել անցեալի ամեն փորձանք-
ները — անկարելի է, զրա համար հասարներ են պէտք:
Բայց ահա այդ փորձանքների շատապով կաղծած մի
փոքր ցանկ: Ուշի ուշով կարդանք այդ ցանկը. նա
մեզ պէտք կլինի՝ այսօր մեր առաջ դրած հարցերը
կանոնների վերածելիս:

Համաձայն Կովկասի դպրոցական վարչութեան մի
տեղեկագրի՝ 1893 թւին մենք ունեինք 197 եկեղեցա-
կան-ծխական դպրոց, ուր ուսանում էին 13,355 ա-
շակերտ (8802 տղաք, 4553 աղջիկ), երեք թեմա-
կան հոգեոր դպրանոց (Թիֆլիսի Ներսիսեան, Երևանի,
Շուշու) և մի նեմարան (ո. Էջմիածնի Գէորգեան),
ուր ուսանում էին 1201 աշակերտ: Հետեւապէս՝ ըն-
դամենք — 201 կրթական հիմնարկութիւն 14,556
աշակերտով (10,003 տղաք, 4553 աղջիկ): 197 եկե-
ղեցական-ծխական դպրոցների վրա ծախսում էր
222,123 ր.: Հետեւապէս՝ մի եկեղեցական-ծխական
դպրոցի վրա ծախսում էր միշին թւով — 1127 ր.,
մի աղավելու վրա — 17 ր.⁶⁾: Գէորգեան նեմարանի

⁶⁾ Տես աս «Մշակ», 1894 թ., № 1 — Հ. Մ-ի՝ «Կրթական
դորձը մեր մէջ»:

և եղեք թեմական դպրանոցների վրա ծախսում էր
104,222 ր.: Հետեւապէս՝ այդ չորս հիմնարկութիւն-
ներից ամեն մէկի վրա ծախսում էր միշին թւով —
26,055 ր., մի աղավելու վրա — 87 ր.: Եթէ ի նկատի
առնելու լինենք մեր կրթական հիմնարկութիւնների
ընդհանուր թիւը՝ 201 և զրանց վրա եղած ընդհա-
նուր ծախսերը՝ 222,123 + 104,222 = 326,345 ր., կստա-
նանք հետեւալ թւերը — մի կրթական հիմնարկու-
թեան վրա ծախսում էր միշին թւով — 1623 ր.,
մի աղավելու վրա — 15 ր. գաղտնական...

Ահա այդպիսէ չնչին զումարի էր վերածւում կով-
կասի մի միջինից աւելի հայերի՝ գէտ իրենց կրթա-
կան դորձն ունեցած աղջային և մարդկային պար-
պահանալունեւուլու...

Կրթական հիմնարկութիւններից և զրանց սանե-
րից անցնենք դոյն այդ հիմնարկութիւնների դորձն
իր չարբաշ ուսերի վրա կրող ուսուցչին:

«Մարդագոյն ուսուցչիներ» — այդ վերնադիրն է կրում
մեր մամուլի էջերում լոյս աեսած և հայ ուսուցչին
նւիրած մի զրութիւն՝ ...

«Հոգածքարձուն ստիպել է վարժուհուն իր Եպահ-
նելը մաքրել» — վկայում է նոյն մամուլի էջերում լոյս
աեսած մի ուրիշ զրութիւն՝ ...

Թեմական հոգեոր դպրանոցի ուսուցչական ժողո-
վում հոգաբարձուն հայ է Եպահ պալէս Ապահով վրա
— պատմում են գէպըին անխօս վէայ հանգիստացած
ուսուցիչները՝ ...

⁷⁾ Տես «Մշակ», 1894 թ., № 94:

⁸⁾ Տես «Մշակ», 1894 թ., № 86:

⁹⁾ Տես մի «Երևանի Հայոց Թիմական Հոգեոր Դպրանոցը
և Հասարակութիւնը», Մոսկա, 1899 թ., էջ 14:

Մեր ծխական դպրոցների ուսուցիչների առջևին էր՝ երբեմն «կոպարով» որոշւածը, մի ուրիշը ստանում էր ամիսը 30 ր., երրորդը՝ 40 ր., չորրորդը՝ 15 ր., ոմանք բաւականանում էին... հացով, փայտով, բնակարանով և ամենաչնչին իսկ ոռնկով — 15 րուբլուց էլ չնչին¹⁰⁾...

Սարգիս քահանայ Բէզնաղարեանցը մահւան անկողնում պառկած ախարչէ էր քամում իր տանջւած սրտի կովիծը —

«Քսանհինդ տարի իմ ամբողջ կեանքը նուիրեցի դպրոցներին, կորցրի այնտեղ իմ առողջութիւնը, մաշեցի իմ բոլոր ոյժերը. — և ահա այժմ, ճերութեան հասակում, երբ տկար եմ և հիւանդ և անկարող աշխատելու, Ներսիսեան դպրոցը, հայոց այդ ամենամեծ և ամենահարուստ դպրոցը, փոխանակ հոգալու իմ մասին, փոխանակ հոգալու իմ երեխաների կրթութեան մասին, — նոյն իսկ մի քանի ամիս, երբ ես հիւանդ էի, չվճարեց իմ ոռնիկը, այլ կտրեց և դասերիս հետ միասին տուեց ուրիշին»¹¹⁾...

Այդքան ցնցող փաստերին կից՝ ես միանդամայն աւելրոդ եմ դատում զիմել թւերի վկացութեանը:

Ապա.

Կանոնադրութիւններ և ժըմառներ... Այդ առթիւ թուղ խօսի հայ անւանի մանկավարժը.

«Ամենայն մարդ, ինչ դադավարի տէր ես լինի, — ասում է Սեղբակ Մանդինեանն իր «Մանկավարժա-

¹⁰⁾ Տես «Արձագանք», 1894 թ., № 94՝ «Հայոց եկեղեցական-ծխական դպրոցների ընդհանուր դանձանակ»:

¹¹⁾ Տես «Աշակ», 1894 թ., № 107՝ «Սարգիս քահանայ Բէզնաղարեանցը»:

կան ապրակուսանքներ մեր մէջ» դպրոցիում, — դիւրութեամբ կը նկատէ, որ մեր դպրոցի ներքին կազմութիւնը մի բազմազիմի, բայց անհեթեթ կերպարանը ունի: Քանի շատ ներգործող անձինք կան դպրոցի մէջ, այնքան շատ կտոր է բաժանուած դպրոցը: Ոչ ոք չգիտէ, թէ միւսն ինչ է գործում, ինչ է ուսուցանում, ինչպէս և ինչու կրթում: ոչ ոք չէ շարունակում այն, ինչ որ ուրիշն սկսէլ է, ոչ ոք չէ լրացնում այն, ինչ որ միւսին պակասում է: Կարծ՝ որբան մարդ, այնքան տէր. իսկ դպրոցը մի է և այլքան տէրերին ժառանգող. պարզ ասել՝ մեր դպրոցը ճիշ-նիւն լունի»¹²⁾...

«Այսպէս չի կարող դպրոցը յառաջանալ, եթէ և պատուական ուսուցիչներ ունենալ, — ասում է Ս. Մանդինեանը նոյն աշխատութեան մէջ, — չի կարող, որովհետեւ ուսուցիչների գործունէութեան մէջ մի ներդին կապ չկայ. չի կարող, որովհետեւ չունէ մի այնպիսի ճարտարապետ, որ իւր մէջ կենդանի պահպանէ այդ նախագծի սկզբն և մասնական ուղղութիւնը»¹³⁾...

Այդպէս շեշտում էր Ս. Մանդինեանը 1875 թւին. այդ նոյն շեշտը դնում է մեր առաջ դպրոցական արդի իրականութիւնը ևս...

Դպրոցական որոշ կանոնադրութեան և ծրադրի, որպէս և կարդ ու կանոնի միակերպութեան դպրոցա-

¹²⁾ Տես Սեղբակ Մանդինեան՝ «Մանկավարժական տարակուսանքներ մեր մէջ», Թիֆլիս, 1875 թ., էջ 48:

¹³⁾ Տես ibid, էջ 7—8:

փարզ՝ մեր թեմական դպրանոցների նկատմամբ դրա-
ղեցրել է նւաստիս ևս¹⁴⁾:

Չեմ կարող այսուեղ չքերել ազգիս արդի վեհափառ
չայրապետի՝ 1894 թվին թերանի հայ հասարակու-
թեան շնորհած կոնդակի հետեւալ կառըր, ուր այն-
քան պերճախօս զծերով զծւած է կարդ ու կանոնի
նշանակութիւնը՝

«Յամենայն գործս և հաստատութիւնս հիմնական
պայման յաջողութեան և յառաջադիմութեան կարդ
ու կանոն համարին. ապա ուրեմն անհնարին թուխն
բարիք անդ, ուր ոչ զոյ կանոն, զի ի բացակայել կա-
նոնի իւրաքանչիւր ոք բնականապէս զի՞ր կամ կանոն
համարի»¹⁵⁾. . .

Մեր գպրոցական դրականութեան մէջ երեացել են
երկու միանգամայն հակադիր շեշաեր մեզ հետաքրքրող
հարցի առթիւ:

«Մինչև ոստոց նիւթական ապահովութեան խնդիրը
չլուծուի, միւս բոլոր պահանջները և գանգատներն
անհետեամբ երեմիականներ են» — լսում է մի կող-
մից¹⁶⁾. . .

«Ինչ պատկանում է ռոնկին, որ պիտի տրուի ու-
սուցիչներին, երբ լուս ժբաժընը կազմուած կը լինեն
մեր ուսումնարանները, նիւթական ապահովութիւնն

¹⁴⁾ Տես իմ «Որոշ կանոնադրութեան և ծրագրի անհրաժեշ-
տութիւնը և Հայոց թեմական Հոգևոր Դպրանոցների վարչական
և ուսումնական կարգ ու կանոնի՝ դիսցիպլինայի միակերպու-
թեան գաղափարը», Սոսկւա, 1900 թ.:

¹⁵⁾ Տես «Մշակ», 1894 թ., № 93՝ «Մենք էլ այդ ենք պա-
հանջում»:

¹⁶⁾ Տես Լևոն Սարգսեան՝ «Ժողովրդական կրթութեան գործը
մեղանում», Սոսկւա, 1892 թ., էջ 35:

էլ կը լինի: Ես հաւասարացած եմ, որ ժողովուրդը հա-
կակրութիւն չի ցոյց տալ» — լսում է միւս կողմից¹⁷⁾. . .

Կեանքը, գպրոցական պրակտիկ օրէցօրն այս ան-
դամ ևս գալիս է գնելու իր կնիքը՝ նշմարատու-
թիւնք պիտի որոնել երկու հակադիր ուղղութիւն-
ների միջն ճանապարհի վրա, ուր գալիս լուծում-
միանում են՝ և գրամականի, և դիտական-բարոյա-
կանի շեշաերը: Եւ դրա ամենայս օրինակն է Թիֆ-
լիսի Ներսիսեան գպրանոցը, որը, չնայելով ուսուցիչ-
ների բաւարար առնձիներին, ազատ չի եղել մեր միւս
կրթական հիմնարկութիւնների բացասական կողմերից՝
և վարչականի, և դիտական-բարոյականի նկատմամբ:
Բաւարար է յիշել, դրօր, Ն. Քարամեանի վկայու-
թիւնը, որ «1887 -ից սկսած, առնուազն վեց ան-
դամ ծրագիր է մշակուել Ներսիսեան գպրոցում, իսկ
մինչեւ այդ ժամանակ վեց անգամ վեց»¹⁸⁾. . .

Սրան կից՝ ես կարող եմ բերել ձեռքիս տակի նիւ-
թերից հետեւալ թւերը.

Երեանի Հայոց թեմական Հոգևոր Դպրանոցը յայ-
սօր ունեցել է 34 տեսուչներ և տեսչի պաշտօնա-
կատարներ¹⁹⁾. Ջզին Ն-ի վերամելով սրանց պաշտօ-
նավարութեան ընթացքը՝ կստանանք — 1 տարի 10 ամիս...
Ներսիսեան Հոգևոր Դպրանոցը յայսօր ունեցել է

¹⁷⁾ Տես «Հայոց առաջին ընդհանուր Ուսուցչական ժողովի
պատմութիւնը» — արձանագրեց Ցովհաննես (ապա՝ Էմմանուէլ քա-
հանալ) Նազարեանց, Թիֆլիս, 1883 թ., էջ 136 — Գ. Խատի-
սեանի կարծիքը:

¹⁸⁾ Տես «Լումալ», 1900 թ., Գիրք Բ, էջ 359—360:

¹⁹⁾ Տես «Յիսուսամեակ Երեանի Հայոց թեմական Հոգևոր
Դպրանոցը», Թիֆլիս, 1888 թ., V: — Այսուեղ հաշվի են առնւած
«Յիսուսամեակ»-ից յետով եղած փոփոխութիւնները ևս:

45 տեսուչներ և տեսչի պաշտօնակատարներ²⁰⁾. Ֆջին ն-է վերածելով սրանց պաշտօնավարութեան ընթացքը՝ կստանանք—1 դարբի 7 ամիս...

Ըստ վկայութեան Երևանի Հայոց Թեմական Հոգևոր Դպրանոցի 18^{89/90} ուսումնական տարեշրջանի ուսուցչական ժողովների ծեռադիր արձանագրութեան և վերջին պատճ տարրուայ ընթացքում հայոց լեզու աւանդել են 19 (քառանուն) դասասու, ուրիշ առարկաների փոփոխութիւնները եղել են եթէ ոչ աւելի, ոչ պակաս)՝²¹⁾...

Այդքան երերուն է մեր դպրոցական օրէցօրը...

Մի հանգամանք ևս.

Հայ դպրոցական պատմական անցեալին նվիրած մի պատկառելի աշխատառութեան մէջ կարդում ենք՝

«Բացական և +առաջական հայոց է առահանջում ժամանակակից տարրութեան դպրոցուցանոցը։ Ո՞ր բարեխաջող պայմանների տակ պատրաստէր նա այդ մարդիկը, երբ իւր մէջ սահպուած է ընդունելու ազգի այնպիսի գաւակներ, որոնց տունը, ընտանեկան կեանքը, շրջապատող բարեկամները, գրացիները, ամբողջ, ամբողջ նրա կեանքը դպրանոցում առաջի հակառակն է թելադրում նրանց։ Կարճ զաւակներ, որ բայլովին հակառակ պատճեն են տեսնում դպրանոցի կեանքի և նրանից դուրս կեանքի մէջ. մէ առ իսկակի, խրատ, քաջալերութիւն,

²⁰⁾ Տես Ստ. Մալիսանեան «Համառու պատմութիւն Ներսիսեան Հոգևոր Դպրանոցի ծօմանասունեմինդամեալ գոյութեան», Թիֆլիս, 1900 թ.: — Ստեղի ի նկատի է առնաւծ լետաղայ ժամանակը ևս:

²¹⁾ Տես «Երևանի Հայոց Թեմական Հոգևոր Դպրանոցի 18^{89/90} ուսումնական տարեշրջանի Ուսուցչական ժողովների արձանագրութիւններ» (ծեռադիր), էջ 43—44:

յորդոր և այն բաներ է լսում նա, մէս առ առ հայնոյանք, կոիւ, ծեծ, անհամ զուարենութիւններ և այն և այն, մէ առ մաքրութիւն, հշտութիւն, աղնութիւն, խաղաղութիւն, սիրոյ և միութեան հրահանդներ և հրաւերներ են կարդում նրան, մէս առ նա տեսնում է կեղասառութիւն, աղաւեղութիւն, խոռվութիւն, ուխտազմանցութիւն, խաբեբացութիւն, ատելութիւն, ոխակալութիւն, բաժանմունք և այն... Ծնողը պահանջում է դպրանոցից ամենայն ինչ, բարձում է նրա ուսին բոլոր բեռք, իսկ ինքը մատով իսկ չէ կամենում մերձենալ նրան»²²⁾...

Ըստ նոյն վկայութեան՝ դպրանոցի «Ճանապարհը մի բով է, որտեղից բաւական է որ մի անմեղ անփորձ մանուկ գելթ մի անգամ անց կենայ, որ ծանօթանայ կեանքի բոլոր ստոր վարմանց վարք ու բարքի հետ. նա (Ճնողը) այդ հանապարհից դպրանոցն ազատելու, հարիւրաւոր անմեղների ամենօրեայ վարակումը բուժելու համար ոչ մի ճար, ոչ մի հնար չէ մտածում»²³⁾...

Ես տեսել եմ այդ ճանապարհը²⁴⁾—ստիական լրկափութեան, ստիական բնազգների այդ խկական մէլիգամբ...

«Ծնողնելը, — ասում է Երևանի Հայոց Թեմական Հոգևոր Դպրանոցի 189^{2/3} ուսումնական տարեշրջանի

²²⁾ Տես «Յիսուսամեակ Երևանի Հայոց Թեմական Հոգևոր Դպրանոցի», էջ 284—285:

²³⁾ Տես իբի., էջ 285:

²⁴⁾ Տես իմ «Երևանի Հայոց Թեմական Հոգևոր Դպրանոցի Հասարակութիւնը», էջ 25:— Յ. Գ.՝ Դպրանոցի «ըաղարի հայարնակ և յարմար տեղերից մէկում» նոր շնորհ հարցը վերջերս դրել է (տես «Մշակ», 1907 թ., № 83):



ուսուցչական ժողովների ծեռապիր արձանուղրութեան
մի կառը,—առհասարակ խիստ անտարբեր են դէպի
ուսումնարանը, հետեւաբար և դէպի իրենց որդոց
գպրոցական պարապմունքները. իրենք հասարակ դա-
սակարգից լինելով, մեծ ճառամբ, չեն կարողանում և
երբեմն կարողներն անդամ չեն լրմունում, որ տան և
ընտանիքի տուած յարաբերութիւններով օժանդակեն
իրենց որդոց պարապմունքներին: Միւս կողմից աղ-
քատ ճնողների որդիքն ստիպուած են նախ լրնասանե-
կան առօրեայ հոգսերը հոգալ—շուկայ երթալ, շուր
բերել—և ապա թէ նոր իրենց գպրոցական պարտա-
կանութիւնը կատարել, որն արդէն երկրորդական,
երրորդական մի գործ է համարւում: Առաւել ևս
դժուար է այն աշակերտների զրութիւնը, որոնք
օտարչ բանն են մնում, մանաւանդ գպրոցական գոր-
ծին անտեղեակ մէկի մօտ—այդ դէպրում աշակերտը
պարտականութիւն ունի և տան ճառապական գործերը
կատարել: Հետեւանքը գպրոցի համար պարզ է»²⁵⁾) ...
Եւ այն, և այն...

Ահա այդքան բարդ և ճանրակշու հարցեր են
բարձրանում այսօր մեր առաջ իրենց կրկնակի շեշտ-
րով... Եւ այդ ամենը պէտք է կանոնաւորել, բարե-
լաւել, խնամել...

Հայ գպրոցի ցայսօրւայ անցեալը, պատմական
կեանքն է սնուցել-արտադրել այդ ամեն հարցերը:
Եւ հայ գպրոցի դոյն այդ՝ ցայսօրւայ պատմական

²⁵⁾ Տես «Երևանի Հայոց Թեմական Հոգեոր Դպրանոցի
1892/3 ուսումնական տարեշրջանի Ուսուցչական ժողովների
արձանագրութիւններ» (Ժեռագիր), էջ 51՝ Ուսուցիչ Ս. Սմբա-
տեանի խօսքերը:

անցեալը շեշտում է, որ գպրոցական ապագայ կանո-
նադրութիւնը չի կարող անտես առնել գպրոցի ցան-
կապատից գուրս ցայսօր ընթացող կեանքը, գպրոցա-
կան ապագայ ծրագրը չի կարող անտես առնել տի-
րող կեանքի գործնական պահանջները: Այլապէս՝ դրա-
բոցը կկտրւի կեանքից, իրականութիւնից՝ մատնելով
շարժուն շրջապատից զատւած կազմապարազին ան-
շարժութեան: Կեանուից ապրել և դոյն այդ կեանուի
վրա ապրել—ահա մեր գպրոցական ցայսօրւայ ան-
ցեալից հետեւյնելիք ժողովական դպրոցի նորէալը:

Եւ որպէս զի վերջ արւի անցեալի փորձանքներին
և ժողովրդական գպրոցի այդ իդէալն իրականանայ
հայ գպրոցի յարկի տակ, այսօր մեր առաջ դրած
«կենաց շաւկով»-ը հարթելու հարցին պիտի մօտենալ
հաստատ ու անշտապ քայլերով: Հաստատ քայլելու
համար պէտք է դիտենալ գործի անցեալը, տեղեակ
լինել մեր գպրոցական գործի ցայսօր ամբարած փոր-
ծին. անշտապ քայլելու համար պէտք է զգալ ճան-
րագոյն պատմախանատութիւնն հասարակութեան
ապագայի նկատմամբ, — մի ապագայ, որը, ինչպէս
վերը շեշտուած է, ծրարւած է նոյն խակ գպրոցի գոր-
ծում... .

Ես շեշտում եմ հաստատ և անշտապ +այլըլու- ան-
համաժեղութիւնը, որովհետեւ մեզանում, ըստ երեսոյ-
թին, գեռ լրիւ չեն լրնաելացել այն մարին—թէ հան-
կալութիւնը ևս հասնաժիւթիւնը է...

II.

ԺԱՄԱՆԱԿԱԽՈՐ ԿԱՆՈՆՆԵՐ

ՀԱՅ-ԼՈՒՍԱՀՈՐՉԱԿԱՆ ԵԿԵՂԵՂԻՆԵՐԻ ԳՈՂՔԵՐԻ Կառավարութիւնը յանձնուում է ծխական հոգաբարձութիւններին, բաղկացած երէցփոխից և անդամներից՝ թւով 2—4, հաւասար իրաւունքներով, որոնց ընտրում են ծխականներն իրենց միջից 3 տարի ժամանակով:

«1) Հայ-լուսահորչական Եկեղեղիների գողքերի կառավարութիւնը յանձնուում է ծխական հոգաբարձութիւններին, բաղկացած երէցփոխից և անդամներից՝ թւով 2—4, հաւասար իրաւունքներով, որոնց ընտրում են ծխականներն իրենց միջից 3 տարի ժամանակով:

«2) Ծխական հոգաբարձութիւնների անդամների ընարութիւնը կասարւում է ծխականների ընդհանուր ժողովներում ներկայ եղողների ձայների մեջամասնութեամբ և հաստատւում է թեմական առաջնորդից:

«3) Ծխականների ընդհանուր ժողովներում ձայնի իրաւունք ունեն ծուխին պատկանող արական սեռի 25 տարի հասակ ունեցող բոլոր անհատները, որոնք վայելում են օրինական իրաւունք հասարակական պարտաւորութիւններ-պաշտօններ կատարելու նկատմամբ և եկեղեցու ծխականներ են հաշւում ոչ պահան երկու տարի:

«4) Ծխական հոգաբարձուների վրայ պարտաւորութիւն է զրւում՝ հոգ տանելու պատշաճաւոր թոլուութեամբ հիմնելու գողոցներ, հիւանդանոցներ, անկելանոցներ, ապաստարաններ և այլ բարեգործական հաստատութիւններ:

«5) Եթէ Եկեղեցական եկամուտները բաւարարութիւն տալու չլինեն՝ հոգալու ծխերի բոլոր կարիքները, հոգաբարձութիւնը կաղմում է առաջադրութիւն ծխականների վրայ որոշ տուրք նշանակելումասին. այդ տուրքը կարող է լինել միանուագ կամ մշտական, դրամով կամ իրերով: Այդ առաջադրութիւնն առաջարկուում է ծխականների ընդհանուր ժո-

կառավարիչ սենատին օգոստոսի 1-ին տուաժ կայսերական ուկազի շնորհիւ մեր առաջ բացւած «նոր շաւղի սկզբին» նւիրածս յօդւածում²⁾՝ վերապահելով ինձ իրաւունք՝ ապագայում դառնալ «Ժամանակաւոր կանոններ»-ին, ասացի, որ այդ պաշտօնական նորման իր երեք զատ-զատ կէտերում շօշափում է մեր Եկեղեղիների, թեմական հոգեոր գողրանոցների և վանքերի կալւածների վարչութեան հարցերը:

Դիմենք «Ժամանակաւոր կանոններ»-ի այդ երեք զատ-զատ կէտերին:

III.

«Ժամանակաւոր կանոններ»-ի առաջին կէտը կանոնաւորում է հայ Եկեղեցներն պատկանող գողքերի հարցը, և այն՝ այսպիսի §§ -ներով.

¹⁾ Արտասպառում է «Նոր-Դարս»-ի 1905 թւի №№ 11, 14, 19 և 20 - ից:

²⁾ Տես վերը, էջ 4:

դովի բննութեանը, և, սրա կողմից ընդունուելուց և այդ առթիւ վճիռ կայացնելուց յետոյ, դառնում է պարտադիր — պարտառորական համաձայնութիւն յայտնողների համար:

(6) Հոգաբարձութեան կազմած իւրաքանչիւր սարուայ ելեմտի նախահաշիւր սատանում է ծխականների ընդհանուր ժողովի հասանութիւնը և հաստատում է թեմական առաջնորդից:

(7) Ծխական հոգաբարձութիւնները պարտառուին հաշիւր տալ թէ վիճակաւոր առաջնորդին և թէ ծխականների ընդհանուր ժողովներին, որոնք իւրաքանչիւր տարի ընտրում են առանձին վերասառուցող յանձնաժողովներ հաշիւներն ստուգելու համար»:

Ահա զրանք են «Ժամանակաւոր կանոններ»-ի Ա. կէտի §§-ը՝ համաձայն մեր ձեռքը հասած թարդմանութեան³⁾:

Համաձայն պետական օրէնքի XI հաստորի I մասի (հրատ. 1896 թ.)՝ մեր եկեղեցու ծուխը, որին յանձնած է առաջնի մասնաւոր հակողութիւնը և կառավարութիւնը, տիրանում է իր այդ իրաւունքներին՝ յանձին իր ընտրած ա) երէցփոխի (յօդ. 1225, 1227) և բ) եկեղեցու ոչ-կուսակրօն հոգեւորական կազմի (IX հաստ., հրատ. 1899 թ., յօդ. 500): Մինչդեռ այսօր՝ շնորհիւ «Ժամանակաւոր կանոններ»-ի՝ Եվանդէլի վեցունքութիւնը է, և ծուխը՝ երէցփոխին ցայսօր իւրացւածի նկատմամբ՝ տիրանում է իր իրաւունքներին՝ յանձին իր ընտրած ծխական հոգաբարձութեան յահանգարքութիւնը՝ նախահաշիւր սատանուր ժողովների ընդհանուր ժողովին՝ ի ընդունութիւնը և ի հաստատութիւնը (§ 5), դ) կազմել իւրացւած ծխական հոգաբարձութեան իւրացւած են հետեւալ պատրաստութիւնները՝ ա) կառավարել հայլուսաւորչական եկեղեցիների գոյքերը (§ 1), բ) պատշաճաւոր թոլուտութեամբ հոգ տանել՝ հիմնելու դրաբոցներ, հիւանդանոցներ, անկելամոցներ, ապաստարաններ և այլ բարեգործական հաստատութիւններ (§ 4), գ) առաջադրութիւն կազմել ծխականներից որոշ տուրք նշանակելու մասին, եթէ եկեղեցական եկամուտները բաւարարութիւն տալու ըլինեն ծխերի կարիքները հոգալու, և առաջարկել այդ առաջադրութիւնը ծխականների ընդհանուր ժողովին՝ ի ընդունութիւնը և ի հաստատութիւնը (§ 5), դ) կազմել իւրա-

նեան, որի միայն մի անդամն է երէցփոխը: Ասել է երէցփոխի նախակին իրաւունքներն ու պարտաւորութիւններն այսօր վերցւում են երէցփոխից և տրւում ծխական հոգաբարձութիւններն (§ 1): Հետեւապէս՝ մինչդեռ ցայսօր ծուխի և հոգեւոր իշխանութեան մէջ՝ իր հաւատարմատար (երբեմն՝ լիազօր) առաջնի (յօդ. 1229) և իրը գործակատար վերջնի (յօդ. 1170, 1222) կանգնած էր երէցփոխը, այսօր՝ շնորհիւ «Ժամանակաւոր կանոններ»-ի՝ այդ ամենը, թերեւս շատ չնչին սրբազնութեամբ, իւրացւած է ծխական հոգաբարձութիւններն (§§ 1, 2, 4, 6, 7): Վերջնիս իւրացւած է (§ 1) իրաւունք՝ կառավարել հայ-լուսաւորչական եկեղեցիների գոյքերը, սակայն հետեւալ սահմանափակումներով՝ և նէ թեմական առաջնորդը կհաստատած ծխական ընդհանուր ժողովներում ընտրւած ծխական հոգաբարձութեան անդամներին (§ 2), և նէ թեմական առաջնորդը կհաստատի տարւայ ելեմտի նախահաշիւր (§ 6): Ապա՝ այդ իրաւունքին կից՝ նոյն ծխական հոգաբարձութեան իւրացւած են հետեւալ պատրաստութիւնները՝ ա) կառավարել հայլուսաւորչական եկեղեցիների գոյքերը (§ 1), բ) պատշաճաւոր թոլուտութեամբ հոգ տանել՝ հիմնելու դրաբոցներ, հիւանդանոցներ, անկելամոցներ, ապաստարաններ և այլ բարեգործական հաստատութիւններ (§ 4), գ) առաջադրութիւն կազմել ծխականներից որոշ տուրք նշանակելու մասին, եթէ եկեղեցական եկամուտները բաւարարութիւն տալու ըլինեն ծխերի կարիքները հոգալու, և առաջարկել այդ առաջադրութիւնը ծխականների ընդհանուր ժողովին՝ ի ընդունութիւնը և ի հաստատութիւնը (§ 5), դ) կազմել իւրա-

³⁾ Տես «Մշակ», 1905 թ., № 160: — Տես ևս «Նոր-Դար», 1905 թ., № 2:

բանչեւ տարւայ ելեմտի նախահաշիւր և ներկայացնել այն ծխականների ընդհանուր ժողովին՝ ի հաւանութիւն և թեմական առաջնորդին՝ ի հաստատութիւն (§ 6) և ե) հաշիւ տայ՝ թէ վիճակաւոր առաջնորդին և թէ ծխականների ընդհանուր ժողովներին (§ 7):

Այդպիսով, ինչպէս ցայսօր երէցփոխն ունէր վարչական ծխայն ծուխի՝ իբր իրեն ընտրողի (յօդ. 1227) և երգեմն նոյն իսկ լիազօր հաւատարմութիւն տւողի (յօդ. 1229) վերաբերեալ, իսկ հոգեոր իշխանութեան վերաբերեալ նա ունէր միայն պարագաներուն միայն ծխայն ծուխի՝ իրաւունքներ, — այսօր՝ շնորհիւ «Փամանակաւոր կանոններ»-ի՝ դոյն այդ դիրքն իւրացւում է ծխական հոգաբարձութեան, հարկաւ, ի բաց առած (§§ 6, 7) լիազօր հաւատարմութեան վերաբերեալ շեշտը (յօդ. 1229) — այդ՝ ցայսօր տեղի ունեցած այնքան տարօրինակ, անորմալ ընդհարումների թերևս զիսաւոր պատճառ - առիթը: Ապա ինչպէս ցայսօր երէցփոխը, լինելով իսկ անմիջական մասնաւոր կառավարիչ եկեղեցու դոյքը (յօդ. 1225), միշտ՝ իր ամեն գործողութիւններում կախւած եր հագելով իշխանութեան (յօդ. 1222, 1188¹, 1, 2, 4, 14, 15) և պիտի ներկայանար հոգեոր իշխանութեան առաջ՝ ոչ երէք իր, այլ՝ ծուխի՝ նախադերով ցանկութիւններով (օնք вообще действуетъ какъ уполномоченный отъ лица прихода — բացի аյն դէպք, երբ ծուխը տալիս էր նրան լիազօրութիւն (յօդ. 1229), — այսօր՝ շնորհիւ «Փամանակաւոր կանոններ»-ի՝ դոյն այդ դիրքն իւրացւում է (§§ 5, 6) ծխական հոգաբարձութեան, դարձեալ, հարկաւ, ի բաց

առած (§§ 6, 7) լիազօր հաւատարմութեան վերաբերեալ շեշտը (յօդ. 1229):

Մենք ողջունում ենք «Փամանակաւոր կանոններ»-ի այդ նորութիւնը, որովինեաւ այդպիսով մի անգամ ևս ընդգծում է պետական օրէնքի խելացի իմաստը — թէ երէցփոխը «Նշան անելու իրաւունք չունի առանց ծովսի, այս անգամ՝ առանց ծխական հոգաբարձութեան, որոշման և թեմական առաջնորդի հաւանութեան — հաստատութեան (§§ 6, 7):

Եկեղեցու մասնաւոր հակողութեան և կառավարութեան կից՝ պետական օրէնքն իւրացրել է հայ Եկեղեցական ծուխին միայն և եթ հետեւեալ իրաւունքներ՝ — ընտրել կաթողիկոս (յօդ. 1118, 1120), Եկեղեցու երէցփոխ (յօդ. 1227) և ոչ-կուսակրօն հոգեկորական կաղմը (IX հատ., հրատ. 1899 թ., յօդ. 500) և տարւայ վերչը լսել երէցփոխի հաշիւր (յօդ. 1232), որը նոյնութեամբ (օչ ուշեց) ներկայացւում էր թեմական կօնսիստորիալին (յօդ. 1232), ասել է՝ մի կուլտուրա հիմնարկութեան: Մինչդեռ այսօր՝ շնորհիւ «Փամանակաւոր կանոններ»-ի ծխական հոգաբարձութիւնների հաշիւր տրւելու է վիճակաւոր առաջնորդին (§ 7), ասել է՝ անհագական անձնաւորութեան: Հետեւապէ՝ այսօր՝ շնորհիւ «Փամանակաւոր կանոններ»-ի թեմական առաջնորդը՝ և հաստատելու է տարւայ ելեմտի նախահաշիւր (§ 6), և ստանալու է հաշիւր (§ 7):

«Փամանակաւոր կանոններ»-ի այդ վերչին շեշտը (§ 7), անշուշտ, հիմնւում է պետական օրէնքի յօդ. 1170 և 1222 վրա, որոնցով թեմական առաջնորդներին իւրացւած է լիազօրար հսկողութիւն — զեկա-

վարութիւնը (օճպի համար—ոլոնե նախալինի) իրենց թեմերի եկեղեցիների գոյքերի պէս-պէս կառավարութեան, միաժամանակ և պատասխանատութիւնը բաղաքական բարձրագոյն և իրենց հոգեոր հշխանութիւնների առաջ (յօդ. 1117, 1170, 1222): Սակայն, այդ այդպէս լինելով, մենք չդիտենք՝ ի՞նչ-պէս պիտի լրացնեն իրենց պարտաւորութիւնները թեմական կոնսիստորիաները, որոնց նոյն պետական օրէնքով վերապահւած է թեմի եկեղեցիների բարեհարգութիւնը և գոյքի կառավարութիւնը (սուրբութիւնը), եկեղեցիների դրամականն ամեն ամիս քննելնշտելը, և էջմիածնի սինոդին ամեն տարի մանրամասն հաշիւ տալը (յօդ. 1188՝ 2, 4, 14, 15): Ահշուշտ, թեմական կոնսիստորիաներին պետական օրէնքի այդ յօդւածով վերապահւածի մէջ պիտի տեղի ունենան փոփոխութիւններ: Սակայն, ևս չդիտեմ, ի՞նչ է անելու, դիցուք, Երևանի փոխ-թեմակալն իր թեմի հարիւրաւոր եկեղեցիների, ուրեմն և հարիւրաւոր ծխական հոգաբարձուների հաշիւները: Մի անձնաւորութեան ոյժերից վեր է այդքան հաշիւների հետ գործ ունենալը, ԵՌԷ ի նկատի առնելու լինենք, որ թեմական առաջնորդներն այնպէս էլ ծանրաբեռնած են բազմաւեսակ գործերով և ԵՌԷ հաշիւները ստորագրւելու են բարեխիղն ուսումնասիրութիւնից յետոյ: Ես կարծում եմ, որ այդ հաշիւները «Ժամանակականական» կանոնները՝ գոյութեան օրով ևս յանձնելու են թեմական կոնսիստորիաներին առաջնորդներին ՅԵՐԵՎԱՆ հետևապէս՝ ինձ համար անհասկանալի է դոյն այդ «կանոններ»-ով ստեղծւած պարունակ:

Ապա. ինչպէս պետական օրէնքի XI հաստ. I մասի

(Կրաստ. 1896 թ.) յօդ. 1232-ը, նոյնպէս և «Ժամանակաւոր կանոնների»-ի § 7-ը չեն պարզում—իսկապէս ինչու համար է ներկայացւում հաշիւը ծխականների ընդհանուր ժողովին, բանի որ՝ ըստ յօդ. 1232՝ նոյն հաշիւը ԿԱՅՆ-ԵՐԵՎԱՆ (օւն ութեան) է ներկայացւում թեմակալ առաջնորդին, իսկ «Ժամանակաւոր կանոններ»-ի § 7-ը չի պարզում՝ ի՞նչ նշանակութիւն ունի առաջնորդի համար ծխականների ընդհանուր ժողովում հաշիւ առթիւ եղած թեր և դէմք: Այստեղ խօսքս այդ թեր և դէմք ոչ թէ բարոյական նշանակութեան մասին է, այլ՝ պաշտօնական զօրութեան:

Բայց վերը շեշտածս նորութիւնը, «Ժամանակաւոր կանոններ»-ը մացնում են մեր մէջ ցայսօր չեղած մի շարք ուրիշ նորութիւններ, երբեմն տալիս են մեր մէջ եղածի վոփոխութիւնը: Սրանք են՝ (Եկեղեցական) ծխական հոգաբարձութեան կազմը (§ 1), ընտրութեան եղանակը (§ 2), «իրաւատեր ծխական», խօսքերի իմաստը (§ 3), ծխական հոգաբարձութիւններին բացորշակիի իւրացրած պարտաւորութիւնները՝ դպրոցական և այլն հիմնարկութիւնների նկատմամբ (§ 4) և «պարապագիր - պարտաւորական» տուրքի գաղափարն ու վերջնիս իրականացնելու եղանակը (§ 5):

Ես ի բոլոր սրաէ ողջունում եմ այդ ամեն նորութիւնները՝ բայց վերջնից: Դարերի ընթացքում հայ ժողովուրդը մնունդ է մատակարարել իր եկեղեցուն և եկեղեցու ուխան իրազորձող հիմնարկութիւններին և նոյն իսկ՝ զատ-զատ անհասկանալին, և ևս չդիտեմ ի՞նչ կարիք կայ այսօր օվենին կոնարողին, օվենին ճնշման ենթարկել ան, ի՞նչ ցայսօր արտադրել է իր հա-

յազգիներիս սրտի աղնւաղոյն լարերի շարունակ կայուն շեշտ.. .

Ինչ և իցէ: Թերևս իմ տեսակէտը, իմ բմբոնումը սխալ է: Սակայն զոնէ ես — իսկ ես համողւած եմ, որ միայնակ չեմ մնալու այդ հարցում — անհրաժեշտ եմ համարում հրապարակով յայսնել՝

Իբր հայ ես իմ բարոյական պարասորութիւնս կհամարեմ ձգել իմ լուծան հայ դպրոցական և այն գործի գանձանակը, սակայն այն օրը, երբ ինձ կհարկադրեն մի անգամ լնդմիշտ որոշել քանի լուրի պիտի տամ այդ գործի համար տարեկան թէ ամսական զգուշացնելով, որ, եթէ որ և է պատճառով այս կամ այն անգամը տալու չլինեմ խոստացածս դրամը, ինձ ըրնական պատասխանաւուն-նշան կենթարկեն⁴⁾ — այդ օրն ես ունիմ ասելու մի խօսք՝ Եթէ այդպէս է, թող ինքն օրէնքը որոշի թէ ինչքան պիտի տայ այդ նպատակի համար ամեն մի հայ.. .

[Յ. Գ.:

Այստեղ հարկ է նկատել, որ, ճիշտ է, նախ քան 1905 թւի օգոստոսի 1-ի «Ժամանակաւոր կանոններ»-ի լոյս տեսնելը «պարտադիր տուրք» առէլիք՝ այդ «Կանոններ»-ի իմաստով չկար ցայտ տիրող պետական օրէնքի մէջ, սակայն «պարտադիր տուրք»-ի ժամանակը նախատեսնւած էր այդ տեղ ևս, թող թէ միայն և եթ մեր թեմական հոգեոր դպրանոցների

⁴⁾ Յ. Գ.: — Փաստերն իրենց սպասել չտւին: «Փայլակ»-ին (1907 թւի № 8) գրում են Արդահանից «...տեղիս հայ հասրակութեան մի մասը զանազան պատճառարանութիւններով հրաժարում է դպրոցական տուրքերը վճարելուց... Համախօսականի զօրութեամբ չը տողներին պիտի դատարանին լանձնեն...»

նկատմամբ, և այն առաջանափակ մտքով: Այսպէս պէտ օրէնքի XI հասորի I մասում (հրատ. 1896 թ.), ի միջի այլոց, զրի է առնւած հետեւալ տեկստով⁵⁾.

«(Յօդ.) 1209. Во всѣхъ церквахъ и монастыряхъ той епархіи, къ коей принадлежить семинарія, производится обыкновеннымъ порядкомъ сборъ въ пользу оной, и собранныя деньги отсылаются каждые три мѣсяца въ надлежащую Консисторію, для доставленія семинаріи. Сверхъ того монастыри, ревнующіе къ пользѣ Армяно-Грегоріанской церкви, приносятъ ежегодно изъ своихъ доходовъ особыя суммы на содержаніе ихъ епархіальной семинаріи. — Թարգմանութեալ Յօդ. 1209. Այն թեմի բոլոր եկեղեցիներում և վանքերում, որին պատճառում է սեմինարիան (հոգեոր թեմական դպրանոցը), յօդուտ վերջնիս, բնգունւած կարգով, կապահ-ն-է ժողովարան-նի-ն և ժողովւած դումարներն ուղարկուում են ամեն երեք տիս համապատասխան կոնխատորիալին՝ սեմինարիային յանձնելու համար: Բայցի այդ, վանքերը՝ հոգածով հայ-լուսաւորչական եկեղեցու շահը՝ յարկացնում էն ամեն գույն երենց եկամուկց յարու-է գումարնե՛ւ թեմական սեմինարիաների պահպանութեան համար»:

«(Յօդ.) 1210. При выдачѣ жалованія чиновникамъ и канцелярскимъ служащимъ Армяно-Грегоріанскихъ Консисторій и Духовныхъ Правленій, равно учителямъ и другимъ лицамъ при учебныхъ духовныхъ заведеніяхъ, во всѣхъ епархіяхъ произ-

⁵⁾ Տես իմ «Հայոց Թեմական Հոգեոր Դպրանոցների կանոնադրութեան նախագիծը», Մոսկա, 1902 թ., էջ 7 և 11 և Յաւելած VIII:

водится въ пользу семинарій, для чрезвычайныхъ ихъ потребностей, вычетъ по два процента съ окладовъ выше ста пятидесяти рублей. — *Թարգմանութեան Ավագ Յօդ.* 1210. Հայ-լուսաւորչական Կոնսիստորիաների և հոգեոր Կառավարութիւնների պաշտօնեաներին և կանցելեարակիլ ծառայողներին, որպէս և բոլոր հոգեոր դպրոցների կազմին պատկանող ուսուցիչներին և այլ անձանց ուժիկ տրւելիս՝ բոլոր թեմերում հանունում է Երևան պահանջման հարցում յաջուածական անձինքների (թեմական հոգեոր դպրոցների) արտակարդ պէտքերի»⁶⁾:

Բացի այդ, նոյն պետական օրէնքը պարունակում է իր անունում հետեւեալ շեշտերը և»

«(Յօդ.) 1141⁷ 8. Къ кругу дѣйствія Эчміадзинскаго Армяно-Грегоріанскаго Синода, по части распорядительной, принадлежатъ:... разрѣшеніе въ

⁶⁾ Ի դեպ է լիշել պետ. օրէնքի XI հատ. I մասի (հրատ. 1896 թ.) յօդած 1254-րդը ևս, որի տեկստն է՝

«1254. При выдаче жалованія чиновникамъ и канцелярскимъ служителямъ Армяно-Грегоріанскихъ Консисторій и Духовныхъ Правленій, равно учителямъ и другимъ лицамъ при учебныхъ духовныхъ заведеніяхъ, во всѣхъ епархіяхъ, производится въ кассу для призрѣнія вдовъ и сиротъ Армянского духовенства вычетъ по одному проценту съ окладовъ до ста пятидесяти рублей. — *Թարգմանութեան Ավագ Յօդ.* 1254. Հայ-լուսաւորչական Կոնսիստորիաների և Հոգեոր Կառավարութիւնների պաշտօնեաներին և կանցելեարակիլ ծառայողներին, որպէս և բոլոր հոգեոր դպրոցների կազմին պատկանող ուսուցիչներին և այլ անձանց ուժիկ տրւելիս՝ բոլոր թեմերում հանունում է մի տոկոս մինչ ցհարիւր լիսուն բուրի ուժիկներից՝ յօդուած Հայ հոգեորականութեան ալրիներին և որբերին ինամող կասայի (գանձարանի):»

епархіяхъ сбора добровольныхъ приношений въ пользу монастырей, церквей, семинарій и богоугодныхъ заведеній, не принадлежащихъ къ вѣдомству тѣхъ епархій... — *Թարգմանութեան Ավագ.* 1141⁸ 8. Եշմիածնի Հայ-լուսաւորչական Սինոդի գործառնութեան շրջանին՝ բայց վարչական (կարգադրական) մասի պատկանում էն... թոյլ տալ թեմերում կամաւոր տուրբերի ժողովարարութիւն՝ յօդուած գոյն թեմերին պատկանող վանքերի, Եկեղեցիների, սեմինարիաների (թեմական հոգեոր դպրանոցների) և աստւածահանուպ հիմնարկութիւնների...»

«(Յօդ.) 1188⁹ 7. Къ кругу дѣйствій епархіальныx Консисторій Армяно-Грегоріанской церкви принадлежатъ:... разрѣшеніе сбора добровольныхъ приношений на пользу Армяно-Грегоріанскихъ подвѣдомственныхъ монастырей, церквей, семинарій и богоугодныхъ заведеній, но лишь въ предѣлахъ своей епархіи... — *Թարգմանութեան Ավագ.* 1188⁹ 7. Հայ-լուսաւորչական Եկեղեցու թեմական Կոնսիստորիաների գործառնութեան շրջանին պատկանում էն... թոյլ տալ կամաւոր տուրբերի ժողովարարութիւն՝ յօդուած ստորագրեալ Հայ-լուսաւորչական վանքերի, սեմինարիաների (թեմական հոգեոր դպրանոցների) և աստւածահանուպ հիմնարկութիւնների, սակայն միայն և եթ իրենց թեմերի սահմաններում...»

Պետական օրէնքի (XI հատ. I մաս, հրատ. 1896 թ.) այդ յօդածների իմաստը պարզ է: Սրանցով դիւրութիւն էր արւում միանալու համար ն-էլքնեցին (կամաւոր բուրի — id) կից՝ ժողովրդականացնել մեղանում աստրելան կանոնական ն-էլքնեցի (պարագաների բուրի — id)

գաղափարը՝ ևս, և այն և որոշ թեմերում — զառ-
զատ, և բոլոր թեմերում — հանուր առմամբ, — մի
դիւրութիւն, որը սական մեզանում շարունակ մնա-
ցել է անոք առաջած՝⁷⁾:

Արդ, եթէ հանդիպադնելու լինենք պետ. օրէնքի
XII հատ. I մասի (հրատ. 1896 թ.) վերը բերածս
(1209, 1210) յօդւածները 1905 թւի օգոստոսի 1-ի
«Ժամանակաւոր կանոններ»-ի Ա. մասի § 5-ին, կառա-
նենք, որ «ժամանակաւոր կանոններ»-ը գաղիս են
զրէ առնելու պետական օրէնքով որոշ սահմանադաշտ
(պաշտօնական) շրջանի և նպաստակի համար դժամ
գաղափարը՝ մեր այլ (Եկեղեցական - ծխական) զրպ-
րոցների և այլն նկատմամբ ևս՝ կապելով այն մնա-
յուն տարրի՝ «Եկեղեցիների ծխականների» հետ,
սրան կից արդարութեաւ վերապահելով այդ «առուրք»-ին
նախկին պետական օրէնքի (յօդդ. 1209—առաջին կէ-
որ, 1141՝ 8 և 1188՝ 7) գժամ «համառոր» յատկա-
նիշը:

Յիրաւի՛: «Ժամանակաւոր կանոններ»-ի Ա. մասի
§ 5-րդն այսպէս էլ շեշտում է «առուրքը... դառնում
է պարտադիր - պարտաւորական համայացնութեան յատ-
նողների համար»: Սական, մինչդեռ ըստ պետական
օրէնքի XII հատ. I մասի (հրատ. 1896 թ.) վերը
բերածս յօդւածների (1209—առաջին կէոր, 1141՝ 8
և 1188՝ 7) «պարտադիր - պարտաւորական առուրք»
վճարելու «համաձայնութիւն» աւողը պատասխանա-

⁷⁾ Այդ առմիւ տես «Նոր-Դար», 1902 թ., №№ 170, 172,
174, 175, 177, 194, 195 և 198 - իւմ «Մեր թուժական Հո-
գեոր Դարանոցների եկամտի ցայսօր անտես առնւած աղբիւրնե-
րը» յօդւածը:

առւ էր միայն և եթ Նշ հագլւոր իշխանութեան առաջ,
այսօր, շնորհիւ «Ժամանակաւոր կանոններ»-ի Ա.
մասի § 5-ի, պատասխանաւութեան ենթարկելու
իրաւունքն իւրացւած է 1905 թ-ի օդուպոսի 1-ի պե-
տական օրէնք՝ «Ժամանակաւոր կանոններ»-ին...

Թէ ի՞նչ - ի՞նչ հեռանկարներ է բայցւում պետական
իշխանութեան առաջ 1905 թւի օգոստոսի 1-ի
օրէնք՝ «Ժամանակաւոր կանոններ»-ի Ա. մասի § 5-
ով — այդ մասին մենք կարող ենք, առաջնց տարւելու
արդի, մինչ այս - մինչ այն, երերուն իրականութեամբ,
ենթադրութիւններ առել՝ ինկատի առնելով անցեալի
փորձը, երբ պետական իշխանութեան ձեռքով մեր՝
իսկական առաջարկանի վերածած գլուխոցների հա-
մար նոյն պետական իշխանութիւնը պահանջում էր
վճարել նախկին վճարած առուրքերը (շէնքերի, կալւած-
ների արդիւնքը և այլն):

Արժէ այդ առթիւ մտարել գէթ լուսաւորու-
թեան մինխարութեան և մեր հոգեւոր իշխանութեան
միջև եղած զատարանական լինդհարումները և այլն...]

Դրանով ես վերջացնում եմ «Ժամանակաւոր կա-
նոններ»-ի Ա. կէտի մասին ասելիքս⁸⁾:

Անցնում եմ «Ժամանակաւոր կանոններ»-ի երկրորդ
կէտին:

⁸⁾ Ի դէպ. Եկեղեցական ծուխի և այլն մասին աւելի ման-
րամասն տես «Նոր-Դար»-ի 1902 թի №№ 77 և 78 - իմ «Հայոց
եկեղեցական ծուխի իրաւումնեան խնդիրը» յօդւածը: Տես ևս
«Նոր-Դար», 1902 թ., №№ 120, 121, 122 և 1903 թ. №№
101, 102, 105, 106, 116, 117, 118, 119, 120 — իմ «Ու-
շագրաւ առաջարկ» (Հայաւոանեայց առաքելական սուրբ Եկեղե-
ցու ծխական կանոնադրութեան առմիւ): յօդւած:

Այսաւ
«Ժամանակաւոր կանոններ»-ի Ա. կէտի՝ յատկապէս դպրո-

Բ.

«Ժամանակաւոր կանոններ»-ի Երկրորդ կետը կանոնաւորում է հայ հոգևոր աշխատավիաներին (Աշխատավիան հոգևոր բարձրացնելըն) պատահանող կալաւածների հարցը, և այն այսպիսի §§ -ներով—

(1) Հոգեւոր սեմինարիաների կալաւածները (Օր. ժող. XI հ., հրատ. 1896 թ., յօդ. 1206) կառավարում են առանձին հոգաբարձական խորհուրդներ՝ բաղկացած 12 հոգուց, նախադահութեամբ թեմական առաջնորդի:

(2) Հոգաբարձական անդամներ ընտրելու համար, թեմական առաջնորդի կամ նրա կողմից նշանակած անձի նախադահութեամբ, հրաւիրում է վիճակային ընարողների ժողով՝ Երկու - Երկու հոգի այն քաղաքի եկեղեցիներից, ուր գանւում է սեմինարիան, այդ անձերն ընտրում են ծխականների ընդհանուր ժողովով ներկայ եղողների ձայների մեծամասնութեամբ, և մի - մի հոգի վիճակում գտնվող քաղաքային եկեղեցիներից՝ ընտրւած նոյն կարգով, և մի - մի ընտրող իւրաքանչիւր գործակալութիւնից՝ ընտրւած զիւղական եկեղեցիների ներկայացուցիչների ժողովով։ Հոգաբարձական խորհրդի անդամներն ընտրում են 4 տարով։

(3) Հոգաբարձական խորհրդի անդամները հաստատում են իրենց պաշտօնում ամենայն հայոց Կաթողիկոսից։

ցականին (Եկեղեցական - ծխական) վերաբերեալ շեշտին եւ դեռ ունիմ դառնալու ստորև՝ դոյն Կանոններ»-ի Բ. կետի առջիւ ասելիքում [թ. 9.]։

(4) Հոգաբարձական խորհրդի անդամների կեսը 2 տարուց յետոյ դուրս է գալիս պաշտօնից և առաջին անգամ վիճակով։

(5) Վիճակային ընտրողների ժողովը, հոգաբարձական խորհրդի լիազօրութեան ժամանակամիջոցում, ընտրում է վերաստուգող յանձնաժողովի, որի եղբակացութիւնը հաղորդուում է Էջմիածնի սինօղին։

(6) Տարեկան նախահաշիւները, ինչպէս նաև հոգաբարձական խորհրդների հաշիւները, հաստատում են Էջմիածնի սինօղից։

Ահա դրանք են «Ժամանակաւոր կանոններ»-ի Բ. կետի §§ -ը՝ դարձեալ համածախ մեր ձեռքը հասած թարգմանութեան։ Մակայն այստեղ, նախ քան այդ §§ -ներին անցնելը, անհրաժեշտ եմ դասում կանդ առնել շնորհիւ «Ժամանակաւոր կանոններ»-ի այդ Բ. կետին հրապարակի վրա զրած մի լատ Խոչված Աւագանութան վրա։

«Մշակ»-ը տալով իր 1905 թւի № 160 - րդում «Ժամանակաւոր կանոններ»-ի թարգմանութիւնը՝ ապա, իր № 161 - րդում՝ «Ժամանակաւոր կանոններ» վերնագրով առաջնորդողում, զրում է՝

«Երկրորդ կետի վերաբերմամբ Ժամանակաւոր կանոննելը միանդամ ընդ միշտ հաստատելով սեմինարիաների գոյութեան իրաւունքը ամեն մի թեմում, համածախ Պօլօմենիայի, Ալբանականագուած և այդ Շըռ շոցների կարաւարութեան այն եղանակը ով մացրված է Երշանկապիշատակ ներսէս և Մատթէոս կաթողիկոսների կանոնագրութիւններով։ Այսուհետեւ ևս մեր հոգեւոր գոլրոշները պէտք է կառավարվեն ժողովրդի ձեռքով, նրա ընտրած ներկայացուցիչների միջոցով։

այն նշանաւոր գողովազնութեանը, որ հոգաբարձական լինորութեան մասնակցում է ոչ թէ միայն թեմական քաղաքի, ինչպէս առաջ էր, այլ ամբողջ թեմի հայ ժողովուրդը։ Դրանով զնօջքում է մի մեծ անարդարութիւն, որ կատարվում էր մինչև այժմ, հեռացնելով զիւղական ահազին ազգաբնակութիւնը մասնակցելու իրաւունքից ազգային այն կարեոր հաստատութեան կառավարութեան գործում, որ կոչված է լինել ամբողջ թեմի ժողովրդի հոգեոր-բարոյական կրթութեան օջախ։

«Բայց դրանից վերացնում է և այն առհճանափակումը, որ վերջերս մացրվել էր, օրինակ, Ներսիսեան դպրոցի կանոնադրութեան մէջ, պարտադիր անելով երկու քահանաների մացնելը հոգաբարձութեան կազմի մէջ»⁹⁾։

Ես նոյնութեամբ և ամբողջովին քաղեցի «Մշակու»-ի «Ժամանակաւոր կանոններ»-ի երկրորդ կէտին վերսբերեալ առաջնորդողի կտորը, և ահա այդ է, արդ քաղաքս կտօրն է, որ ես անւանում եմ շատ խոշը նիշտացունիւն։

Յիրաւի՛։

«Ժամանակաւոր կանոններ»-ի երկրորդ կէտը խօսում է մեր թեմական հոգեոր դպրանոյների նկատման մեջ առաջնորդութեան առաջանորդողի մասին և

⁹⁾ Տես «Մշակ», 1905 թ., № 161: (Ծնդգծումները մերն են: Հեղ.): ի դէպ. — Ես դժւարանում եմ հաշտեցնել «Մշակ»-ից այս րոպէ քաղածմ՝ «Ժամանակաւոր կանոններ»-ի Բ. կէտին վերսբերեալը և նոյն «Մշակ»-ի նոյն առաջնորդողի նոյն «Ժամանակաւոր կանոններ»-ին վերաբերեալ ամփոփ խօսքը՝ «Ժամանակաւոր կանոններ»-ը երեք պիհանը կէտեր են շօշափում. ա). . . թ) հոգեոր սեմինարիաներին պատկանող կալւածների հարցը. գ). . .»։

ոչ նոյն դպրանոյների նկատման նիստ ու կացի մասին։ Եւ հասկանալի է, թէ ինչու։

Յիրաւի՛. անհասկանալի կիներ, և նէ Բարձրադոյն ուկալին կից՝ մի և նոյն օրը և եթ խմբագրուեր և Բարձրադոյն «հաստատւեր»¹⁰⁾ «Ժամանակաւոր կանոններ»-ի երկրորդ կէտը վերը շեշտածս թիւրիմացութեան իմաստով, քանի որ ացդպիսով հինունին խախտւած կիներ 1874 թւի յուլիսի 19-ի օրէնքը, որով շեշտում է հայ դպրոցի անկախունիւնը՝ թէ անտեսական և թէ վարչական որ և է հարցում, նամանաւանդ մեր թեմական հոգեոր դպրանոյների նկատմամբ։

«Ժամանակաւոր կանոններ»-ն օրինակելի զգուշութեամբ խօսում են մեր թեմական դպրանոյների կաւագանելի հոգաբարձութեան մասին, և ոչ այդ դպրանոյների հոգաբարձութեան մասին առաջանորդութեան մասին։ Եւ ես չեմ հասկանում՝ ինչու, երբ «Ժամանակաւոր կանոններ»-ն ացդպիսի լրջութեամբ հակում են 1874 թւի յուլիսի 19-ի օրէնքի վրա, ինչու մենք ինքներս պիտի կարծենք այդ օրէնքի՝ անկախունիւնը շեշտող իմաստը։

Պետական օրէնքը — ժամանակաւոր թէ մնակուն միեւնոյն է — յարգելով մեր դպրոցների անտեսական անկախունիւնը սկզբունքը, կարող է տալ մեզ միայն մեր դպրոցների կալւածների նկատմամբ մեզ պատկանելի իրաւունքներն իրագործելու եղանակը, ոչ աւելին։ Իսկ թէ կաւագանելի հոգաբարձութիւնը լինելու է և դպրոցական հոգաբարձութեան ամենամեծ առաջանորդութիւնը»։

¹⁰⁾ Տես «Մշակ», ibid.:

թիւն, ինչպէս և այն թէ՛ ընտրւելու էն արգեօք մեր դպրոցական հոգաբարձուները՝ պետական օրէնքում կալածական հոգաբարձուների նկատմամբ շեշտածի համաձայն թէ՛ որ և է այլ եղանակով—այդ մեր գպրոցների Պետի՛ Ա. էջմիածնի Գառնակալ Վեհափառ Հայրապետի և մէ՛ միայն Արա գործն է: Դալրոցական կալածների Եկամուգները մենք կհաւաքենք պետական օրէնքի իմաց՝ «Ժամանակաւոր կանոններ»-ի հիման վրա, սրանց ցոյց տւած օրինական եղանակով, իսկ թէ ինչ այլ և ուժ ձեռքով կծախսւեն այդ եկամուգները՝ այդ մեր հոգեոր Պետի՛ գործն է և ուրիշ՝ ուժ ուժ: Օրէնքը չի պահանջում մեր գպրոցների Պետից հանչել թեմական հոգեոր գպրանոցների կալածական հոգաբարձուներին իբր դպրոցական հոգաբարձութիւն—վերջնիս մեզանում իւրացրած իմաստով, հետեւապէս պարզ է, որ մեր թեմական դպրոցական հոգաբարձութեան լինել թէ չլինելը, որպէս և ի՞նչ կազմ ունենալն այսօր իսկ՝ «Ժամանակաւոր կանոններ»-ի Բարձրագոյն հաստատւելուց յետով ևս՝ կախւած է մեր գպրոցների Պետից և ուրիշ՝ ուժ ուժ:

Կարճ: Պարզ է որ, ասել թէ՝ «Ժամանակաւոր կանոններ»-ի հրատարակութեամբ վկանատառադրութիւն մեր գպրոցների կարտալարունեան ո՞ր և է եղանակը, կամ թէ՝ գոյն այդ «Կանոններ»-ով իւրացւեցին մեր գպրոցների հոգաբարձութեան ընտրութեանը ո՞ր և է դարձերունեան ցայսօր ընդունւածի համեմատութեամբ, կամ թէ գոյն այդ «Կանոններ»-ով ընդունեան է ո՞ր և է անարդարութիւն թէ արդարութիւն մեր գպրոցների կեանքից, կամ թէ գոյն այդ «Կանոններ»-ով վերացուած է մեր գպրոցների հոգեոր Պետի ո՞ր և է գպրո-

ցական կարգադրութիւնը — ասել այդ՝ կնշանակի խրացնել «Ժամանակաւոր կանոններ»-ին, պետական ժամանակաւոր այդ օրէնքին, մի արամազրութիւն, որը՝ և չկայ այդ օրէնքում, և, եղած դէպքում, խաչ կղնէր դոյն այդ օրէնքի վրա՝ մեր գպրոցական դործի անկախունեան իսկ տեսակէտից...

«Ժամանակաւոր կանոններ»-ի երկրորդ կէտի շեշտար, երկու խօսքով, այս է.

Համաձայն այդ «Կանոններ»-ի ընտրւած և դործող գպրոցական կալածական հոգաբարձութիւնն ամբարում է կալւածների եկամուգները և յանձնում այն թեմական առաջնորդին՝ իբր թեմական հոգեոր գպրանոցի վարչութեան նախագահին, իսկ վերջնիս միշոցով գումարն անցնում է գպրանոցի կախական հոգեալարչունեան: Ապա՝ տարւադ վերջը նոյն թեմական առաջնորդը վարւում է համաձայն պետական օրէնքի XI հատ. I մասի (հրատ. 1896 թ.) յօդ. 1182-րդի, այն է ներկայացնում է ա. էջմիածնի սինոդին իր թեմի գործերի վերաբերեալ ընդհանուր հաշիւը (օճպի ուղեցեց), որին կցում է գպրանոցի կալւածների եկամտին վերաբերեալը ևս:

Ճիշտ է, «Ժամանակաւոր կանոններ»-ում չկայ «յանձնել» խօսքը, սակայն չմոռանանք այն, որ այդ «Կանոններ»-ն երբեմն մի-մի ուրւագծեր են, և ոչ մանրամասն խմբագրւած մնայուն կանոններ—և այդ վերաբերում է «Ժամանակաւոր կանոններ»-ի բոլոր երեք կէտերին ևս, — ապա՝ թերեւս այդ մի վրիպակ է՝ ոչ աւելին, որը պիտ ուղղւի՝ «Ժամանակա-որ կանոններ»-ը հայուած օրէնքի վերածելիս, քանի որ գրպրոցական դումարը, ի հարիէ, այսպէս թէ այնպէս, պիտի յանձնուի գպրոցին:

Մեր գոլրանոցական հոգաբարձութիւնները՝ սրբանց ամեն պէտական օրէնքի յօդ. 1208-ի, այն է այդ յօդւածում շեշտաւած առանցին կանոններն (օсобыми правилами): Ստեղծողն եղել է մեր Վեհափառ Հայրապետների կամքը: Պետական օրէնքը գործ ունի այդ կամքի ժոյյունական հետ—այսպէս ասած in potentia—յանձին այդ կամքը կը բարձրէ¹¹⁾): Հասկանալի է, որ գոլրացական կալւածական եկամտի հարցում ևս պէտական

11) Յ. Գ.: Թէ ո՞ր աստիճան ուրին է Ամենալի Հայոց Վեհափառ Հայրապետի պաշտօնական զիրքը—այդ բառ ամենալի ընդգծւած է պետական օրէնքի XI հատ. I մասի (ճրատ. 1896 թ.) յօդ. 1117 և 1148-ներով, որոց տեկստն է:

„1117. Главное Управление Армяно-Грекорианской Церковью и высший надзоръ за духовенствомъ ея и за точнымъ исполненiemъ правиль и обрядовъ сего исповѣданія принадлежитъ Эчміадзинскому Патриарху, какъ Верховному Католикосу народа Гайканскаго. Ему во всемъ содѣйствуетъ Эчміадзинскій Армяно-Грѣгорианскій Синодъ; но Патриархъ ни въ какомъ случаѣ не можетъ передать ни сему, ниже какому либо иному мѣсту или лицу, власти, правъ и преимуществъ, присвоенныхыхъ сану его.—Թարգմանութիւնը՝ Յօդ. 1117. Հայ-լուսաւորչական Եկեղեցուն վերաբերեալ վերագոյն վարչութեան, դոյն Եկեղեցու հոգևորականութեան, օրէնքների և սովորութիւնների լրի հրագործման վերաբերեալ բարձրագոյն հսկողութեան իրաւունքն իրացրած է: Էջմիածնի Պատրիարքին՝ իր Հայկագեան ազգի Վեհափառ Կամողիկոսի: Նրան բառ ամենալի գործակում — օդում է Էջմիածնի Հայ-լուսաւորչական Սինոդը. սակայն Պատրիարքն երբէք չի կարող յանձնել ոչ այս Սինոդին, ոչ որ և ուրիշ պաշտօնական վայրին (ճարմին) կամ անձնաւորութեան յատկապէս նրա կոչման (сану) իրացրած իշխանութիւնը, իրաւունքները և արտօնութիւնները“:

„1148.... дѣла чисто духовныя, по коимъ Патриархъ имѣетъ рѣшительный голосъ, ни въ какомъ случаѣ не могутъ быть рѣшаемы безъ Патриарха во время вакансіи Патриаршаго престола; рѣшеніе дѣлъ сего рода

օրէնքը—ժամանակաւոր թէ մնալուն՝ միւնոյն է, — պիսի գործ ունենայ այդ կամքի կայտուն հաւասարմատարի հետ, որպիսին է Շեմական առաջնորդը (յօդ. 1170), և ոչ թեմական գոլրանոցի հոգաբարձութիւնն հետ, որը, լինելով այդ կամքի կահական կը դուք մի արտայացտութիւն, կարող է զուրկ լինել կայունութիւնից և կը ել իր վրա անհատական այս կամ այն տրամադրութիւնների կնիքը:

Ես ուզում եմ ասել, որ՝ համաձայն 1874 թւի յուլիսի 19-ի օրէնքի՝ մեր գոլրանոցական վարչական (հոգաբարձութեան և այլն) և առաջնական գործոնների բարեկարգումը՝ բարեկաւումը պիսի սպառենք մեր հոգեւոր վարչութեանց և միմիայն արանջց: Այդ նոյնն է պետական օրէնքի XI հատ. I մասի շեշտը ևս: Պետական օրէնքն իր որոշ (ժամանակաւոր թէ իսկական մնայուն) յօդւածներով չի մտնում և չպիտի մտնի այդ հարցի այսպէս թէ այնպէս լուծման մէջ, այլապէս, կը կնում եմ, խախտած կլինի և պետական օրէնքի XI հատ. I մասի, և սրա հետ սերտ կապերով կապւած 1874 թւի յուլիսի 19-ի օրէնքի տեկստով շեշտաւած մեր գոլրոցների անհայտութեան գաղափարը:

Այդ է «Ժամանակաւոր կանոններ»-ի տեկստից, բառացի իմաստից հետեւցնելիքը ևս: Եւ այդ իսկ իմաստով լրմունեն է, որ յենակէտ է ժառայում մեղ՝ ող-

отлагается до назначения нового Патриарха.—Թարգմանութիւնը՝ Յօդ. 1148.... զուտ հոգևոր գործերը, որոց վերաբերեալ Պատրիարքն (Կամողիկոսն) ունի վծուական ծայն, երբէք չեն կարող լուծել կամողիկոսական ալոորի մափուր եղած ժամանակ. այդ տեսակի գործերի լուծումն յետաձգում է մինչ ցնոր Պատրիարք նշանակմալը“:

չունելու օգոստոսի 1-ի Բարձրագոյն ուկաղով և նոյն օգոստոսի 1-ի Բարձրագոյն հաստատւած «Ժամանակաւոր կանոններ»-ով մեր եկեղեցուն և դպրոցին առաջ շնորհր:

Այդպիսով՝ «Ժամանակաւոր կանոններ»-ի հրատարակումից յետով ևս մեր թեմական հոգևոր դպրանոցների (հոգևոր սեմինարիաների) վեհափառ Պետք իրաւունքները մնում են անխափաբար: Նաև է, և այսուհետեւ տնօրինելու մեր դպրանոցական նիստ ու կացը: Իսկ շնորհիւ «Ժամանակաւոր կանոններ»-ի մեր դպրանոցական կալանաչական գործը ստանում է մի օջնական նեցուկ՝ յանձին դպրոցական կալանաչական հոգաբարձութեան, որը, կրկնում եմ, խառնել, շփոթել մեր արդի դպրանոցական վարչական գործոն հանդիսացող հոգաբարձութեան հետ՝ կնշանակի չըմբռնել վերջին տարիների ընթացքում հայ եկեղեցու և դպրոցի զիսովն անցածը և այն թէ ինչպիսի տոկունութեամբ է օրէնքը գոլիս՝ բաւարարութիւն տալու մեր լաւագոյն իդերին¹²⁾...

[Յ. Գ.:

Այսաւել, շնորհիւ յետագայում հրապարակ ելածի՝ հարկ է կանգ առնել «Ժամանակաւոր կանոններ»-ի

¹²⁾ Յ. Գ.: Ճիշտ է, 1874 թի յուլիսի 19-ի կանոնների § 3-ը, ի միջի այլոց կանոնադրում է՝ «Սյս (Թեմական հոգևոր) դպրոցների ուսման դասընթացի և ներքին կարգերի մասին կանոնները պէտք է ներկայացնեն Բարձրագոյն կառավարութեան ի հաստատութիւն» (տես վերը՝ էջ VII): Սակայն մէ ինչ պիտի ներկայացւի «ի հաստատութիւն» — ալդ հարցը որոշում է ապդիս վէճը, և ոչ ուրիշ ոք... (Տես իմ «Հայոց Թեմական Հոգևոր Դպրանոցների կանոնադրութեան նախագիծը», Յաւելած VII, էջ 162—164՝ ծանօթ): Այլդ իսկ տեսապէտը՝ իբր ելակէտ՝ ունէր դէռոդ Դ. կաթողիկոսը 1873—4 թւերին (տես վերը՝ էջ 5—8):

մեր Եկեղեցական ծխական գոյացներին վերաբերեալի վրա ևս:

«Ժամանակաւոր կանոններ»-ի մեր Եկեղեցական ծխական գոյացներին վերաբերեալ շեշտը զրի է առնւած գոյն «Կանոններ»-ի Ա. կէտի §§ 4 և 5 -ում:

«Մշակյ-ը, իր ժամանակին, նւիրեց «Ժամանակաւոր կանոններ»-ի Ա. կէտին հետևեալ տողերը՝

«Ժամանակաւոր կանոններ»-ն Ա. կէտում «շօշափում են ծխական Եկեղեցիներին պատկանող գոյերի հարցը... Առաջին կէտի վերաբերմամբ ծխական ժողովրդին յատկացրված են ամենալայն իրաւունքներ և հոգաբարձական սկզբունքը ոչ միայն պահպանված է, այլ և մաքրված այն սահմանափակումներից, որ մըսցը բեր էր Մակար կաթողիկոսը, պարտադիր անելով, որ Յ անդամից բաղկացած հոգաբարձութեան մէջ մինը չէ օֆ(ֆ)իօ լինի աւագ քահանան: Այժմ հոգաբարձութիւնները բաղկացած պէտք է լինեն բացի երեցիութիւնը, որ նոյնպէս ընտրովի է, Զ կամ 4 հոգուց, ընտրված ծխականների օրինաւոր ժողովով: Բայց մանաւանդ համակրելի է այն սկզբունքը և դնահատելի այն լայն իրաւունքը, որ արվում է հոգաբարձութիւններին՝ հիմնել դպրոցներ, հիւանդանոցներ, անկելանոցներ, ապաստարաններ և ամեն տեսակ բարեգործական հաստատութիւններ:»

«Դրանով Հայոց Եկեղեցին ձեռք է բերում այն վիզիոնօմիան, որ նա ունէր նախական դպրերում, երբ նա հանդիսանում էր որդան ոչ միայն կրթութեան, ուսման, այլ և բարեգործութեան և մարդասիրութեան: Այդ կողմից, կրկնում ենք, անդնահատելի է նոր ծրագիրը(?), մանաւանդ, որ այդ բարի և դեղեցիկ

ձեռնարկութիւնները իրագործելու, կեանքի մէջ մրտցնելու համար իրաւունք է արվում որոշ տուրք ևս նշանակելու ծխականներից, եթէ եկեղեցու ունեցած միջոցները բաւարար չեն լինիւ»¹³⁾:

«Ժամանակաւոր կանոններ»-ի Ա. կէտի շեշտած (§ 5) «առուրք»-ի առթիւ ասելիքս արդէն զրի եմ առել վերը¹⁴⁾: Այստեղ ինձ մնում է կանդ առնել դոյն «Կանոններ»-ի յատկապէս եկեղեցական-ծխական դպրոցներն վերաբերեալի (§ 4) վրա:

«Մշակ»-ի այս րոպէ քաղածս տողերից¹⁵⁾, ի միջի այլոց, հետեցնելի է, որ «Ժամանակաւոր կանոններ»-ի Ա. կէտը շօշափում է «Եկեղեցիներին պատկանող ժոյժերն հարցը» և որ այդ ժոյժերն «հոգաբարձութիւն»-ն ունի «իրաւունք» (ըստ «Ժամանակաւոր կանոններ»-ի «պարտականութիւն»)՝ «հիմքեւ», ի միջի այլոց, «գպրոցներ»:

Այդ ճիշտ է:

Ապա «Մշակ»-ում զետեղւեց «Ուշացած կանոններ» թղթակցութիւնը, ուր, ի միջի այլոց, կարդում ենք՝ «... փոխարքայական առժամանակեալ կա-

¹³⁾ Տես «Մշակ», 1905 թ., № 161՝ «Ժամանակաւոր կանոններ» (առաջնորդող):

¹⁴⁾ Տես վերը՝ «Ժամանակաւոր կանոններ»-ի Ա. կէտի առթիւ զրի առածս, էջ 28—33 [թ. Գ.]:

¹⁵⁾ «Մշակ»-ից այս րոպէ քաղածս տողերը մի փոքր մուժ են: Ցամենալն դէպս, եթէ «Մշակ»-ի խօսքը հանգուցեալ Մակար կաթողիկոսի՝ եկեղեցական-ծխական դպրոցների «Կանոնք»-ի մասսին է, այդ դէպրում հարկ է ի նկատի ունենալ, որ, ըստ «Կանոնք»-ի՝ «զերիս հոգաբարձուս ունիցին միջասեան եկեղեցական-ծխական ուսումնարանք», իսկ «Եթ կդասեան եկեղեցական-ծխական ուսումնարանք ունիցին զըորս հոգաբարձուս» (Տես «Կանոնք» եկեղեցական-ծխական ուսումնարանց Հայոց», Վաղարշապատ, 1889 թ., էջ 5՝ §§ 23, 24: Տես ևս էջ 6՝ § 25):

նոններն... եկեղեցական-դպրոցական կալանջների կառավարութիւններն եղանակներն են որոշում և ու նե արդիւ պիտի ոչկանարգները...»¹⁶⁾:

Սակայն «Մշակ»-ի խմբագրութիւնը յետագայում իր համար պարագիր չգտաւ՝ ոչ իր 1905 թւի № 161-ի առաջնորդողը, ոչ իր թերթի 1907 թւի № 48-ում գետեղած թղթակցութիւնը, և դոյն այդ 1907 թւին հրապարակ ելաւ «Հայոց դպրոցներն վեհական վերնագիրը կրող հետեւեալ խմբագրականով»

«Վերջին օրերս Կովկասի Փոխարքայի արած մի կարգագրութիւնը որոշում է հայոց եկեղեցական-ծխական դպրոցների վիճակը:

«Ինչպէս զիտենք, վերջերս Թիֆլիսի հայոց առաջնորդը կարգագրել էր, որ իր թեմի դպրոցները ժամանակաւորպէս զեկավարվեն 1874 թ. Կովկասի Փոխարքայի հրատարակած կանոններով: Սակայն կաթողիկոսի Դիւնաստունը մի քանի ժամանակ առաջ շրջաբերական հրամանով յայտնել էր բոլոր առաջնորդներին Կաթողիկոսի մի կօնդակը, որով նա պատուիրում է զեկավարվել այսուհետեւ այն նախագծով, որ կազմիլ էր դպրոցական յանձնաժողովի ձեռքով և ըննվել առաջին կենտրօնական ժողովում: Այդ շրջաբերական հրամանը արձակելուց մի քանի օր յետոյ հասնում է մի նոր հետագրական հրաման նոյն դիւնաստան կողմից՝ ըլ գործադրել առաջին հրամանը, այլ կարգագրել, որ այսուհետեւ դպրոցները զեկավարվեն 1874 թ. կանոններով:

¹⁶⁾ Տես «Մշակ», 1907 թ., № 48 — Ա. Եղեկեանի (Ախալցիայից) «Ուշացած կանոններ» լոդածը:

«Այս նոր կարգադրութեան պատճառը բացատրվում է այժմ հետեւեալ կերպով։ Ինչպէս զիտենք, երբ հայոց եկեղեցական-դպրոցների վերաբացումը թոյլասրբվեց, Փոխարքայ կոմս Վորօնցօվ-Դաշկովի հրատարակած ժամանակաւոր կանօնների մէջ ասված է, որ այդ դպրոցները ժամանակաւորապէս պէտք է զեկավարվեն 1874 թւի կանօնադրութեամբ, մինչև որ հայոց հոգևոր իշխանութիւնը մշակէ նոր կանօններ, առաջարկէ նրանց Փոխարքայի հաստատութեան և մտցնէ դպրոցներում։ Էջմիածինը այդ պայմանը չէ կատարել. նա մոռացել է, որ պէտք է շտապել նոր կանօնադրութիւն կազմել, առաջարկել Փոխարքայի հաստատութեան և ապա մտցնել դպրոցների մէջ։ Նկատելով Կաթողիկոսի վերջին կարգադրութեան մէջ խախտումն ժամանակաւոր կանօնների, Կովկասի Փոխարքան առաջարկել է Կաթողիկոսին նշտիւ պահպանել և գործադրել այդ կանօնները. և ահա այդ պահպանի հետեւանքով Կաթողիկոսը ստիպվել է ետ առնել իր նախկին կարգադրութիւնը և հրամանադրել, որ հայոց դպրոցները զեկավարվեն 1874 թ. կանօններով մինչև մշտական կանօնադրութեան մշակումը և հաստատութիւնը։ Տղէտ, օրէնքներին անտեղեակ դիւնասպետների պատճառով, ի հարիէ, հայոց Կաթողիկոսը շարունակ պէտք է դժուարին և անյարձար կայութեան մէջ ընկնի, իսկ դպրոցներն էլ շարունակ տուժեն. . .»¹⁷⁾։

Անտես առնել այդօրինակ երեսթներն արդի՝ «բարենորոգիչ» օրերում անկարելի է։

¹⁷⁾ Տես «Մշակ», 1907 թ., № 66։

Բատ «Մշակ»-ի՝ «Կաթողիկոսի կօնդակը, որով նա պատճենում է զեկավարվել այն նախագծով, որ կազմվել էր դպրոցական յանձնաժողովի ծեռքով և քննվել առաջին կենարօնական ժողովում»¹⁸⁾ էր «Խախտապահութան ժամանակաւոր կանօնների» և «Կաթողիկոսը» իրը «հետևանք» Փոխարքայի «պահանջի» «ստիպվել է ետ առնել իր նախկին կարգադրութիւնը և հրամանադրել, որ հայոց դպրոցները «զեկավարվեն 1874 թ. կանօններով»։ Բատ «Մշակ»-ի՝ այսպէս «առաջած է ժամանակաւոր կանօնների մէջ». . .

1905 թւի օդոստոսի 1-ի «Ժամանակաւոր կանօններ»-ը ընթերցողիս առաջ էն¹⁹⁾, և ուշադիր ընթերցողս, հարկաւ, կտեսնի, ա) որ «Ժամանակաւոր կանօններ»-ը վելուներուն են եկեղեցների, վանեւերի և վեճական դպրանոցների գոյցերն, և այլ մեր եկեղեցական-ժիշտական դպրոցների կանոնադրութեանը կամ ծրագրեն, բ) որ «Ժամանակաւոր կանօններ»-ն և այլ մի խօսք կայ 1874 թ-ի հանոնների հասնի, այլ այդ մասին խօսում է միայն և եթ 1905 թւի օդոստոսի 1-ի Բարձրագոյն ու կաղը²⁰⁾։

Այդպիսով՝ «Խախտակ» և անհին է «Մշակ»-ի խօսքը՝ «Փոխարքայ կոմս Վորօնցօվ-Դաշկովի հրատարակած ժամանակաւոր կանօնների մէջ առաջած է, որ այդ

¹⁸⁾ Սյստեղ խօսքը 1906 թւին ս. Էջմիածնում գրւմարւած կենդրուական ժողովի մասին է։ «Նախագիծը» կազմել է 1905 թւի Ուսուցչական Համագումարի Յանձնաժողովը (Թիֆլիս), ապա այն լոյս է տեսել՝ «Նախագիծ - կանոնադրութիւն և ծրագիր Հայոց Եկեղեցական տարրական դպրոցների» վերնագրի տակ (Թիֆլիս, 1906 թ., հրատ. Ներսիսեան Դպրանոցի)։

¹⁹⁾ Տես վերը՝ էջ VIII-X.

²⁰⁾ Տես վերը՝ էջ III-V.

(Եկեղեցական-ծխական) դպրոցները ժամանակաւորապէս պէտք է զեկավարվեն 1874 թւի կանոնադրութեամբ, մինչև որ հայոց հոգեւոր իշխանութիւնը մշակէ նոր կանոններ, և առաջարկէ նրանց Փոխարքայի հաստատութեան և մտցնէ դպրոցներում»): Այսաւ և անհինն է «Մշակ»-ի միւս խօսքը ևս—«Նկատելով կաթողիկոսի վերջին կարգադրութեան մէջ խախոսութեամանակաւոր կանոնների, Կովկասի Փոխարքան առաջարկել է Կաթողիկոսին ճշտիւ պահպանել և դորձադրել այդ կանոնները»:

Կրկնում եմ «Մշակ»-ի այդ խօսքերը այսաւ և անհինն էն: Յիրաւի՛. ասել այդ՝ կնշանակի նախ և առաջ պնդել, որ Կովկասի Փոխարքան ինքը զփափի իր փոխարքադրութեան «Ժամանակաւոր կանոններ»-ի տեկստը—բովանդակութիւնը...

Ոչ Վեհի կոնդակը չի «խախաել» «Ժամանակաւոր կանոններ»-ի և ոչ մի կէտր, «Եջմիածինը» չէր կարող «չկատարել» չեղած «ապահմանը», «Պահպանել», կրկնում եմ, «Ժամանակաւոր կանոններ»-ը և ոչ մի կամ կամ դորձ ունեն մէր Եկեղեցական-ծխական դպրոցների՝ և վարչականի (կանոնադրութեան), և ուսումնականի (ծրագրի) հետ: 1905 թւի օգոստոսի 1-ի «Ժամանակաւոր կանոններ»-ը գալիս են (Ա. մաս, §§ 4, 5) բարւոքելու Եկեղեցական-ծխական դպրոցների հիմքելը և սրանց դպամականի հարակարարներն միջները, ոչ աւելին, «Պահպանել» «աւելին», ի դէպ վերջնիս դոյութեան, կլինէր բացարձակ խախտումն նոյն 1905 թւի օգոստոսի 1-ի Բարձրագոյն ուկաղով շեշտած 1874 թւի յուղիսի 19-ի կանոնների:

1874 թւի յուղիսի 19-ի կանոնների²¹⁾ § 1-ով՝— «Համաձայն օրէնքների ժողովածւի ՏI հասորի I մասի 975-դ յօւլիածի, հալլուսաւորչական հոգեւորականութեան պարտաւորութիւնն է մնում հիմքել և կառավարչել Եկեղեցական դպրոցներ, նոյնպէս և հոգալ հայնելու բարձրագոյն կանոնադրութեան և յարձար եղանակ և պահպանել բարի վարք ուսուցիչների և աշակերտների մէջ»:

Նոյն 1874 թւի կանոնների § 3-ով՝—մէր Թէհական հագելով Դպրանոցները իրը «ուսումնարաններ, որոնք նպատակ ունեն հոգեւորականներ պատրաստել՝ չեն ենթարկւում» պետական իշխանութեան յանձին «Ժողովրդական դպրոցների աեսուչների (անքետոր) հակողութեան և գործուում են հագելով իշխանութեան բայցառութեան տակ», միայն «այս դպրոցների ուսման դասրնթացի և ներքին կարգերի մասին կանոնները պէտք է ներկայացուեն Բարձրագոյն կառավարութեան ի հաստատութիւն (յօդ. 1004)»:

Նոյն 1874 թւի կանոնների § 2-րդի երկրորդ կրառուով՝—«Ճիշտամտել (Եկեղեցական-ծխական դպրոցների) պետական մատի մէջ կամ նրան կօնտրօլի ենթարկել» (Ժողովրդական դպրոցների) աեսուչներին նըսուունութ լէ այսուում):

Ապա: Նոյն 1874 թւի յուղիսի 19-ի կանոններով— պետական իշխանութեան միջամբուռները և այն՝ միայն Եկեղեցական-ծխական դպրոցների նկատմանը, նոյլադրութէ միայն և ել հետուելուում՝—որ «բոլոր դպրոցներում աւանդւի ոռւսաց լեզուն, իսկ այն դպրոցներում, որ-

²¹⁾ Տես վերը՝ էջ VI—VII:

աւանդում են ընդհանուր պատմութիւն և աշխարհագրութիւն, աւանդւեն նաև ռուսաց պատմութիւն և աշխարհագրութիւն՝ ռուսերէն լեզով», և «որ այս գպրոցներում ուսուցանողները լինեն ռուսահպատակներ և ունենան պարտ ու պատշաճ բարոյական յատկութիւններ» (§ 2՝ 1 կէտ և 2-րդ կէտի առաջին կտորը):

Այլպիսով՝ պետական իշխանութեան միջամտութեան առիթ է ստեղծում միայն և եթ 1874 թւի յուլիսի 19-ի կանոնների § 2-ի առաջին կէտի և կէտերկրորդի առաջին կտորի խախաման գէպքերում:
Կրկնում եմ՝

Ինձ յայտնի չի Փախարքայի «վերջին»՝ ազգիս Վեհին ուղղած զբութեան բավանդակութիւնը, սակայն, հարկանք, այդ զբութեան խօսքը կարող էր լինել միայն և եթ «ի պաշտպանութիւն» 1874 թւի յուլիսի 19-ի կանոնների վերը²²⁾ ընդգծածս բացառութեան մասին՝ առ առ լինելը, քանի որ, կրկնում եմ, «առ առ լինելը» կնշանակի նախառայնութեան ազգիս Վեհի՝ Պոլոժենիալով և 1874 թւի յուլիսի 19-ի և ապա 1905 թւի օգոստոսի 1-ի Բարձրագոյն ուկազով նախասեմնամաժ իրաւացց: Եւ շատ շատերի համար, զրանց թւում՝ ինձ համար ևս, դեռ ամենեին մռւթ է ազգիս Վեհի՝ «Մշակ»-ի սոյն 1907 թւի № 66-ում շեշտած «նոր հեռաղբական հրաման»-ը՝ «չը գործադրել առաջին»՝ «մի քանի ժամանակ առաջ բոլոր առաջնորդներին շրջաբերական հրամանով յայտնած կօնդակը, որով նա պատուիրում է զեկալարվել ախուհետեւ այն նախադ-

²²⁾ Տես ևս վերը՝ էջ 7:

ծով, որ կազմվել էր գպրոցական յանձնաժողովի ձեռքով և քննվել առաջին կենարօնական ժողովում»:
«Մշակ»-ը, որն առանձնակի ընդգծեց Փոխարքայի՝ ազգիս Վեհին ուղղած «պահանջը» (?), ըստ երեսութիւն, լրիւ չի գիտակցել իր՝ այլ և այլ միասումներից գուրս՝ զարդարութեան պարագաներունը՝ ըստ ամենայնի պարզել-բացատրել թէ ինչնէ, օքնենով այ առեկարկ «խախտման» շնորհիւ «Կաթողիկոսը ստիպվել է ետառնել իր նախկին կարգադրութիւնը»...
Այս՝

Ինչնուն, օքնենով ո՞յ առեկարկ «խախտման» շնորհել «Կանոնական առեկարկը և եսու առանել իր նախկին կարգադրութիւնը»:

Մենք արդէն գիտենք 1874 թւի յուլիսի 19-ի Բարձրագոյն հաստատած կանոնների բացառիկ շեշտը՝

(1) որ բոլոր գպրոցներում (եկեղեցական-ծխական) աւանդուի ռուսաց լեզուն, իսկ այն գպրոցներում, որ աւել աւանդում են ընդհանուր պատմութիւն և աշխարհագրութիւն, աւանդուեն նաև ռուսաց պատմութիւն և աշխարհագրութիւն՝ ռուսերէն լեզով.
2) որ այս գպրոցներում ուսուցիչները լինեն ռուսահպատակներ և ունենան պարտ ու պատշաճ բարոյական յատկութիւններ» (§ 2):

Որդ աեսնենք, ո՞ր չափով «խախտման» և 1874 թւի յուլիսի 19-ի կանոնների այդ բացառիկ շեշտը յետագուռմ՝ ազգիս Վեհի կօնդակով, «որով նա պատուիրում է զեկալարվել ախուհետեւ այն նախադով, որ կազմվել էր գպրոցական յանձնաժողովի ձեռքով և քննվել առաջին կենարօնական ժողովում»:

Այսուեղ, հարկաւ, խօսքը մեր եկեղեցական-ծխա-

կան տարրական դպրոցների ծրագրին՝ նախագծել մասին է, քանի որ առաջին կենդրոնական ժողովում (1906 թ.) «քննվել» է դպրոցական Յանձնաժողովի (1905 թ.) կազմաձևական հայոց եկեղեցական տարրական դպրոցների կանոնադրութեան և ծրագրի «Նախագծից» միայն ծրագրելը: Այսօր այդ «Նախագիծ»-ը դրւած է հրապարակի վրա²³⁾, հետեւապէս պատասխանել վերը դրած հարցին—թէ ո՞ր չափով են «խախտած» 1874 թւի յուլիսի 19-ի կանոնները—այնքան էլ դժւար չի:

Արդ եթէ թերթելու լինենք Ուսուցչական համագումարի Յանձնաժողովի կազմած «Նախագիծ»-ը, կուսնենք, որ Ռուսաց լեզվի մասին խօսւում է «Նախագիծ» 71—77 էջերում, Ռուսաց պատճունեան մասին խօսւում է «Նախագիծ» 28—29, 35—37 էջերում, Ռուսաց աշխարհագրութեան մասին խօսւում է «Նախագիծ» 48—49, 49—50 էջերում:

Մնում է 1874 յուլիսի 19-ի կանոնների մի պահանջը—որ ռուսաց լեզուն, ռուսաց պատմութիւնը և աշխարհագրութիւնն աւանդւեն («առաւելին լեզով»:—Այդ առթիւ, ճիշտ է, «Նախագծում» չկայ դրական շեշտ, սակայն չկայ բացասական շեշտ ևս, հետեւապէս՝ այդ «խախտածն» ամենայն զիւրութեամբ կարելի էր լրացնել Եվրոպ յաւելածով:—Այդ՝ «Ճրադրի» (ուսումնականի) «խախտած» նկատմամբ:

1874 թւի յուլիսի 19-ի կանոնների բացառիկ շեշտը շօշափում է վարչականի հարցը ևս՝ ուսուցիչների «հպատակութեան» և «պարտ ու պատշաճ բարոյականի» նկատմամբ:—Այդ առթիւ «Նախագծում»

²³⁾ Լոյս է տեսել 1906 թւին (Տես վերը՝ ծանօթ. 18):

(կենդրոնական ժողովում կբննւած՝ «Կանոնադրութեան» մէջ), ճիշտ է, չկայ դրական շեշտ, սակայն չկայ բացասական շեշտ ևս: «Նախագծում» ուսուցիչների մասին կարգում ենք՝

Ուսուցչական պաշտօն վարել կարող են բացի չափակեցու անդամներից, նաև օտարագաւաճ հայ կամ օտարազգի անձեր: (§ 15՝ ժանօթ.):

Եթէ այդպիսով յիրաւի վսախտած է 1874 թւի յուլիսի 19-ի կանոնների § 2-րդի երկրորդ կետը, հապա այդ վսախտումն ուղղելը շատ հեշտ է,—բայտ է աւելացնել «Նախագծի» զրի առաջին իր յաւելած՝ 1874 թւի կանոնների տեկստը՝ այս (եկեղեցական-ծխական) դպրոցներում ուսուցիչները պիտի լինեն ուսումնապատակներ և ունենան պարտ ու պատշաճ բարոյական յատկութիւններ: . . .

Այդպիսով՝ «Նախագիծ»-ը չի ժխտում 1874 թւի յուլիսի 19-ի կանոնների և ոչ մի կետը, գոնէ պահպանական տեսակէտից, և թէ ինչի՞ առթիւ է եղել Փոխարքայի «առաջարկ - պահպան»-ն (?) աղջիս Վեհակն՝ «ճշտիւ պահպանել և զործադրել այդ «կանոններ»-ը՝ այդ դժւարին է ասել, քանի որ «Մշակ»-ը, ինչ-ինչ պատճառուներով, աւելորդ է դատել բերել Փոխարքայի Վեհակն ուղղած զրութեան տեկստը, իսկ իրեն «Մշակ»-ի երկարութիւնը, ուր այնքան անհոգութեամբ խառնւած - խճնւած են «Ճրագիր»՝ «Կանոնադրութիւն»՝ «Ժամանակաւոր կանոններ»—«1874 թւի կանոններ», ոչի՞նչ չի հասկացւում:

«Մշակ»-ի խմբագրական երկարութիւնը կտորն է՝ «Ճրագիր, օրէնքներին անտեղեակ դիւանապետների պատճառով ի հարկէ, հայոց կաթողիկոսը շարունակ

պէտք է գժուարին և անյարմար կացութեան մէջ
ընկնի, իսկ դպրոցներն էլ շարունակ տուժեն...»:

Այդ այգպէս լինելով՝ մնում է հարց տալ՝ — Ար-
դեօք մէջ «զիտունութիւն», մէջ «աեղեկութիւն-
ներ» օրէնքներից ապացուցեց ինքը «Մշակ»-ը նոյն
իսկ իր՝ 1905 թւի «Ժամանակաւոր կանոններ»²⁴⁾
և սոյն 1907 թւի «Հայոց դպրոցների վիճա-
կը»²⁵⁾ երկառող - խմբագրականներում: Ունի՞ն արդեօք
նմանօրինակ երկառողերը գէթ ամենափոքր չափով
նպաստելու ազգիս Վեհին դուրս ենելու «գժուարին
և անյարմար կացութիւն»-ից, գէթ ամենափոքր չա-
փով պարզելու մեր լիրաւի «շարունակ տուժող»
դպրոցական գործք, նպաստելու վերջնիս՝ զօրավիրն
ենելով սրա օրինական դիրքին և արտօնութիւններին...
Սնցնենք...

Երկնում եմ

Ազգիս Վեհափառ Կաթողիկոսի կարգագրութեամբ
«Ժամանակաւոր կանոններ»-ը խախտած չէն, քանի որ
«Ժամանակաւոր կանոններ»-ում և ու մի խօսք կայ
1874 թ. յուլիսի 19-ի կանոնների մասին, իսկ դպրոցներ
(Եկեղեցական-ժխական) հիմքելու և այդ դպրոցների
դրանական հարակարգարձնան միջոցները բար-ութելու հոդա-
բարձութեան վերաբերեալ զրի առած «Ժամանակա-
ւոր կանոններ»-ը (Ա. մաս, §§ 4, 5) չէին կարող
խսխաւել Վեհի մեր դպրոցական վարչական համականու-
իսնեն վերաբերեալ կարգագրութեամբ:

Ասել է՝ հարկաւ, Փոխարքայի պաշտօնական քայլը

²⁴⁾ Տես «Մշակ», 1905 թ., № 161՝ «Ժամանակաւոր կա-
նոններ»-ի Բ. կէտի առմիւ զրի առածը:

²⁵⁾ Տես «Մշակ», 1907 թ., № 66:

ալիս ունենայ այլ ելակետ, սակայն որն է իբր այդ
ելակետը — «Մշակ»-ի խմբագրականից չի երևում...

Իբր այդպիսի ելակետ, ըստ իս, չի կարող ծառայել
1905 թւի օգոստոսի 1-ի Բարձրագոյն ուկաղը ևս,
որպէս և սրանով շեշտած 1874 թւի յուլիսի 19-ի
կանոնները:

Ճիշտ է, 1905 թւի օգոստոսի 1-ի ուկաղի «4»-րդ
կէտի «ա» կտորով «չանձնաբարութիւն է Փոխարքային
անյապաղ առաջադրութիւն անել... հրատարակելու
նոր կանոնադրութիւն հայոց Եկեղեցական դպրոցների
մասին»²⁶⁾ և Փոխարքան, ըստ այդմ, կարող է լիշեց-
նել Վեհին ուկաղի այդ շեշտած, այժ, և շատ ցանկալի
է, որ մեր դպրոցական գործի որոշականացման այդ
կանոններն օր առաջ զրի առնելն և հաստատեն²⁷⁾:
Սակայն — նախ՝ այդ կանոնները կարող են մշակել
Վեհի եղած կարգադրութիւնից անկախ և կամ վերշ-
նիս հետ զուգընթաց (параллельно), որն այդ գէպ-
քում ստանում է ժամանակաւորի յատկանիշը, ապա՝ —
և այդ ընդգծելի է պահպանակալ տեսակէտից — մինչեւ
ուկտորւմ շեշտած կանոնները չեն հաստատել - հրա-
տարակել, Վեհի՝ մեր դպրոցների վարչական-ուսում-
նական այս կամ այն հարցին վերտրեեալ կորդադ-
րութիւն անելիս՝ չի շեղում գիտու օրէնքէց, չի՝

²⁶⁾ Տես վերը՝ էջ V:

²⁷⁾ Ի դէպ: Մեր դպրոցների կանոնադրութեան (վարչական
և ուսումնական) որոշականացման հարցին է նւիրած, ի միջի
ալլոց, իմ «Որոշ կանոնադրութեան և ծրագրի անհրաժշտու-
թիւնը և Հալոց թեմական Հոգևոր Դպրանոցների վարչական և
ուսումնական կարգ ու կանոնի դիսցիպլինայի միակերպութեան
գաղափարը» (Մոսկա, 1900 թ.): Տես ևս իմ «Հայ դպրոցի
ցաներից». I. Վարչականի շուրջը, Մոսկա, 1900 թ.:

«Խսախտում» այն: Հետևապէս՝ խօսք չի կարող լինել վեհի նմանօրինակ կարգադրութեան արիալամբ փոխում մասին:

Կրկնում եմ՝

Մեր դպրոցների ուշոյն դոյութեան հիմագայն է մեր դպրոցական դործի վարչական և ուսումնական անհամարական պետական միջամտութիւնից: Հրաժարւել այդ անկախութիւնից և կամ նորն իսկ հաշտուել ուսութիւնը անկախութեան հետ մենք վնասուել և այսպէս իսկ հարցում զեջելն, ի միջի այլոց, մեր եկեղեցական-ծխական դպրոցների նկատմամբ, արդէն զիջել է Գէորգ Դ. Կաթողիկոսը 1874 թիւն՝ ընդունելով 1874 յուլիսի 19-ի «Կանոններ»-ի § 2-րդի «1» և «2» կէտերը, սակայն վերջնիս կից յաւելւածով՝ «իսկ միջամտել տնտեսական մասի մէջ կամ նրան կօնտրօլի ենթարկել» (ժողովրդական դրագրոցների) տեսուչներին (Առաջական պարտադիրութիւնը) եթաւ-ունաւ կը առը-ունաւ, և դոյն «Կանոններ»-ի § 1-ի բացորաշ շեշտով՝ «հայ-լուսաւորչական հողերականութեան պարտաւորութիւնն է մնում հիմել և կառավարվել եկեղեցական դպրոցներ, նոյնպէս և հայութ հայութապատ-ունաւ իանոնաւոր և յարմաս եղանակ և պահպանել բարի վարք ուսուցիչների և աշակերտների մէջ»...

Կրկնում եմ՝

«Մշակ-ը, ըստ երեսիթին, լրիւ չի դիտակցել իր բարոյական պարտաւորութիւնը՝ ըստ ամենայնի պարզել-բացատրել, թէ ինչու, օվէնուի այ աւելացի վսախտման, շնորհիւ վախթողիկոսը ստիպվել է ետ առնել իր նախկին կարգադրութիւնը: Միթէ իրօք Գորդեան

հանգույցը գոյութիւն է առել առաջին կենդրոնական ժողովի քննած նախագծում, վերը շեշտածս երկտող յաւելւածներն անել-չանելու հարցի շուրջը: Միթէ այդ է եղել ապահանջ» հետևյած վսախտումը: Միթէ իրօք՝ իբր օրէնքի ժամանակակից ավատի յորչորչւի այն, ինչ ամենաշատը ոչ այլ ինչ է քան լինելուց մէջ ապահանջ: Միթէ ազգիս Վեհի զոհաբերել է պարոցական յանձնաժողովի ծեռքով կազմված և առաջին կենտրօնական ժողովում քննված նախագիծը՝ շեշտածս երկտող յաւելւածներն անել-չանելու հարցին: Այդ ամեն հարցերին պատասխան տալու անհրաժեշտութիւնը, կրկնում եմ, «Մշակ-ը, ըստ երեսիթին, զի դիտակցել իր բարոյական պատասխան դարձւածներով շեշտելու արտօնութիւնը: Մինչդեռ, ըստ մեզ, հարկ էր, որ հասարակական օրգանը՝ ազգիս Վեհափառ հայրապետի պաշտօնական դիրքին և իրաւանց վերաբերեալ հարցերին մօտենալիս՝ կրկնակի լարեր իր գիտակցութիւնը՝ և ըստ բարոյականի, և ըստ հասարակականի, և ըստ դիտականի...»

Ինչ և իցէ: Մեզ մնում է ընդունել «Մշակ-ի 1907 թիւ № 66-ում գետելւած՝ հայոց դպրոցների վիճակը խմբագրականը ևս՝ իբր մի շատ ինչ-ունաւ մասին»:

Այդպիսով՝ պարզւած համարելով վերը շեշտածս շատ ինչ-ունաւ մասին որի երեան դալը մեր մամուլի էջերում արդի պարագաներում մի անգամ ևս ընդգծում է մեր երեմն անդունակութիւնը՝

հանգիստ սրտով, լուրջ շրջանայեցողութեամբ կոշի առնել մեր առաջ դրած նոյն իսկ պայնոցիալ նշանակութիւն ունեցող հարցերը՝ ես անցնում եմ «Ժամանակաւոր կանոններ»-ի երկորդ կէտի զատքատ §§-ին, որոնք՝ առաջնից զրեթէ մինչեւ վերջինը մի-մի դրաւիչ և ողջունելի նորութիւններ են:

Այսպէս

§ 1-ով մեր թեմական հոգեոր դպրանոյներին շնորհում է մի նոր պաշտօնական մարմին — Շառչական կալանական հոգաբարձութեան: Մի ըոսպէ իսկ աչքաթող անելով այդպիսով մեր դպրոցական կեանքում գոյութիւն առած նորութեան վերաբերեալ մանրամասնութիւնները, որոնք պարզւած են «Ժամանակաւոր կանոններ»-ի Բ. կէտի յետապայ §§-ներում՝ մենք անհրաժեշտ ենք դատում ողջունել այդ նորութիւնը՝ իբր որոշ կենսունակ ակնքունութիւնը իրականացնում: Մեզանում եկեղեցի-դպրոց-ժողովուրդ, — այդ գատ-գատ անուններ կըող տարրերը, իսկապէս, երբեք դատուած չեն եղել, ոչ, այլ, իրօք, դա մի միութիւն է, ազգային մի մասնական ուխտ: Նրբագոյն լարերը, որոնք կապում - միացնում են այդ տարրերը, և փառուց անափ իւրացրել են այդ միաբանական ուխտին ն-երականն յատկանիշը: Անդպրոց եկեղեցի, անեկեղեցի ժողովուրդ, անժողովուրդ եկեղեցի — մեզանում մի-մի անիմաստ բառեր, լոկ հնչիւններ են. մեր կենադանութիւնը, մեր կայունութիւնը պայմանաւորուած է ժողովրդի - եկեղեցու - դպրոցի մասնական կանգանութեամբ, մասնական կայունութեամբ: Ահա ինչու հայ ազգը, որն այնքան տոկունութեամբ իր ուսերի վրա կրել է միաբանական շեշտածա նւիրական դրօշը

ցայսօր, — այսօր, ինչպէս և միշտ, աչքի առնելով իր անցեալը, երախաապարտ սրտով յիշում է այն ամենը, ինչ որ այսպէս թէ այնպէս նպասակել է ամրապնդէլ դոյն այդ նւիրական միաբանութիւնը, ինչ որ այսպէս թէ այնպէս նպատակել է կենդանի կացուցանել այդ ուխտը: Երբ ժողովուրդն առաջին անգամ մօտեցաւ քւէատուփին՝ տալու նը քւէն դպրոցական առաջին նորաբարձուներին — նա՝ այդ ժողովուրդը, այսպէս ասած, աճեց իր սեպհական աչքում այնպէս, ինչպէս աճում է ամեն ոք՝ նը ձեռքում տեսնելով նը իրաւունքը: Սակայն դպրոցական գործը պահանջում է որոշ անցեալ, որոշ պատրաստութիւն, այսպէս ասած, որոշ գիտական - բարոյական - հասարակական ցեղն այդ գործի զլուխ անցնողից, զոյն այդ գործին ամենանւիրական իսկ տրամադրութեամբ խառնողից: Ահա ինչու մեր երշանկացիշատակ հայրապեաները՝ դնելով ժողովրդական մասնակցութիւնը դպրոցական գործին օրինական հիմքերի վրա՝ առանձին իմն խնամատարութեամբ, նւիրւել են դոյն այդ օրինական հիմքերի բարեկաւման: Օգոստոսի 1-ի Բարձրագոյն հաստատած «Ժամանակաւոր կանոններ»-ի երկրորդ կէտի § 1-ը ստեղծում է մի նոր նեցուկ ևս ժողովրդի իրաւունց, և այն՝ պետքական օրենուն անմիջապէս զծած նեցուկ: Թէ որքան գրաւիչ է այդ նեցուկն իր մանրամասնութիւններում — այդ առթիւ ասելիքս կասեմ՝ «Ժամանակաւոր կանոններ»-ի յետադայ §§-ներին անցնելիս. այսեղ խօսքս որոշ ցանկալի ակնքունութիւններու մասին է:

Ենորհիւ դպրոցական կալանական հոգաբարձու-

թեան երեան գալուն՝ մեր դպրոցի և ժողովրդի փոխադարձ կապերը դառնում են կրկնակի' շօշափելի, և մինչդեռ ցայտ այդ կապերին ժողովուրդը տիրանում էր շնորհիւ իր հայրապետների' հոգատարութեան, այսօր դոյն այդ հոգատարութիւնն արտայատում է պետական Գահի' բարձունքից ևս։ Օգոստոսի 1-ին մեր թեմական հոգեոր դպրանոցներին արած այդ կայսերական շնորհը սերտ կապերով կապւած է նոյն օգոստոսի 1-ին նոյն «Ժամանակաւոր կանոններ»-ի միջոցով հայ եկեղեցական-ժողովրդական դպրոցին արած շնորհի հետ։ Խօսքս «Ժամանակաւոր կանոններ»-ի վերը շեշտածս առաջն կետի § 4-ի մասին է, որով «Ճխական հոգաբարձուների վրա պարտականութիւն է զրւում՝ հոգս տանել պատշաճաւոր թուլաւութեամբ հիմնելու», ի միջի այլոց, ուղարցուեց։ Արան կեց, շեշտելի է մի ժանրակշիռ հանգամանք ևս։ Խօսքս 1874 թ. յուլիսի 19-ի օրէնքի և 1905 թ. օգոստոսի 1-ի «Ժամանակաւոր կանոններ»-ի միջև եղած պաշտօնական ներքին կապի մասին է։ Այդ կապը հետեւելուն է։ Պետական նոր՝ օգոստոսի 1-ի օրէնքը («Ժամանակաւոր կանոններ»-ը)՝ համաձայն նոյն օգոստոսի 1-ի Բարձրագոյն ուկաղի՝ անշեղ կերպով հետեւում է պետական օրէնքի XI հաստորի I մասին ըստ ամենայնի համաձայն խմբագրւած 1874 թւի յուլիսի 19-ի օրէնքին, — մի օրէնք, որի անկախութիւնն շեշտող արտամալրութիւնն անքան մօտ է մեր սրտին...

Այդպիսով, օգոստոսի 1-ի Բարձրագոյն ուկաղից և «Ժամանակաւոր կանոններ»-ից յետոյ, մեր Վեհափառ հայրապետութիւն՝ դպրոցականին վերաբերեալ պրինցիպիալ իրաւանց կայուն դեկապար է Վեհափառ հայրապետների կամքին կեց— «Ժամանակաւոր կանոններ»-ի Ա. կէտի § 4-ը և Բ. կէտի § 1-ը։

Այդ է Բարձրագոյն մեզ արած այլնոցիպաւ շնորհը։ Այժմ տեսնենք, թէ ի՞նչ են դպրոցական կալւածական հոգաբարձութեան վերաբերեալ՝ «Ժամանակաւոր կանոններ»-ի գծած մանրամասնութիւնները։

§ 2. «Ժամանակաւոր կանոններ»-ի այդ § 2-ով գծւած է դպրոցական կալւածական հոգաբարձութեան ընտրութեան վերաբերեալը։ Ընտրութիւնը, ինչպէս և ընտրւած հոգաբարձութիւնը (§ 1), ղեկավարում է թեմական առաջնորդը (ընտրութեան ժամանակ կարող է նախագահել նոյնպէս թեմական առաջնորդի նշանակած մարդը)։ Ընտրողները խմբւում են անդամն կիցնելոց։ Ամբողջ վիճակի քւէների մասնակցութիւնը մեր թեմական հոգեոր դպրանոցների գործին—ի՞նչ չափով և ի՞նչ իրաւունքներով էլ լինի այդ մասնակցութիւնը միւնքոյն է—դա ցայսօր մեզանում չեղած մի սկզբունք է։ Որ նէճը պիտի մասնակցի Ամանական դպրանոցի գործին—այդ նորութիւնը մենք ողջունում ենք, և այն ամենաչերմ սրտով։ Այդպիսով ժայրերը գիւրութիւն են ստանում անմիջական մասնակցութիւն ունենալ կենդրոնի գործին, մի մասնակցութիւն, որը, անշուշտ, ունի մեծապէս նրապաստելու դոյն այդ կենդրոնի գործին։ Վիճակալին ընտրողների ժողովի սկզբունքը, ըստ իս, դրաւիչ է այն թարմ հոսանքով, որ ունի յառաջանալու մինչ

ցայդ միմեանցից հեռու ապրած և միանդամայն անկախ անհատների միւնոյն գործին մասնակցելուց: Թէ ի՞նչ էր մեզանում դպրոցական ընտրողական գործը, նամանաւանդ վերջերս, — այդ բաց յայտնի է: Յուսանք, որ վիճակային ընտրողների ժողովը կտուսափի անշեալի թերութիւններից...

Մի նկատողութիւն ևս այդ § 2-ի առթիւ:

Վիճակի ընտրողներն իրենց պարտաւորութիւնները կատարելու համար երեմն պիտ անցնեն հեռու ճանապարհ՝ ժայրից—կենդրոն: Ո՞վ է վճարելու այդ ժախսը: Ապա. § 2-րդը չի պարզում, թէ կալւածական հոգաբարձութեան խորհրդի անդամները պիտի ընտրւն միայն և եթ վիճակային ընտրողական ժողովին մասնակցող պատգամաւորների՝ միջից թէ կարող են ընտրւել զրահ մարդկանցից ևս:— Այդ հարցերի առանց պատասխանի մնալը ցանկալի չի, քանի որ, զորօրինակ, եթէ գաւառը (ժայրը)⁸ խորշելով դրամական ծախսից՝ հրաժարելու լինի անմիջական մասնակցութիւնից և յանձնարարի իրեն վերտարահած մասնակցութեան իրաւունքը կենդրոնում շարունակ այս կամ այն ապրողին—այդ դէպքում նոր օրէնքը, իրօք, կարող է չտալ և ոչ մի նորութիւն: Մինչեռ վիճակի իսկական ընիկ ներկայացուցչութիւնը վիճակային ընտրողական ժողովին և նոյն իսկ ընտրւած հոգաբարձական կազմին շատ և շատ ցանկալի է կալւածների վրա անմիջական հսկողութեան տեսակէաից:

§ 3-ը դալիս է մի անդամ ևս ընդգծելու ամենայն չայոց Վեհափառ Կաթողիկոսի գլուխոյն իրաւունքը դպրոցականին վերաբերեալ աժեն հարցերում՝ նրան վերապահելով ընտրւած կալւածական հոգաբարձու-

թեան կազմի հաստատելու (ուրեմն՝ և չհաստատելու) իրաւունքը: Օրէնքը տալիս է մեզ դպրոցական կալւածական հոգաբարձութիւնը՝ իբր ականքն (§ 1). նոյն օրէնքը գծում է սկզբունքի իրականացման եղանակը — ընտրութեան եղանակը ևս (§ 2): Այդ իր երկու շեշտերով օրէնքը լրացած է համարում իր գործը. մնացածը կախւած է մեր դպրոցների հոգեսոր Պետից: Սա է բանում կալւածական կոնֆետ հոգաբարձութեան առաջ իրական կեանքի ասպարէզը՝ հաստատելով կամ մերժելով կայացած ընտրութիւնը: Կրինում եմ. օրէնքն ազգպիսով մի անդամ ևս ընդգծել է մեր չայրապետի ուրին ոչ մի օրինական սահմանափակումի չենթարկւած իրաւունքը. մնում է, որ մենք ևս մեր կողմից սիրտ և տրամադրութիւն տանք մեր չայրապետին՝ ամենալայն կերպով իրականացնելու իր վրա ի պաշտօնէ վերցրած բարյուական պարտաւորութիւնները:

§ 4-ը գծում է մի գեղեցիկ սկզբունք: Հոգաբարձական կազմն ունի նորոգւելու իւրաքանչիւր 2 տարին,—այն է ամեն 2 տարին հոգաբարձական կազմի 12 անդամից (§ 1) վեց անդամ հեռանում են (առաջին անդամ վիճակով) կազմից՝ տեղի տալով նոյն վեց անդամին: Այդպիսով չորրորդ տարւայ վերջը հոգաբարձական կազմն ամենեին նորոգւում է: Այդ §-ում չի պարզւած, թէ ովքէ՞ր են փոխարինելու երկրորդ տարւայ վերջին հեռացող վեց հոգաբարձուներին: Անշուշտ, այստեղ պատահմամբ բաց է թողնւած անչիւրանուրունելին վերաբերեալը: Յամենայն դէպս, պարզ է, որ վիճակային ընտրողների ժողովն ունի ընտրելու՝ 12 անդամ հոգաբարձութեան (§ 1) և 6

անձնափոխանորդ (կամ թերևս 8 հոգաբարձու և 4 անձնափոխանորդ):

§§ 5 և 6 շօշափում են դպրոցական կալւածական հոգաբարձութեան հաշւետութեան հարցերը, չորոշելով սակայն թէ ուժ միջոցով են ներկայացւում ո. Էջմիածնի սինոդին վերաստուգող յանձնաժողովի եղրակացութիւնը (§ 5), հոգաբարձութեան տարեկան նախահաշիւները և հոգաբարձական խորհուրդների հաշիւները—երկու վերջինը՝ հաստատութիւն (§ 6):

Իսկապէս, այդ §§-ների, նամանաւանդ § 6-ի վաս խմբագրւած լինելու շնորհիւ՝ մի փոքր դժւար է լրիւ ըմբռնել նրանց իմաստը: Տնաբեսականի անհայտ-նե-նը շեշտած է իրը հիֆանտաց 1874 թւի յուղիսի 19-ի օրէնքի: «Ժամանակաւոր կանոններ»-ի Բ. կէտի § 3-ը՝ վերապահելով ամենայն չայոց Վեհափառ Կաթողիկոսին դպրոցական մասնաւոր տնաեսական (կալւածական) հոգաբարձութեան հաստատելը, անշուշտ, նոյն ամենայն չայոց Վեհափառ Կաթողիկոսին պիտի վերապահեր և Սրբ հաստատած հոգաբարձութեան գործունէութեան դնահատութիւնը՝ տարեկան նախահաշիւ և խորհուրդների հաշիւների դնահատութիւնը՝ հաստատելը կամ չհաստատելը: Այդպիսով և մի-միայն այդպիսով ըստ ամենայնի անխայտ կմնար ազդիս Վեհի իրաւունքը: Ս. Էջմիածնի սինոդն իրեն պատկանելիք իրաւունքը (հաճօրք — հետեւումն՝ յօդ. 1141¹, 2) կարող է իրազորձել թեմական առաջնորդից տարւալ վերը իր ստանալիք (յօդ. 1182) «ընդհանուր հաշւի» միջոցով, սակայն ըստ իսկական մտաց պետական օրէնքի XI հատ. I մասի և 1874 թւի յուղիսի 19-ի օրէնքի՝ մեր դպրոցականին վերաբերեալ

ամեն գնացեսական «նախահաշիւնը»-ի և «հաշիւնը»-ի հաստատութեան կնիքը պիտի դրւի կամ իրեն ամենայն չայոց Վեհափառ հայրապետի դիւանում և կամ Սրբ անմիջական ներկայացուցիչ՝ թեմական առաջնորդի դիւանում: Ասել է այդ տեսակ նախահաշիւների կամ հաշիւների հաստատողը պիտի լինի կամ թեմական առաջնորդը (որը, ըստ իս, միակ դիւրընգունելին է), որը պատասխանատու է ամենայն չայոց Վեհափառ Կաթողիկոսի առաջ (յօդ. 1170) և կամ նոյն ինքն ամենայն չայոց Կաթողիկոսը:

Ասացի, այդ §§ 5 և 6-ի խմբագրութիւնը թերի է: Անշուշտ, երբ այսօրւայ «Ժամանակաւոր կանոններ»-ի իսկական մնայուն կանոնների վերածելու հարցը կգրաւի պաշտօնական շրջանները, կըրացւի եղած թերին և կուղղւի սպրատած սխալը, որը, ես համոզւած եմ, մի թիւրիմացութիւն է, քանի որ հակասում է 1874 թւի յուղիսի 19-ի օրէնքին, հետեւապէս՝ և 1905 թւի օգոստոսի 1-ի կառավարիչ սենատին տւած Բարձրագոյն ուկազին:

Ապա՝ անցնում եմ «Ժամանակաւոր կանոններ»-ի վերջին՝ երրորդ կէտին:

Գ.

«Ժամանակաւոր կանոններ»-ի երրորդ կէտը կանոնաւորում է մեր վանականագոյքերի հարցը, և այն՝ այսպիսի §§-ներով:

«§ 1. Վանքապատկան գոյքերի կառավարութիւնը յանձնում է վանական իշխանութեան:

«§ 2. Վանքապատկան գոյքերի կառավարութեան

վրա հակելու համար կարող են հրաւիրւել թեմական առաջնորդի կողմից և աշխարհական անձինք՝ օգնելու վահական իշխանութեան):

«Նոր-Դար»-ի 1900 թւի №№ 55 և 56-ում զետեղւած՝ «Մեր վանքերի արդի դրամական և բարպահան տագնապի շուրջը» վերնագրով յօդւածս ամփոփեցի այսպիսի առղերով՝

«...Գլխաւոր մեղքը ընկնում է Մայր Աթոռի վրա, որի շնորհիւ, այսպէս ասում, «վահահայրութեան հարցը շարունակում է կրել իր անորմալ յատկութիւնները»:

«Թէ ի՞նչպէս լուծել օվանահայրութեան հարցը — այդ իրեն՝ Մայր Աթոռի պաշտօնական մարմինների գործն է:

«Իբրև ուշադրութեան արժանի առաջարկ, ինձ թւում է, թէ կարելի է պնդել հետեւեալ կէտերի վրա.

(ա) Աշխատել մտցնել յաջորդականութեան-հետեւողականութեան ուղղութեանը: Արա համար ինձ դիւրին է թւում վանահայրերին որոշ ուոճիկ նշանակել, իսկ վանքերն ենթարկել ս. Եջմիածնի անմիջական հակոգութեանը:

(բ) Վանքեր կառավարելու գործը պահանջում է մի շարք յատիւթեաններ և գիտութեաններ, որոնցից գուրկ չպիտի լինին նոյն իսկ ռոճիկ ստացող վանահայրերը: Յատիւթեանների շարքում առանձնապէս նշանակելի պիտի լինի վանահօր բարոյականը: Գիտութեանների շարքում՝ գիտութեաններին գիտելվելութեանը: Գիւղատնտեսական գիտելիքները՝ իբրև անհրաժեշտութիւն՝ պիտի մատուցող պարագաների համարանի առգելու մեջ նորութիւններ չեն, այլ՝ ցալսօր:

իսկ ինչ վերաբերում է վաճանայրերի բարոյականին վերաբերեալ հարցին, ինձ թւում է, որ այդ հարցն ինքն ըստ ինքեան կվերացւի, երբ մեր վանքերը կդադարեն աեադականութիւն, դառնալ վանահայրերի և, այսպէս ասում, պարտաւորւած կլինեն ծառայել իրենց ավատմական նշանակութեանը՝ բարոյական, մտաւոր խաւարի և տնտեսական ամայութեան մէջ լրւաստու և կենդանարարը մի-մի տարեր — «օպղիսներ» հանդիսանալ...»²⁸⁾:

«Ժամանակաւոր կանոններ»-ի մեր վանքապատկան գոյքերի կառավարութեան վերաբերեալ §§ -ների հրատարակումից յետով ևս ես ոչինչ ունիմ աւելացնելու վերը լիշածս յօդւածիս վերջին տողերի վրա, բայց չերծ ցանկութիւնից, որ մեր վանական իշխանութիւնները՝ զինւելով իրենց պաշտօնապէս վերապահւած իրաւունքներով (§§ 1 և 2)` շարունակ երևան հրապարակին իրենց բարոյական պարտաճանակն-նշան ցոյցերով: Վերջին տեսակի ցոյցերի կարեւորութիւնը զգացւում է նամանաւանդ այսօր, երբ «Ժամանակաւոր կանոններ»-ի երրորդ կէտը՝ մի անդամ ևս այնքան ինամբով զրի առնելով մեր վանական իշխանութիւններին ցայսօր իւրացրած իրաւունքները (պետ. օր. XI հատ. I մաս)` գալիս է շեշտելու պետութեան վարահութեանը դէպի մեր հոգեօր իշխանութիւնը: Այդ վարահութիւնը լաւում է «Ժամանակաւոր կանոններ»-ի երրորդ կէտի՝ և 1, և 2 §§ -ներից, որոնք, կրկնում եմ, նորութիւններ չեն, այլ՝ ցալսօր

28) Տես «Նոր-Դար», 1900 թ., №№ 55 և 56՝ «Մեր վանքերի արդի դրամական և բարոյական տագնապի շուրջը» յօդւածս:

Եղածի խնամքով զրի առնումն: Եւ ահա՝ հրապարակով լնդգծւած այդ վստահութեան հանդէպ է, որ մենք սպասում ենք մեր վանական իշխանութիւնների հայոցական պարուաճանալու-լեան ցոյցերին...

Թէ ի՞նչ ասել է՝ բարոյական պարտաճանաչութեան ցոյցեր մեր վանական կալւածների նկատմամբ — այդ պարզ է հետեւալից.

1902 թւին «Արարատ»-ի յունւար - փետրւար ամիսների տեսրերում դեսեղւեց մի վերին աստիճանի ուշագրաւ տեսութիւն՝ «Տեղեկագիր Ա, Բ, Գ, Դ, Ե, Վ, Ռ. (Վճամություն Ա, Բ, Վ, Ռ, Ե, Վ, Ռ. 1900 թ.)»²⁹⁾: Սհա այդ տեսութիւնն է, որին կարեղը է դիմել՝ ստանալու դրածս հարցի պատասխանը:

Բայտ այդ «Տեղեկագրի»՝ 1900 թւին մենք ունեիք՝

Վան- քեր.	Վանքերի եկամուտ.
Երևանի թեմում	47
Վրաստանի և Իմերէթի թեմում	14
Համախութեմում	2
Սստրախանի թեմում	0
Ղարաբաղի թեմում	13
Նոր-Նախիչեանի և Բես- սարաբիայի թեմում	3
Գուգարք	79
	— 1487 ր. 36½ կ.
	— 25 „ 72 „
	— 2 „ 61 „
	0 0 „
	+ 227 „ 29 „
	— 295 „ 74 „
	— 1584 ր. 14½ կ.

Այդպիսով՝ բայտ պաշտօնական «Տեղեկագրի»

²⁹⁾ Նոյնը տես ևս Միհմար վարդապետ՝ «Հայերը Ռուսաստանում», Վաղարշապատ, 1906 թ., էջ 21—39:

1900 թւին մեր 79 վանքերը, բնդիանուր առմամբ, ունեին 1584 ր. 14½ կ. մաս...

Այս 1584 ր. 14½ կ. մաս ունեին մեր 79 վանքերը 1900 թւին՝ չնայելով իրենց երեսն այնքան ընդարձակ հարուստ կալւածների՝ հանքեր, անտառներ, վարելահողեր, խոտանտղիներ, արօտատեղիներ, խալողի ազգիներ, չրաղացներ, կրպակներ, աներ, գիւղեր և այլն...

Այդուհանու կալւածներ և... մաս...

Մենք սպասում ենք համագույն իրաւաբանների, զիւղանտեսների, անտառապետների, հանքագէտների և այլն միջամտութեան և օգնութեան վերջ տալու այդ «մաս»-ին: «Ժամանակաւոր կանոններ»-ի երրորդ կէտի § 2-ը, կրկնում եմ, մի անգամ ևս զրի առնելով մեր վանական իշխանութիւնների ցայսօր ունեցած իրաւունքը՝ լայն ասպարէզ է բանում մասնագէտների միջամտութեան և օգնութեան: Մնում է յուսալ և ի բոլոր սրաէ ցանկանալ, որ շեշտածս մասնագէտների միջամտութիւնն - օգնութիւնը յարդուի մեր վանական իշխանութիւնների շրջանում ևս, և այն - մի անգամ ընդ միշտ՝ իբր conditio sine qua non! Եւ թող գէպի զիտութեան պէս-պէս նիւղերը տաժած յարդանքի հայոցու շեշտած լինի մեր վանական իշխանութիւնների արտայալուելիք բարոյական պարտաճանաչութեան ցոյցերից մէկը...

[թ. Գ.:

Ազգիս Վեհան իր՝ 1906 թւի մայիսի 10-ի № 549 կոնդակով ժողովրդին է շնորհել, «Ժամանակալ առաջնորդների, լաշորդների, գործակալների և հոգեւոր վարչական հաստատութեանց պաշտօնեանների ընդունութեան

Էրաւանիւ որից յետով քնարեալները կը հաստատեն
իրենց պաշտօնին պետութեան կողմից սահմանւած
օրինական հանապարհով):³⁰⁾

Հստ իս՝ ապագակի առջիւածով ընդունվի վահահայրե-
րն պիտ իւրացւի վանական գոյքերի և եկամուտների
կառավարութեան գործո՞ իբր հաս-ից-ած մամադէտ-
ներից և ժողովրդի ընդունվան հոգաբարձունե-
րից կազմւած պաշտօնական մարմինների նախադահ-
ների...]

Ի մի խմբելով վերը բերածս շեշտերը՝ տեսնում ենք,
որ 1905 թւի օգոստոսի 1-ի Բարձրագոյն հաստատ-
ւած «Ժամանակաւոր կանոններ»-ը գալիս են մի ան-
դամ ևս ամրապնդելու մեր հոգեոր իշխանութեան
և սրա Պետի ազգիս Վեհափառ Կաթողիկոսի պաշ-
տօնական դիրքը և իրաւունքները՝ այսպէս ասած,
պաշտօնական մօտեցնելով հայ ժողովրդին իր եկեղե-
ցուն ու դպրոցին:

Մեղ մնում է լրջութեամբ իւրացնել այդպիսով
մեր աղջային միաբանութեան արած շնորհը...

19 $\frac{\text{VIII}}{25}$ 05 թ.,

Մուկւա:

III.

ՄԱՍՆԱԿԻ ՀԱՐՑԵՐ

³⁰⁾ Վեհի կոնդակը տես «Ալիք», 1906 թ., № 15:

Ա.

ԹԻՖԼԻՍԻ ՄՈՂՆՈՒ ԵԿԵՂԵՑՈՒՄ ՍԵՊՏԵՄԲԵՐԻ
4-ԻՆ ԿԱՅԱՑԱԾ ԸՆՏՐՈՒԹԵԱՆ ԱՌԹԻՒ³¹⁾

Սեպտեմբերի 4-ին Թիֆլիսի Մողնու Եկեղեցում
գումարւել է թեմի սրբազն առաջնորդի առաջար-
կութեամբ ծխականների ընդհանուր ժողով։ Աւագ
քահանայ Տէր-Բարսեղեան՝ բանալով ժողովը՝ պարզել
է վերջնիս նախառակը—ընտրել շոգաբարձու բացւե-
լիք Գայեանեան դպրոցի համար։
Ժողովը նախառակ է ընտրել պ. Տ. Առաքելեանին։
Ապա՝

«Ամենից առաջ պարզվեց այն հարցը, որ պէտք է
ընտրել հոգաբարձութիւն ոչ թէ միայն բացվելիք
դպրոցի համար, այլ ընտրել ծխական հոգաբարձու-
թիւն, որը, համաձայն Կովկասի Փոխարքայի կազմաձ
և Բարձրագոյն հաստատված ժամանակա-որ հանոններէ
§ 4-ի, պէտք է հոգ տանէ հիմնել դպրոց, հիւանդա-
նոց, անկելանոց, ապաստարան և այլ բարեգործական
հաստատութիւններ ծխական ժողովրդի համար։

31) Արտասպում է «Նոր-Դարս»-ի 1905 թվ № 16-ից։

«Հիմնելով այդ կէտի վրա, ժողովի նախագահը առաջարկեց ընտրել ոչ թէ 2, այլ 4 հոգաբարձուներ, որոնք երէցիոնի հետ միասին կազմելով 5 - անդամեան հոգաբարձութիւն, միացած ոչերով կաշխատեն իրազորձել վերոնիշեալ նպատակը։ Այդ առաջարկութիւնը հաւանութիւն դատաւ և ժողովը՝ դիմելով ընտրութեան, դադանի ըուէարկութեամբ ընտրեց 4 հոգաբարձու և երկու կանդիդատ»³²⁾։ Ընտրութիւնն ապա հաստատել է թեմի սրբազան առաջնորդի կողմից³³⁾։

Այդ ընտրութեան լուրն առնելուն պէս՝ դիմեցի ազգիս Վեհափառ Հայրապետին հետեւեալ հեռազրով՝ «Էջմիածին։ Նորին Սրբութեան ամենայն Հայոց Վեհափառ Կաթողիկոսին։

«Թիֆլիսի Մողնու եկեղեցու ընտրութիւնները բայբացիչ են. նրանք հակառակ են (այստական օրէնքի) XI հատորին (I մաս) և 1874 թւի կանոններին; Նոր Ժամանակաւոր կանոնները նախատեսնում - հիմնում են հոգաբարձութիւն արդիւնքներ ստանալու, գտնելու և դպրոցներ բանալու համար, և ոչ՝ դպրոցները կառավարելու։ Էական է երկու հոգաբարձութիւնների զատ-զատ գոյութեան սկզբունքը»³⁴⁾։ Դպրոցների վար-

³²⁾ Տես «Մշակ», 1905 թ., № 178։

³³⁾ Տես «Մշակ», 1905 թ., № 183։

³⁴⁾ Յ. Գ.։ Թերևս տեղ-տեղ (զորօր., գիւղերում, երբեմն՝ քաղաքներում իսկ) դժափին լինի իրավանացնել դպրոցական կալւածական և վարչական հոգաբարձութիւնների գատ-զատ գոյութեան սկզբունքը, —այդ դէպքերում կարելի է ընտրել մի հոգաբարձութիւն՝ իրացնելով սրան՝ և կալւածականի, և վարչականի ֆունկցիաները։ Սակայն այդ ամեն անդամները մի հոգաբարձութիւնը՝ իբր այդպիսին՝ կարող է գոյութիւն ունենալ

չականի հոգաբարձուների ընտրւելու եղանակը, քանակը և իրաւունքները պիտի որոշւեն հոգեւոր իշխանութեան կողմից»։

Բարոյական պարտականութիւնս համարելով հրապարակի վրա դնել այդ հեռազիրս՝ ես թոյլ եմ տալիս ինձ կցել այստեղ երկու խօսք ես։

1874 թւի յուլիսի 19-ի կանոնները թանգ են մեղ համար նրանցում գծւած դպրոցական վաշտականի անկախութեան շեշտով, —մի շեշտ, որն այնքան խնամատարութեամբ զրի է առնւած 1905 թ. օգոստոսի 1-ին կառավարիչ սենատին տւած Բարձրագոյն ուկազում ես։ Օգոստոսի 1-ի «Ժամանակաւոր կանոններ»-ի § 4-ը նախատեսնում է դպրոց հիմնելը, դպրոց բանալը, դպրոցի վաշտականը նախակարգաբելը, և ոչ՝ դպրոց կառավարելը։

Թիֆլիսի Մողնու եկեղեցու սեպակաների 4-ի ընտրողները խառնել - միացրել են 1874 թւի յուլիսի 19-ի կանոններով վաֆա-աժը՝ յանիրաւի՛ «հիմնելով» օգոստոսի 1-ի «Ժամանակաւոր կանոններ»-ի § 4-րդի վրա։ Այդպիսով սակ է առնւած պետական օրէնքով (XI հատ. I մաս) մեր հոգեւոր իշխանութեան

միայն և եթ ազդիս Վեհափառ Հայրապետի հածութեամբ և յատուկ կոնդակով։

Ես կամիմ ասել, որ, ի պահանջման հարկի, դպրոցական կալւածական և վարչական՝ ըստ օրինի (պետ. օրէնքի XI հատոր, I մաս, հրատ. 1896 թ.)—1874 թվ յուլիսի 19-ի կանոններ—1905 թվ օգոստոսի 1-ի Բարձրագոյն ուկազ և ժամանակաւոր կանոնները) զատած հոգաբարձութիւնները կարող են միացւել, եթէ լինի ազգիս Վեհի հածութիւնը և յատուկ հրամանը, և ոչ՝ իբր 1905 թվ օգոստոսի 1-ի «Ժամանակաւոր կանոններ»-ից հետեցնելիք անհրաժեշտութիւն...

իւրացրած իրաւունքը՝ նախագծել - կարգադրել մեր
դպրոցների վարչականի ամեն ինչ վերաբերեալը:

Թիֆլիսի Մողնու եկեղեցում սեպտեմբերի 4 - ին
կայացած ընտրողական ժողովը պաշտօնապես պարտա-
ւոր էր ընտրել 2 (Երկու) հոգաբարձու բացւելիք Գա-
յեանեան դպրոցի համար, և մինչիւն այդքան: Այդ
օրը հայ ժիական բայրոցի վարչական հաղթ ընտրութիւն
էր, և ոչ հայ եկեղեցու ժիական հոգաբարձու նեան
ընտրութիւն: Հետեապէս³⁵⁾ ժողովի նախագահ
սկզբից մինչեւ վերջ պիտի մնար աւ. ք. Գր. Տէր-
Բարսեղեանը՝ իբր ներկայացուցիչ հոգեոր վարչու-
թեան և իբր վերջնիս կամքն ըստ ամենայնի անխառնու-
իրագործող:

Այլ վերպ վերաբերել հարցին — կնշանակի՝ ջնջել
1905 թ. օգոստոսի 1-ի Բարձրագոյն ուկազով մի ան-
դամ ևս շեշտած 1874 թ. յուլիսի 19-ի կանոնները...

19^{IX}
15-05 թ.,
Մոսկավ:

³⁵⁾ Յ. Գ. Բայր մտաց 1889 թի Մակար Կամողիկոսից
հաստատած «Կանոնը եկեղեցական-ծխական ուսումնարանաց Հա-
յոց»-ի (Կաղարշապատ, 1889 թ., «ի տպարանի Սրբոյ Կամու-
ղիկէ Էջմիածնի») § 28-ի, ուր կարդում ենք — «Ընտրութիւն հո-
գաբարձուաց և անձնափոխանորդաց լինի հրամանաւ Առաջնորդաց
ընդ ծեռն փոխանորդաց և գործակալաց ի գաւիճս եկե-
ղեցնաց ըստ պամ եղանակին և այլն»: 1905 թին այդ «Կա-
նոնը»-ը դեռ փոխած չէր: Փոփոխութիւնը բերեց միայն ազգիս
Վեհափառ Հայրապետի 1907 թ. յունարի 11-ի № 40 կոնդակով
«ի կատար ածել»-ու պատվիրած «Հայաստանեաց առաքելական
սուրբ եկեղեցու ծխական կանոնադրութեան» § 26-ը, որը կանո-
նադրում է — ժողովը բացւելուց իւսոյ «ծեռնարկնել նախագահի
ընտրութեան» (Տես «Արարատ», 1907 թ., յունար՝ Յաւելած):

Բ.

ԱԽԱԼՑԻԱՅԻ ԵԿԵՂԵՑԱԿԱՆ - ԾԽԱԿԱՆ ԵՐԿ-
ՍԵՌ ԴՊՐՈՑՆԵՐԻ ՀՈԳԱԲԱՐՁՈՒԹԵԱՆ ԸՆՏՐՈՒ-
ԹԵԱՆ ԱՌԱԹԻԻ³⁶⁾

Ախալցիսայի եկեղեցական-ծխական դպրոցի հոգա-
բարձութեան ընտրութեան մասին «Արշալուս» թեր-
թը «մի անգամ ևս շեշտում է, որ ծխական ժողով-
ների նախագահը պիտի լինի ժողովրդի կողմից ընտ-
րուած: Եթէ այդ մասին օրէնսդրը մէջ չիշատակուած
չէ, այդ դեռ չէ նշանակուած, թէ հակառակը պիտի
լինի: Օրէնքի ընդհանուր տրամադրութիւնը և առողջ
լոգիկան այդպէս են թելազրում և Թիֆլիսի թեմա-
կալ առաջնորդի պաշտօնական կարգադրութիւնը ժո-
ղովրդի կողմից ատենապետ ընտրելու մասին, մի
պարզ ապացուց է մեր ասածին»³⁷⁾:

Այդ առթիւ խոնարհաբար խնդրեմ տեղ տալ հե-
տեւալ երկուղիս:

Ըստ ռուս պետական օրէնքի՝ մեր դպրոցների հա-
մար օքէնիւ սահմանողն է ամենայն հայոց Վեհափառ
Կաթողիկոսը: Այդ օրէնքի վերջին խմբագրութիւնն է

³⁶⁾ Արտաստանում է «Նոր-Դար»-ի 1906 թի № 18-ից՝
«Նամակ խմբագրութեան»:

³⁷⁾ Տես «Արշալուս», 1905 թ. № 28՝ «Թոհղ գործը ոգևորէ»
(առաջնորդող):

1889 թւի՝ Մակար Կաթողիկոսից հաստատած՝ «Կանոնք Եկեղեցական-ծխական ուսումնարանաց հայոց» հրատարակութիւնը, որը, հարկաւ, պարագաւառական էր Ավալցիսայի ընտրողների համար ևս:

1889 թւի «Կանոնք»-ի § 28-րդում կարդում էնք՝ «Ընտրութիւն հոգաբարձուաց և անձնափոխանորդաց լինի հրամանաւ Առաջնորդաց ընդ յեւն ժոխանոցաց և ժողովականաց ի գաւիթս Եկեղեցեաց և այլն»³⁸⁾:

³⁸⁾ Տես ևս «Նոր-Դար», 1905 թ., № 16՝ «Թիֆլիսի Մողնու Եկեղեցում սեպտեմբերի 4-ին կայացած ընտրումեան առթիւ նամակ» (Արտատպատ է վերը):—Յ. Գ.: Ի դէպ. Ախալցիսայի դոյն այդ ընտրումեան վերաբերեալ վէճի առթիւ «Մշակ»-ը «Հարկաւոր է համարել յայտնել» իր «կարծիքը»: Ըստ «Մշակ»-ի՝ «ժողովը պէտք է բանայ յաջորդը կամ զործակալը և յայտնէ ժողովի գումարման նպատակը կամ օրակարգը: Մնալով հանդերձ ժողովի նախագահ ի պաշտօնէ, նա պէտք է առաջարկէ ժողովին ընտրել իր համար ատենապետ և քարտուղար: Այնուհետև ժողովի վհճաբանութիւններ ղեկավարողը ատենապետն է, իսկ յաջորդ նախագահը լոկ հսկող և դիտող պէտք է հանդիսանալ, միջամտելով միայն այն ժամանակ, երբ նկատէ, որ ժողովը շեղվում է սահմանված օրէնքից կամ կանոններից և հարկաւոր դէպքում բացատրութիւն տայ օրէնքի կամ կանոնների մում կէտերի մասին: Ինչպէս մեզ հաղորդում են, Թիֆլիսի թեմի առաջնորդը այդ մտքով էլ լուծել է Ախալցիսայի վէճը, և լուծել է միանգամայն գոհացուցիչ կերպով» (Տես «Մշակ», 1905 թ., № 185): Սակայն միանգամայն ինանիր և նոյն իսկ անտեղի է «Մշակ»-ի այդ «կարծիքը»-ը: 1905 թւին դեռ չփոխւած 1889 թւի «Կանոնք»-ի տեկստը պարզ է ինքնին: Եւ մեզ մնում է միայն իշեցնել 1907 թւի «Մշակ»-ին 1894 թւի «Մշակ»-ի՝ «Ահա մեր պահանջը» առաջնորդողի հետեւալ՝ այնքան շեշտակի հրապարակ նետած կտորները»

«Մենք պահանջում ենք, որ բարձր իշխանութիւնը մոյլ չը տալ, որպէս զի այս կամ այն պաշտօնեան, ով և լինի նա, ինչ դիրք և ունենայ նա, իախտի օրէնքը... Եթէ չէք հաւանում գոյութիւն ունեցող կանոնադրութիւնը..., այն ժամանակ փոխեցէք այդ տեսակ կանոնադրութիւնը...: Բայց քանի որ այդ չէ արված, քանի

Ամենայն հայոց Վեհափառ Կաթողիկոսից հաստատած օրէնքը խախտել կարող է միայն և Ե՛ւ նոյն ինքն ամենայն հայոց Վեհափառ Կաթողիկոսը: Տեսապէս՝ մի ամդամ ևս շեշտում եմ այդ³⁹⁾—Թիֆլիսի սրբազն առաջնորդի «պաշտօնական կարգադրութիւնն» առաջընթեալ էր:

Իսկ ինչ վերաբերում է «օրէնքի ընդհանուր արամագրութեանը»—այդ «արամագրութիւնը» պարզորշ շեշտով գծւած է, ի միջի այլոց, 1905 թ. օգոստոսի 1-ի Բարձրագոյն հաստատած «Ժամանակաւոր կանոններ»-ի Բ՝ մեր թեմական հոգեոր գպրանոցների կալւածներին վերաբերեալ կէտի § 2-րդում, ուր կարդում էնք՝

«Հոգաբարձական անդամներ ընտրելու համար, թեմական առաջնորդի կամ նրա կողմից նշանակած անձի նախագահութեամբ, հրաւիրւում են» և այլն:

որ կայ որոշ կանոնադրութիւն... մենք պահանջում ենք, որ ամենից առաջ ինքը պաշտօնեան, ինքը իշխանութեան ներկայացուցիչը յարգի օրէնքը, յարգի կանոնադրութիւնը, և մոյլ չտայ իրան՝ կամայականութիւն, բռնութիւն, անտեղի ծնշում» (տես «Մշակ», 1894 թ., № 84) և—կաւելացնեմ ես՝ օրէնքի ինքնին պարզ տեկստին իր ուզած մեկնութիւնը... .

Աղք, գեղեցիկ էր «Մշակ»-ի 1894 թւի խօսքը, և որքան այդ խօսքը չէր համապատասխանում նոյն «Մշակ»-ի գործին 1894 թւին, նոյնքան դոյն այդ՝ 1894 թւի խօսքը չի համապատասխանում նոյն «Մշակ»-ի 1905 թւի «կարծիք»-ին... .

Կրկնում եմ՝

1889 թւի «Կանոնք»-ը փոխել շատ հեշտ էր—բաւական էր արդի կիրառող կոնդակը: Սակայն 1905 թւին չփոխւած «Կանոնք»-ը պիտի յարգէր դոյն այդ 1905 թւին... .

³⁹⁾ Տես իմ՝ «Եկեղեցական-ծխական դպրոցների ժամանակաւոր կանոնները» Բ («Նոր-Դար», 1906 թ., №№ 24, 25 և 29: Աղդ յօդւածիս սկիզբը (Ա) տես «Նոր-Դար», 1905 թ., №№ 44 և 53):

Թոյլ եմ տաղիս ինձ աւելացնել, որ նախաժամկետ՝
հարցի նկատմամբ ոչինչ նորութիւն չեն բերել աղղիս
Վեհափառ Հայրապետի 1905 թւի սեպտեմբերի 10-ի
«Ծխական դպրոցների ժամանակաւոր հրահանգներ»-ը
ևս⁴⁰⁾:

Ազգիսով՝ անհաճայայններ՝ «առողջ լողիկայ»-ին
մնում է որոնել այլ տեսակի «պարզ ապացոյցներ»...

19 $\frac{1}{14}$ 06 թ.,

Մոսկվա:

գ.

ԱՐՑԱԽԻ ԹԵՄԱԿԱՆ ՀՈԳԵԿՈՐ ԴՊՐԱՆՈՑԻ ՀՈ-
ԳԱԲԱՐՁԱԿԱՆ ԸՆՏՐՈՒԹԵԱՆ ԱՌԹԻՒ⁴¹⁾

«Հովիւ» շաբաթաթերթի 1905 թւի № 6 -ում
կարգում ենք, որ Շուշու (Արցախի) «Թեմական գրա-
ռուցի հոգաբարձութեան ժամանակամիջոցը լրացած
լինելով՝ թեմի գերա առաջնորդը կարգադրել է պատ-
գամաւորական ընտրութիւններ կատարել Փախարայի
գուած նոր կանոններ՝ համայաց՝ 12 հոգաբարձու ընտ-
րելու համար։ Սա առաջին դեպքն է, որ ամբողջ
թեմը մասնակցում է ընտրութեանը»⁴²⁾:

Կովկասի Փոխարքայի հրատարակած «Ժամանակա-
ւոր կանոններ»-ին նւիրածո յօդւածում⁴³⁾ աշխատել
եմ, ըստ կարեացս, պարզել և ընդգծել այդ «կանոն-
ներ»-ի խական իմաստը։ Պարզել և ընդգծել եմ, որ
այդ «կանոններ»-ը կարող են գոյութիւն ունենալ
մեզ համար միայն և եթ մեր դպրոցական գործի
գոնականին նկատմամբ, այն էլ՝ միայն որոշ չափով,
և ոչ երբեք դոյն այդ գործի վարչականին նկատմամբ։

⁴¹⁾ Արտատպում է «Նոր-Դար»-ի 1906 թւի № 55-ից։

⁴²⁾ Տես «Հովիւ», 1905 թ., № 6 «Սանր լուրեր»։

⁴³⁾ Տես «Նոր-Դար», 1905 թ., №№ 11, 14, 19 և 20
(արտատպած է վերը՝ էջ 20—70):

⁴⁰⁾ Տես «Արշալուս», 1905 թ., № 13 և «Արարատ» 1905
թ., հոկտեմբ.՝ — «Ծխական դպրոցների ժամանակաւոր հրահանգ-
ներ»-ի մասին տես ծանօթ. 39-ում ակնարկած յօդւածում։

Համաձայն աղջիս Վեհափառ Կաթողիկոսի 1905 թվի սեպտեմբերի 10-ի «Շրջարերական կոնդակ»-ի⁴⁴⁾ Փոխարքայի «Ժամանակաւոր կանոններ»-ին ունինք հետեւյու մեր Եկեղեցական-ծխական դպրոցների վարչականների (Շողարարձութեան ընտրութեան) հարցում ևս: «Եկեղեցական-ծխական գլուխների ժամանակաւոր կանոններ»-ին նւիրածս յօդւածում⁴⁵⁾ ասացի աղջիս Վեհի այդ կոնդակի առթիւ ասելիքս, աւելացնելով որ, ինչ և իցէ, մեղ պէտք է խոնարհել աղջիս Վեհի կամքի առաջ:

Նմանօրինակ կոնդակ ցայսօր դեռ գրյութիւն չունի մեր Եկեղեցական դպրոցների վարչականների նկատմամբ, մինչդեռ Շուշում արդէն կարգադրում է «պատգամաւորական ընտրութիւններ կատարել Փոխարքայի գուայն հանունների համայան»...

Այդ ուր ենք զնում մենք վերջապէս...

Շարունակ տարիներ աղաղակել՝ — պետութիւնը լշելով միշտամի մեր գլուխներին, և այսօր այդպէս գործել, այդպէս ըմբռնել տալ ժողովրդին մեր գլուխների անկախութեան գաղափարը...

Ենէ մեր Վեհի կամքն է թեմական գլուխներին նկատմամբ ևս ընդօբնակել Կովկասի Փոխարքայի «Ժամանակաւոր կանոններ»-ի շեշտը, թո՞ղ լուի այդ կամքը պաշտպանութեան առեւտելու մեջ դպրութեան աղջիս Վեհի որոշումը գործի անկախութեան գաղափարը...

⁴⁴⁾ «...բաց ի Բեսսարաբիոյ» (Տես «Արարատ», 1905 թ., հոկտեմբ., ցէ՝ 863—864):

⁴⁵⁾ Տես «Նոր-Դար», 1905 թ., №№ 44, 53,— 1906 թ., №№ 24, 25, 29:

համապատասխան կոնդակ: Սակայն, ինչ ասել է, երբ այս կամ այն թեմական առաջնորդն ինքնաշխատ կարգադրում է կայացնել, թեմական դպրանոցի վարչական ընտրութիւնը՝ «Փոխարքայի առւած նոր կանոնների համաձայն»: Բայ իս՝ այդ տեղ խախաւում է և մեր Վեհի իրաւունքն ու զիրքը, և թեմական դպրանոցի կաթողիկոսական վաւերացման կնիքը կրող և ցայսօր գոյութիւն ունեցող «Կանոնադրութիւն»-ը, և, վերջապէս, ամենքիս միահամուռ իղծը՝ վեհապար տէր լինել մեր գլուխների գործի և այդ իսկ իմաստով — գլուխների գործի անկախութեան գաղափարով — զինւած աւեսնել համայն ժողովուրդը:

Դնելով այդ հարցը՝ ևս միանգամայն հեռու եմ որևէ մէկին անծնական վիրաւորանք պատճառելու արամագրութիւնից, ոչ — ևս կամի՞մ միայն պարզ ապարացման դիրքի վրա առեւնել առնելի վեհափառ հայրապէտութեան վեր դպրոցական գործի անկախութեանը՝ պետական մշամանութեան նկարչածն:

Հարկաւ, ոչ որ չի կարող գէմ լինել, որ մեղանում ևս մանկավարժական և այլ ասպարէզներում ընդօրինակեն պետական նպատակայարմար և զրաւիչ պէս պէս կարգադրութիւնները: Այս: Սակայն, նախ քան խօսքից գործին անցնելը՝ ամեն ընդօրինակելի կարգադրութիւն նախօրօք պիտ անցնի մեր աղջային գործի զեկափար շրջանների բովից, և, զորօր, գլուխների վարչականի հարցում մեղ համար չիք օրէնք առանց մեր Վեհի կամքի:

Աղջիս Վեհափառ Կաթողիկոսն ունի իրաւունք՝ Կովկասի Փոխարքայի «Ժամանակաւոր կանոններ»-ը պարտադիր հրատարակել մեր թեմական դպրանոց-

ների վարչականի նկատմամբ ևս: Սակայն մինչեւ որ
ինքը վեհն այդ չի արել, ոչ մի թեմական առաջնորդ
չունի իրաւունք՝ բայց իսկ «Կանոններ»-ի կար-
գաւորել մեր դպրոցական գործը՝ միաժամանակ անտես
առնելով եղած դպրոցական «Կանոնադրութիւն»-ը:

Կրկնում եմ—այդ է և օրէնքի շեշտը, և բարո-
յական պարտաճանաչութեան պահանջը...⁴⁶⁾

19 $\frac{\text{III}}{10}$ 06 թ.,

Մոսկավ:

⁴⁶⁾ Այդ առմիւ ասպա՝ «Նոր-Դար»-ի նոյն 1906 թվի № 62-
ում լոյս տեսաւ Սրբափի թեմական առաջնորդ՝ Աշու Եպիսկո-
պոսի հետեւալ գրութիւնը՝

«Նամակ Խճառչյունեան»

««Նոր-Դար»-ի 55-րդ համարում բժիշկ Սիմէօն Շահ-Նա-
զարեանցը իւր զարմանքն է յախում, որ ես մեմիս դպրա-
նցի հոգաբարձական ընտրութիւնը կատարելու համար կարգադ-
րել եմ հրահանգուել փոխարքայի ժամանակաւոր կանոններով,
մինչեռ, ասում է պ. բժիշկը, Վեհափառ Հայրապետի կողմից
այդ առմիւ կոնդակ չի տրուած:

«Թիւրիմացութեան առաջն առնելու և ընթերցող հասարա-
կութիւնը մոլորութիւնից ազատ պահելու համար պարտը եմ
համարում յախուել, որ Վեհափառ Հայրապետը դեռ անցեալ
տարրուայ օգոստոս ամսին իմ հեռագրին, որով մոլուտութիւն էի
խնդրել նոր հոգաբարձական ընտրութիւն կատարելու, բարեհա-
ծել էր պատասխանել ինձ օգոստոսի 17-ին հետեւալ հեռագրով.
«Թոյլ եմ տալիս ծեղ զպրանցի հոգաբարձուների ընտրութիւնը
կատարելու, առաջնորդուելով ժամանակաւոր կանոններով, որոնք
սրա հետ ուղարկում են»:

«Ապա ուրեմն նորին Վեհափառութիւնը բարեհածել է ըն-
դունել փոխարքայի ժամանակաւոր կանոնները նաև զպրանցների
հոգաբարձական ընտրութիւնների համար, և ես ընաւ կամայա-
կանորէն չեմ վարուել վերոդիշեալ կանոնները գործադրելով թե-
միս զպրանցի նոր հոգաբարձուների ընտրութեան համար:

Աշու եպիսկոպոս

Շուշի, 28 մարտի:

Դ.

«Տաշոթ ԴՊՐՈՑՆԵՐԻ ՎԻՃԱԿԻ»⁴⁷⁾

... Բատ երեսովթին՝ թիւրիմացութիւններից զերծ
չեն մնացել ուրիշները ևս: Այսպէս՝

«Մշակ»-ի 1907 թվի № 34-ում, ի միջի այլոց,
կարգում ենք՝ «...հետեւեց առաջնորդի շրջաբերա-
կան հրամաններ», որին սիրով ընդունեց մեր հոգաբարձու-
թիւնը և մէջ տեղ զլորեց 74-ի կանոնադրութիւնը (?)
ու նրա հիմամբ մէջ տեղ բերեց վժողնում ենք ան-
հետեւանք» և փառարինութիւն մեր գոհարները, որ
նրանք այնքան փոթիկուութեամբ հրամցրին ուսուց-
չական խմբին, հիմնվելով առաջնորդի շրջաբերական
հրամանի վրա: Բայց, բայց այդ 74-ի կանոնադրու-
թիւնը հոգաբարձուներին տանում է մինչեւ հաշուի
նատելը միայն, յետոյ ել շատ շատ բերում է իրեւ-
մանեկներ և բաղմեցնում է աշակերտական քննու-
թիւններին. այսպէս է թէ ոչ թող որ նա, այդ
փատած կանոնադրութիւնը, տասնեակ ուսուցիչներին
շարում է թեմական տեսչի մատոների ժայրին: Ել այն

⁴⁷⁾ Արտատպում է «Հովիւ»-ի 1907 թվի №№ 16 և 17-ից:
Այսուեղ արտատպում է «Հովիւ»-ում լոյս տեսածի մի կտորը
միայն. յօդւածիս զերագոյն մասը, և այն՝ աւելի ընդարձակած,
զետեղած է վերը՝ էջ 42—57 [թ. Գ.]:

ժամանակ կ տնօրինութիւն մերը աքսորվում է Սիբիր, ինչպէս որ հեշտութեամբ ցանկացան աքսորել դժբաղդ ժառան ժողովները »⁴⁸⁾...

Ապա «Մշակ»-ի նոյն № 34-ում գետեղւած՝ Ախալցխալի երկսեռ ուսումնարանների ուսուցչական խմբի ոչ-պաշտօնական ժողովի «Արյանաժըն-Շետ» մէջ, ի միջի այլոց, կարգում ենք՝

«Ախալցխալի հայոց երկսեռ ուսումնարանների ի ներքոյ ստորագրեալ ուսուցիչները վեարվարի 6-ի ոչ-պաշտօնական ժողովում հոգաբարձութեան № 54 զրութիւնից տեղեկանալով որ առաջնորդը՝ հրամայել է դպրոցի վարչական հաստատութիւնից դեկավարվել 1874 թւականի կանօնադրութեամբ, դասաւ որ... 2) Մենք ահա 5—6 ամիս է, որ դպրոցական դորձերը վարել ենք 1905 թւականի նախագծով, ուրեմն և դոյութիւն է ունեցել խառն ժողովը իր իրաւունքներով, իսկ այժմ 1874 թւի կանօնադրութեամբ վերանում է խառն ժողովի դոյութիւնը, և դրանով մեր առանց այն էլ անարխիալի ենթարկված դպրոցները վերչնականալու քայլայման են ենթարկվում: ... ուստի միաձան որոշեց. ա) Ազքի առաջ ունենալով, որ առաջնորդի բերած պատճառները—Փոխարքայի հրատարակած ժամանակաւոր կանօնադրութիւնը և իրեւթէ հոգաբարձական մարմինների դիմումները և այն—ոչ մի հիմք չեն տալիս մեր սրբազն առաջնորդին այդպիսով մի յետադէմ, անմիտ և նոյն իսկ տղէտ հրաման արձակելու, մէնք այսօրվանից յայտնում ենք

⁴⁸⁾ Տես «Մշակ», 1907 թ., № 34՝ «Ուսումնարանական ցաւերից» (Ախալցխա, 5 փետրւարի):

ի գիտութիւն հայ հասարակութեան և այդ հրամանը արձակող սրբազն հօրը, որ մէնք մի անգամ ընդմիշտ հրաժարվում ենք ընդունել այդ հրամանը օվենական և հպատակիվել նրա ապագայ հետևանքներին և այլն»⁴⁹⁾...

Որո՞նք են 1874 թւի յուլիսի 19-ի Բարձրագործ հաստատւած կանոնների շեշտերը՝ մեր եկեղեցական-ծխական դպրոցների վարչական հաստ նկատմամբ—այդ հարցի պատասխանն ես բերել եմ վերը՝ քաղելով դոյն այդ կանոնների տեկստը բառացի՝ Ապա. Փոխարքայի «Ժամանակաւոր կանոններ»-ին իր ժամանակին նւիրածս յօդւածում⁵¹⁾ ես, ըստ չափու կարեացս, կրկնում եմ, պարզել եմ, որ Փոխարքայի «Ժամանակա-նոր կանոնները» և այլ կամ համ գործ ունեն մեր դըպրոցների վարչականի հետ: Ասել է եթէ հանդիպագնելու լինենք Վրաստանի և իմերէթի թեմի առաջնորդի հրամանը» («Հրչաբերական հրամանը») — id) 1874

⁴⁹⁾ Տես «Մշակ», 1907 թ., № 34՝ «Նամակներ իմբագրութեան»—«Արձանագրութիւն»: Աղ «Արձանագրութիւն»-ը վերջանում է հետևեալ «Կոչո-ով»

«Կոչ ենք անում մեր պաշտօնականից բոլոր ուսուցիչներին, ուսուցչական խմբերին, առաջ ուսուցիչներին և տեսուչներին յանուն արդարութեան, յանուն կրթական գործի վեհ և բարձր միսախալի թողնել իրանց անտարքերութիւնը և դատապարտել լոռութիւնը, մոռանալ մի բօպէ աղա հոգաբարձուների ու ամենակարող առաջնորդների փշաբաղող հրամանները և ծայն բարձրացնել, աղաղակել ամբողջ հոգով, անհատնելի եռանդի ամբողջ թափով բողոքել այս բոլոր քայլահից ու աւերիչ ակտերի դէմ: Ընկերներ, սմափեցէք, միացէք, պաշտպանեցէք ծեր իրաւունքները, պաշտպանեցէք մանաւանդ մեր մանուկ սերնդի արդար ու ամենքիս սրտին մօտիկ պահանջները»:

⁵⁰⁾ Տես վերը՝ էջ VI—VII, 6—7, 49—50, 51:

⁵¹⁾ Տես «Նոր-Դար», 1905 թ., №№ 11, 14, 19 և 20՝ յօդածս (արտատպւած է վերը՝ էջ 20—70):

թւի յուլիսի 19-ի Բարձրագոյն հաստատւած կանոնների և 1905 թւի օգոստոսի 1-ի «Ժամանակաւոր կանոններ»-ի հետ, կտեսնենք—միանդամայն հակառակ «Մշակ»-ի «Գլուխաց» խմբագրական կրկնակի՛⁵²⁾ «բացատրութիւններ»-ին—որ 1874 և 1905 թ-երի այդ՝ պետական օրէնքի ոյժ ունեցող կանոններից ամենավե շնչառական կանոնների մասին 1907 թ-ի «Հյանձնելուական հրանակը»:

Յիրաւի.

Վերն արդէն ասացի, որ կապել 1874 թւի յուլիսի 19-ի կանոնները 1905 թւի օգոստոսի 1-ի «Ժամանակաւոր կանոններ»-ի հետ չի կարելի: «Ժամանակաւոր կանոններ»-ում և ոչ մի խօսք կամ ակնարկ իսկ կայ 1874 թւի կանոնների մասին: 1874 թւի կանոնները յիշած են՝ իր պարտադիր՝ 1905 թւի օգոստոսի 1-ի Բարձրագոյն ուկազում, և ոչ՝ Փոխարքայի «Ժամանակաւոր կանոններ»-ում, և՝ իր այդպիսիք՝ յիրաւի՝ պարտադիր են «մինչև մշտական կանոնադրութեան մշակումը և հաստատութիւնը»:

1874 թւի յուլիսի 19-ի կանոնների պարտադիր շեշտերը մեզ արդէն յայսնի են դոյն այդ կանոնների վերը⁵³⁾ լրիւ բերածս տեկստից: 1874 թւի կանոնների տեկստում և անմի խօստ կայ մեր «հոգաբարձութիւններ»-ի և սրանց իրաւանց մասին, անմի խօստ կայ մեր ուսուցիչների և տեսչի յարաբերութիւնների մասին, անմի խօստ կայ մեր «խառն ժողովների»-ի մասին: Եւ այդ, կրկնում եմ, շատ հասկանալի է,

⁵²⁾ Տես «Մշակ», 1905 թ., № 161՝ «Ժամանակաւոր կանոններ» և 1907 թ., № 66՝ «Հայոց դպրոցների վիճակը»:

⁵³⁾ Տես վերը՝ ձանօթ. 50:

բանի որ, հակառակ գեպքում, 1874 թւի կանոններն անցած կինէին մեր գպրոցների վարչականին և ուսումնականին [վերը⁵⁴⁾ շեշտածս բացառութեամբ] վերաբերեալ սահմանը, ասել է՝ միշամտած կինէին այդ հարցերին և այդպիսով խախտած կինէին մեր գպրոցական գործի՝ պետական միշամտութիւնից անհաջողութեան սկզբունքը,—մի սկզբունք, որի պաշտպանութեան նաև եւաւ երջանկալիշատակ Գեղրդ Դ. Կաթողիկոսը⁵⁵⁾:

Կարճ:

1874 թւի յուլիսի 19-ի կանոնների վերը յիշածս բայցաւութեան շրջագից զատ՝ մեր հոգեւոր իշխանութիւնը միանդամայն ազատ է և պիտի լինի՝ իր ամեն կարգադրութիւններում՝ և գպրոցներ «հիմնելու և կառավարելու» հարցում, և գպրոցներում «գասաւանդութեան կանոնաւոր և յարմար եղանակ մտցնելու» հարցերում: . . .

Դառնալով «Մշակ»-ի 1907 թւի № 34-ում գետեղւած՝ Ախալցխայից զրած զրութիւնների վերը քաղաքացիութեամբ միան մնում է ասել այդ առթիւ երկու խօսք:

Այդ զրութիւններում շեշտուում է թեմի առաջնորդի պաշտօնական դրութեամբ պարտադիր յայտարարւած «74 թւի կանօնադրութեան»: Ինձ յայտնի են միայն 1874 թւի յուլիսի 19-ի Բարձրագոյն հաստատած կանոնները, մինչդեռ ամենեին յայտնի չի մեր հայութաց յշանաւութեանից հասարաւած «74 թ-ի կա-

⁵⁴⁾ Տես վերը՝ էջ 5—7, 49—50, 51:

⁵⁵⁾ Տես վերը՝ էջ 5—8:

Նուագունը՝ թիւնը՝: Թերեւս մեր հոգևոր իշխանութիւնը՝
1874 թւի յուլիսի 19-ի կանոններին կից՝ ունի գոյն
1874 թւի չը «կանօնադրութիւն»-ը ևս: Սական,
նոյն իսկ այդօրինակ «կանօնադրութեան» գոյութեան
գէպքում, ենէ մեր հոգևոր իշխանութիւնը կամե-
նում է այսօդ վերակենդանացնել անցեալի արածադրու-
նիւնները՝ յենւելով 1905 թւի օգոստոսի 1-ի «Ժա-
մանակաւոր կանոններ»-ի տողամիջում իսկ չեղածի
վրա, հարկաւ, այդ ամեն տէնդէնցներն այսօր պիտի
դատուեն և «ցետադէմ» և «անմիտ», և «տղէտ»:
Արդէն ալբում պայմաններին — պարագաներին ողբուժ ընդա-
ռաջ ելնել ժամանակակից զենուն, այլապես՝ պարագա-
նիւնն անխուսափելի է... .

19 $\frac{IV}{15}$ 07 թ.,
Մուկւա:

ՆԿԱՏԱԾ ՎՐԻՊԱԿԱՆԵՐԸ

Էջ.	Մոդ.	Մպւած է.	Ակտի լինի.
10	վեր.	4	Ճարապարհը
27	ները.	1	արտայտւել
59	"	12	ինամատարութեամբ,
87	"	14	պաշտօնականից

Ընթեղադիւնը: Հնորհակալութեամբ կը նդունեմ այս-
աեղ զրածս հարցին կամ զրքոյիս վերաբերեալ՝ նւաս-
տիս ուղղաձ՝ գրաւոր՝ նպաստաւոր և ոչ - նպաստա-
ւոր — կարծիքները: — Կրինակի հնորհակալութեամբ
կը նդունեմ այստեղ զրածս հարցին վերաբերեալ նիւ-
թերը (Ուղարկել Վերադիր Հասրուէ հասցէս — տե՛ս
զրքոյիս շապիկը):

19 $\frac{V}{8}$ 07 թ.,
Մուկւա:

Յ Ա Ն Կ

Էջ.

- ՅԱՌԱՋԱԲԱՆԻ ՓՈԽԱՐԵՆ . . . III—XXII
Ա. Բարձրագոյն ուկաղ կառավարիչ սե-
նատին III—V
Բ. Նորին ՎԵհափառութեան ամենայն
չափոց կալթողիկոսի հեռազիրը և էշ-
միածնի սինողին VI
Գ. 1874 թւի յուլիսի 19-ին Բարձ-
րագոյն հաստատած կանոնները . . . VI—VII
Դ. Ժամանակաւոր կանոններ հայլու-
սաւորչական եկեղեցիների դուքերի կա-
ռավարութեան մասին կովկասեան փո-
խարքայութեան սահմաններում . . . VIII—X
Ե. Շրջաբերական կոնդակ եկեղեցա-
կան կարտածներ վերադարձնելու և դրա-
բոցներ բանալու մասին XI—XIV
Զ. Կանոններ, որոնք վերաբերում են
1903 թ. յուլիսի 12-ի օրէնքի հիման
վրա ոռւս կառավարութեան մատակա-
րարելու նպատակով իր ձեռքն առած
հայ - լուսաւորչական եկեղեցապատկան

կալւածների և գրամավուխների վերա-
դարձման գործողութեան, համաձայն
1905 թւի օդոսառութիւնի 1-ի Բարձրագոյն
հրամանադրին XV—XXII

I. ՆՈՐ ՇԱՀԱՅԻ ՍԿԶԲԻՆ

1905 թւի օդոսառութիւնի 1-ի ուկաղը.—
դպրոցականին վերաբերեալ շեշտար.—
եկեղեցին և դպրոցը՝ ըստ պետական
օրէնքի XI հաստորի I մասի (հրատ.
1896 թ.).—մեր դպրոցների՝ պետական
մարմիններից միանգամայն անկախ օրէ-
ցօրը. — 1873 թւի մաքառումը. —
1836 թւի «Պոլոյշենիք»-ն և 1867
թւի «Ժամանակաւոր կանոններ»-ը.—
ի՞նչ է 1874 թւի յուղիսի 19-ի օ-
րէնքը. — բայցւած ասպարէզը. — ան-
ցեալի փորձանքներից՝ կրթական հիմ-
նարկութիւնները, աշակերտը, ուսուցի-
չը, հոգաբարձուն, կանոնադրութիւն և
ծրագիր, տեսուչների պաշտօնավարու-
թեան միջին թիւր, ժողովրդի պա-
հանչը դպրոցից, դպրոցը և շրջապա-
տը, մնողը, ճանապարհը. — ժողովրդա-
կան դպրոցի իդէալը. — հաստատ և
անշտապ բայցւու անհրաժեշտութիւ-
նը. — մանկավարժութիւնը մասնադի-
տութիւն է 3—19

II. ԺԱՄԱՆԱԿԱԽՈՐ ԿԱՆՈՆՆԵՐ ՀԱՅ-
ԼՈՒՍՈՒԽՈՐՉԱԿԱՆ ԵԿԵՂԵՑԻՆԵՐԻ ԳՈՅ-
ՔԵՐԻ ԿԱՌԱՎԱՐՈՒԹԵԱՆ ՄԱՍԻՆ ԿՈՎ-

ԿԱՍԵԱՆ ՓՈԽԱՐՔԱՅՈՒԹԵԱՆ ՄԱՀ-
ՄԱՆՆԵՐՈՒՄ 20—70

Ա. Եկեղեցիների գոյքերի հարցը.—պետա-
կան օրէնքի XI հաստորի I մասը (հրատ.
1896 թ.) և «Ժամանակաւոր կանոն-
ներ»-ը՝ երկշիռիսր, ծխական հոգա-
բարձութիւնը, առաջնորդը, տարեկան
եկեղեցին նախահաշիւր և հաշիւր,
ստեղծւած պատուար.—«Ժամանակաւոր
կանոններ»-ի նորութիւնները և ցայտ
եղածի փոփոխութիւնները. — «պար-
տադիր տուրք»-ը՝ ըստ պետական օրէն-
քի XI հատ. I մասի (հրատ. 1896 թ.)
և ըստ «Ժամանակաւոր կանոններ»-ի
—տարբերութիւնը, քօղարկւած «կա-
մաւոր» տուրքը, օրինական պատաս-
խանատութիւնը, բայցւելիք հեռան-
կարները 20—33

Բ. Թեմական հոգեւոր դպրանոցների գոյքե-
րի հարցը.—«Մշակ»-ի «Ժամանակաւոր
կանոններ» առաջնորդողը՝ իբր մի շատ
խոշոր թիւրիմացութիւն՝ մեր թեմա-
կան հոգեւոր դպրանոցների նկատմամբ.
—ազգիս վեհը՝ իբր պետ դպրոցներիս.—
կալւածական և վարչական հոգաբար-
ձութիւնները՝ իբր դպրոցական զատ-
գատ գործոններ. — կալւածական հոգա-
բարձութեան կատարելիքը.—ամենայն
չափոց վեհափառ չայրապետի պաշտօ-
նական ուրոյն դիրքը.—1874 թւի յու-
ղիսի 19-ի կանոնների շեշտած անկա-
խութիւնը.—«Ժամանակաւոր կանոն-
ներ»-ի Ա. կէտի՝ եկեղեցական-ծխական

- գպրոցներին վերաբերեալ շեշտը և
«Մշակ»-ի «Ժամանակաւոր կանոններ»
առաջնորդողն ու «Հայոց գպրոցների
վիճակը» խմբագրականը՝ աղջիս Վե-
հի շրջաբերական կոնդակը, Ա. Կենդ-
րունական ժողովի քննած «Նախագիծը»,
Կովկասի Փոխարքայի միջամտելր. —
1874 թւի յուլիսի 19-ի կանոնների
տեխար, սրա բացառիկ շեշտերը, պե-
տական իշխանութեան՝ մեր գպրոցա-
կան գործին միջամտելու միակ ա-
ռահմազենակեար. — «Մշակ»-ը՝ իրը
«օրէնսդէտ»։ — զիշելին զիշւած է։ —
հասարակական օրգանի պարտաւորու-
թիւնները. — «Ժամանակաւոր կանոն-
ներ»-ի Բ. կէտի զատ-զատ §§-ները . . . 34—65
- Գ. Վանքերի գոյքերի հարցը. — մեր վանքե-
րի դրամական և բարոյական տագնապը
և «վանահայրութեան հարցը»։ — ըս-
պասելիք բարոյական պարտաճանա-
չութեան ցոյցերը. — «Տեղեկագիր Ա.,
Բ., Գ., Դ., 1900 թ. (Ենթակա Ա, Բ,
Վ, Ռ, 1900 թ.)» պաշտօնական տե-
սութեան փաստերը. — մասնագէտների
միջամտութիւն - օգնութիւնը՝ իբր սո-
dicio sine qua non մեր վանքապատ-
կան գոյքերի - կալւածների բարեկարգ-
ման - բարենորոգման՝ ըստ տնտեսու-
թեան և ըստ ցայսօրւայ «վնաս»-ի
վերացման. — ոռնիկաւոր բնարովի
վանահայրերը՝ իբր նախագահներ . . . 65—70
- Ա. Հոգիւած՝ ամբապնդումն աղջիս Վեհի
իրաւունքների և ժողովրդի - եկեղեցու-
գպրոցի միաբանութեան 70

- III. ՄԱՍՆԱԿԻ ՀԱՐՑԵՐ 71—90
- Ա. Թէֆէլիսի Մայնու եկեղեցը 1905 թ-ի
«Եղուրեցելիք» 4-ին կայացած ընդունութան առ-
նելք 73—76
- Բ. Ալաւալյանի եկեղեցական-քիական երիտր-
ությունների հոգաբարձութան ընդունութան առ-
նելք 77—80
- Գ. Արյանի Թէմական Հագետը Դպրանոցի
հոգաբարձութան ընդունութան առ-նելք 81—84
- Դ. «Հայոց Դպրոցների վիճակը» 85—90
- Ընթերցողիս 90
- Վրիպտակներ I
- Ցանկ III—VII



Գիրք ենթարկվել և պատճենահան

19/11-439*

Հայաստանի Ազգային գրադարա



NL0432362

Հայաստանի Ազգային գրադարա



NL0432361

